

ՀՈՂԻ ԲՈՒՅՐԸ

Հայր Սերո Խանգաղյանի

Երեք երաժիշտ, երեք ջերմ ընկեր, երեք անբախտ տարագիր թողել են հայրենիքը և ընկել են աշխարհեաշխարհ՝ իրենց երգով մի պատառ հաց վաստակելու: Նրանցից ավագն արդեն գառան է ու կույր: Սյուս երկուսը դեռ երիտասարդ են, բայց հայրենիքի կարոտից մաշվել, ծերացել են:

Գրեթե ամեն օր նրանք նվագում և երգում են օտարների համար, որ մի կում գինի ու մի պատառ հաց ստանան:

Մի օր այդ երկրի թագավորը լսում է նվագածուների եռյակի մասին: Նա երաժիշտներին հրավիրում է իր ապարանքը, որ ապրեն այնտեղ և մշտապես ուրախացնեն իրեն և իր կոչնականներին:

Ամենայն բարեխղճությամբ երաժիշտները կատարում են իրենց գործը, բայց նրանց նվագի և երգի մեջ ուրախություն քիչ կա: Ինչ նվագում են կամ երգում, թախծոտ է ու տրտում: Ինչ խոսում են, հիշում են հեռուներում թողած հայրենին:

Մի օր բարկանում է թագավորը, երաժիշտներին հրամայում է անհապաղ հեռանալ իր երկրից:

— Եթե մինչև արևի ծագելը դուրս չգաք իմ երկրի սահմաններից, ապա ես գլխատել կտամ երեքիդ էլ,— սպառնում է անեղ թագավորը:

Խավարչտին գիշեր է: Երեք երաժիշտները ճեպով հեծնում են իրենց ձիերը ու սլանում դեպի հայրենի երկիր: Սլանում են երեք նվագածուները՝ փորձելով սրտով գտնել դեպի տուն տանող ճանապարհը: Ձիերը հևում են սանձակոծ վազքից: Գիշերն սկսում է սպառվել, մոտ է արշալույսը: Փախչողների սրտում ահագնանում է վախը:

Կույր երաժիշտը հոտոտում է օդը: Աչքերի կույր մթությանը շոշափում է երկինքը. չէն հասել արդյոք իրենց հողին, իրենց աշխարհին:

Առավել տագնապում են երաժիշտները, երբ լսում են ցայգահավի կանչը: Ուր որ է լույսը կրացվի, ու դաժան թագավորի մարդիկ կրոնեն իրենց:

Ահա աղոթարանը շառագունում է. մշուշի մեջ ուրվագծվում են անողորմ թագավորի զինվորները:

— Մահն է մոտենում մեզ,— աղաղակում են երիտասարդ երաժիշտները:

Կույր երաժիշտը կտրուկ ձգում է ձիու սանձը:

— Զավակներս, մեր երկրի օդն են շնչում հիմա ես: Հասել ենք, հասել ենք մեր աշխարհը:

— Ո՛չ, վարպետ, մենք չենք հասել մեր հողին: Մեր երկիրը հեռու է, մեր մահը՝ մոտ,— աղիողորմ ձայնում են մյուս երկուսը:

— Կանգնեցե՛ք,— գոչում է կոյր երաժիշտը,— մի բուռ հո՛ղ տվեք ինձ:

Ջահել երաժիշտները նրան մի բուռ հո՛ղ են տալիս: Կոյրը հոտոտում է հողը և ցնծությամբ ավետում:

— Սա մեր հողն է, մեր հողի բույրը: Մի՛ վախենա՛ք, զավակներս, մենք արդեն մեր աշխարհում ենք:

Երիտասարդ երաժիշտները հետ են նայում, տեսնում՝ թագավորի զինվորները կանգ են առել ու նայում են իրենց: Նրանք այլևս չեն համարձակվում առաջ գալ:

Երաժիշտները երկարատև դեգերումներից հետո հասել են իրենց աշխարհը: Նրանք փրկված են:

ՊԼԱՆ

1. Տարագիր երաժիշտները:
2. Թագավորի հրավերը:
3. Թագավորի զայրույթը:
4. Փախուստ օտար ու անողոր թագավորից:
5. Կոյր երաժշտի ավերիսը:
6. Փրկություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

անբախտ տարագիրներ, աշխարհեաշխարհ, մի պատահ հաց, զառամ ու կոյր, նվագաձոնների եռյակ, թախձոտ, տրտում, անհապաղ հեռանալ, աչքերի կոյր մթություն, ցայգահավի կանչ, արդթարան, շառագունել, ուրվագծվել, ցնծությամբ ավետել, երկարատև դեգերումներ:

ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՎ

Ըստ Փավստոս Բուզանդի

Չորրորդ դարում երեսունչորս տարի մեր հայոց աշխարհը պատերազմ մղեց պարսից թագավորի դեմ: Եվ հայերը, և՛ պարսիկները անչափ հոգնել էին երկարատև կռիվներից: Շատ հայ նախարարներ ըմբոստացել էին Արշակ թագավորի դեմ և հրաժարվել կռվին մասնակցելուց:

Պարսից Շապուհ թագավորը մեծ ընծաներով, հրովարտակներով, աղաչանք-պաղատանքով Արշակ արքային խնդրեց գնալ Պարսկաստան՝ սեր և խաղաղություն հաստատելու: Արշակը չէր ուզում գնալ Շապուհի կոչին: Բայց հայ իշխանները ստիպեցին նրան ընդունել պարսից թագավորի սիրալիր հրավերը:

Արշակը ճամփա ընկավ: Նրան ուղեկցում էին հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը, թագավորի դայակը և այլ մեծամեծներ:

Շապուհը դրժեց իր ուխտը և Արշակին ընդունեց իբրև իր ծառայի: Նա նախատեց ու հանդիմանեց Արշակին, իսկ սա էլ իրեն հանցավոր և մահապարտ ճանաչեց արքայի առաջ:

Ընտո Շապուհ թագավորը խորհրդի կանչեց իր աստղահմաններին ու աստղագուշակներին:

— Ես շատ անգամ կամեցա սիրել հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Եթե ես գիտենայի, թե նա այսուիետև ինձ հնազանդ կլինի, ապա մեծարանքներով նրան իր աշխարհը կուղարկեի: Բայց ես վստահ չեմ նրա այժմյան հնազանդության ցույցերին և չգիտեմ՝ ինչպես փորձեմ նրան:

— Աստղագուշակները մտածեցին, մտածեցին և Շապուի արքային մի հնար սովորեցրին:

Շապուիը իր մարդկանց ուղարկեց Հայաստան, պահանջեց այնտեղից հող ու ջուր բերել: Երբ կատարվեց արքայի պահանջը, նա իր սրահի հատակի կեսի վրա հայոց հող լցրեց, վրան ջուր ցանեց: Ապա կանչեց Արշակ արքային, բռնեց նրա թևը, և երկուսով գրուցելով ձեռնում էին սրահում: Քանի դեռ պարսկական հողի վրա էին, Արշակն ասում էր.

— Ես մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, և սուր առա քո դեմ:

Իսկ երբ գալիս էին հայոց հողի վրա, Արշակը ամբարտավան ու գոռոզ կերպարանք էր ընդունում և սկսում էր հոխորտալ ու նախատել Շապուիին:

— Հեռու ինձնից, չարագործ ծառա, ես չեմ ների քեզ իմ նախնիների վրեժը:

Եվ այսպես շարունակ: Պարսկական հողի վրա Արշակը խեղձանում, մեղա էր գալիս, իսկ հայոց հողի վրա ըմբոստանում էր ու սպառնում Շապուիին:

Այդ նույն օրվա երեկոյան՝ ընթրիքի ժամանակ, պարսից թագավորն Արշակին նստեցրեց բոլոր կոչնականներից ներքև, նրա գահույքի տակ էլ հայոց հող լցրեց, վրան ջուր ցանեց:

Երբ բերեցին Արշակին, բազմեցրին իր տեղում, նա մի պահ ուռած-փքված նստեց, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուիին.

— Իմն է այդ տեղը, որտեղ դու ես բազմել: Երբ ես իմ երկիրը հասնեմ, քեզ-նից խստագույնս վրեժխնդիր կլինեմ:

Շապուիը հրամայեց անմիջապես շղթայել Արշակին, տանել Անհուշ բերդը և ցմահ պահել այնտեղ:

ՊԼԱՆ

1. Պարբերազմ երեսունչորս փարի անընդմեջ:
2. Պարսից Շապուի արքայի հրավերը:
3. Աստղագիտության խորհուրդը:
4. Հող և ջուր հայոց երկրից:
5. Հայրենի հողի ուժը:
6. Կալանում Անհուշ բերդում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրատարխարակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ըմբոստանալ, հրովարտակ, աղաչանք-պաղատանք, ուխտը դրժել, իրեն հանցավոր և մահապարտ ծանաչել, աստղահմա, հնազանդության ցույց, ձեմել, ամբարտավան ու գոռոզ կերպարանք, հոխորտալ, գահույք, ուռած-փքված, խստագույնս վրեժխնդիր լինել:

ԱՐՇԱԿ ԵՎ ԴՐԱՍՏԱՄԱՏ

Հայր Փափապոս Բուզանդի

Պարսկաստանի Շապուհ թագավորը հայոց Արշակ արքային խաբեությանը կանչել էր իր մայրաքաղաքը և ձերբակալել Անհուշ բերդում: Մեր արքայի հետ գերել էր նաև շատ հայ նախարարների, որոնց պահում էր իր պալատում և հարկ եղած դեպքում ուղարկում էր թշնամիների դեմ կռվելու: Այդ նախարարների կազմում էր նաև արքունի գանձերի պահապան Դրաստամատ Հայր Մարդպետը:

Մի անգամ քուշանների դեմ մղված կռվում պարսից Շապուհ թագավորը շրջապատվեց թշնամու զինվորներով: Մահ կամ գերություն. այդպես անփառունակ կարող էր գտնել իր վախճանը չար Շապուհը, եթե այդ պահին վրա չհասներ կտրիժ Դրաստամատը: Նա առյուծի պես վրա ընկավ և կոտորեց Շապուհին շրջապատող քուշաններից շատերին, մյուսներին էլ փախուստի մատնեց: Հայ նախարարի մեծահոգությունն ու քաջությունը ցնցեցին Շապուհին:

— Խնդրիր, քաջ, ինչ որ կամենաս՝ ի հատուցումն քո հերոսության:

Այդ ժամանակ Դրաստամատը խոր հառաչեց, ոչինչ չասաց ու սկսեց մտորել:

— Մի երկմտիր, քաջագուն, կստանաս՝ ինչ խնդրես, ահա քեզ իմ արքայական երդումը:

— Տե՛ր արքա, ինձ ոչինչ պետք չէ՝ ո՛չ գանձ, ո՛չ հարստություն, ո՛չ կալվածքներ: Թո՛ւյլ տուր այցելեմ հայոց Արշակ թագավորին՝ իմ իսկական տիրոջը:

Շապուհը խոժոռեց ձակատը:

— Դժվար բան խնդրեցիր: Քանի դեռ պարսից թագավորությունը կանգուն է, չի եղել մի մարդ, որ համարձակված լինի թագավորին հիշեցնել Անհուշ բերդում ցմահ բանտարկվածների մասին: Բայց քանի որ մեծ է քո ծառայությունն իմ հանդեպ, թող կատարվի ցանկությունդ:

Շապուհը Դրաստամատին տվեց մի թիկնապահ ու հրովարտակ՝ արքունական մատանիով կնքված: Դրաստամատն անմիջապես մեկնեց Խուժիստան, ուր գտնվում էր Անհուշ բերդը:

Քաջ նախարարին շատ վշտացրեց իր արքայի ծանր վիճակը: Նա անմիջապես արձակել տվեց երկաթե կապանքները, ազատեց ձեռնակապերից ու ոտնակապերից, նրան լողացրեց, ազնիվ զգեստներ հագցրեց, օծեց անուշաբույր յուղերով: Այա թագավորավայել ընթրիք պատրաստել տվեց, բազմեցրեց Արշակին և սկսեց նրան մատուցել գինի, մատուցել տեսակ-տեսակ խորտիկներ: Իր թագավորին ուրախացնելու համար կանչել էր նաև նվագածուներ, որոնք հայկական մեղեդիներով փորձում էին ամոքել արքայի վիշտը:

Ընթրիքի վերջում Դրաստամատը աղանդեր մատուցեց՝ միրգ ու ամիճ: Տվեց նաև մի դանակ, որ կտրի և ուտի ամիճը: Արշակն արդեն բավականին գինի էր խմել և մի քիչ գինով էր: Նա հանկարծ վեր թռավ տեղից և սկսեց սրտամորմոք ձայնով ողբալ իր վիճակը.

— Վայ ինձ՝ Արշակիս, որտեղից ուր ընկա, ինչ օրի հասա:

Եվ մինչ Դրաստամատն արցունքից մշուշված աչքերով նայում էր իր արքային, վերջինս ամիճ կտրելու դանակը խրեց իր սիրտը: Հայոց արքան մահացավ հենց նստած տեղում՝ ընթրիքի սեղանի մոտ՝ տիրասեր նախարարի սարսափահար հայացքի առաջ:

Դրաստամատը հուսահատ մի ձիչ արձակեց, վրա ընկավ, դանակը քաշեց հանեց Արշակի կրծքից և խրեց իր կողը:

Այդպես հայոց արքան ու Դրաստամատ նախարարը իրենց ողբերգական վախճանը գտան հայրենի հողից հեռու՝ Անհուշ բերդում:

ՊԼԱՆ

1. Պարսկաստանում գերված հայ նախարարները:
2. Կռիվ քուշանների դեմ:
3. Շապուհ արքայի գլխին կախված վրանգը:
4. Փրկություն Դրաստամատի ձեռքով:
5. Շապուհի երախտագիրությունը:
6. Դրաստամատի խնդրանքը:
7. Անհուշ բերդում բանտարկված Արշակ արքան:
8. Ուրախ ընթրիք:
9. Արշակ թագավորի կսկիծը և ինքնասպանությունը:
10. Տիրասեր Դրաստամատ նախարարի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադրախոսական գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ա) արքունի գանձեր, քուշաններ, անփառունակ վախճան, կտրիժ, ի հատուցումս, երկմտել, քաջագուն, ցմահ բանտարկված, հրովարտակ, երկաթե կապանք, ձեռնակապ, ոտնակապ, անուշաբույր յուղ, խորտիկ, նվագածուներ, ամոքել արքայի սիրտը, աղանդեր մատուցել, ամիժ, սրտամորմոք ձայն, հուսահատ ձիչ.

բ) Պարսկաստան, Շապուհ արքա, Անհուշ բերդ, Խուժիստան, Դրաստամատ Հայր Մարդպետ, Արշակ թագավոր:

2. Բացատրել աղանդեր, ամիժ բառերը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Փավստոս Բուզանդը հինգերորդ դարի պատմիչ է: Նրա մասին կենսագրական տեղեկություններ հայտնի չեն: Բուզանդի «Հայոց պատմություն» երկն ամփոփում է Արշակունի թագավորների և քահանայապետների գործունեության հիսնամյա ժամանակաշրջանը (330–387 թթ.):

Պատմիչը հավաստի և վավերական նյութերին զուգահեռ օգտագործում է հեթանոսական զրոյցներ, ավանդավեսներ, երգեր, հրաշապատում տեսիլներ և այլն: «Հայոց պատմությունը» հայ հին գեղարվեստական արձակի նշանավոր երկերից մեկն է:

ԱՄԵՆԱԼԱՎ ԽՈՍՔԸ

Հար Հայկ Խաչատրյանի

Հին ժամանակ Շիրակում երիտասարդ մի իշխան էր ապրում Թաթ անունով:

Նա գեղեցիկ էր, խոսքը՝ տգեղ: Ինչ աղջկա հետ խոսում էր, բան չէր ստացվում:

— Մեր ինչին է պետք նրա գեղեցիկ դեմքը, մի կարգին խոսել չգիտի,— միաբերան ասում էին Շիրակի չմահավան աղջիկները:

Թաթը ճարահատյալ դիմում է իմաստունների օգնությանը:

— Իմ ունեցած ոսկու կեսը՝ ձեզ, միայն թե մեկ ամսում ինձ ճարտասան դարձնեք,— պայման է դնում Թաթը:

— Դա մեր ուժերից վեր է,— փորձում են առարկել իմաստունները:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ոչ մեկը չի կարող մեկ ամսում սովորել այն, ինչ ուրիշները սովորում են ողջ կյանքում:

— Հաստագլուխներ և տխմարներ, ինձ թոթովախո՞ն եք կարծում, ի՞նչ է, ես այնպես կանեմ, որ դուք քնեք աղբանոցում:

Իմաստունները ահից պարտավորվեցին մեկ ամսում պերճախոս դարձնել Թաթին: Բան դուրս չեկավ: Զայրույթից նա գազազեց, սկսեց ճամարտակել ավելի անվարժ և անվայելուչ:

Վերջապես որոշեց գնալ Աստծու մոտ: Շալակն առավ իր ոսկու պարկն ու ճամփա ընկավ: Կեսօրին հասավ մի թզենու, որտեղից ճանապարհը երկատվում էր:

— Էյ, ի՞նչ ես գլուխդ տմբամբացնում, ասա՛ ինձ՝ այս երկու ճամփաներից որ մեկն է տանում Աստծու մոտ:

— Դու մոռացար «բարի օր» մնել, երիտասարդ,— պատասխանեց ծերունին:

— Վերցրո՞ւ այս երկու ոսկին. մեկն իմ չասած բարի օրվա դիմաց է, մյուսն էլ որպես վարձ՝ Աստծու մոտ տանող ճանապարհը ցուցանելու համար:

— Չէ, երիտասարդ, ինձ ոսկի պետք չէ: Դու պետք է կատարես իմ պայմանը:

— Ի՞նչ պայման:

— Մի ամիս կնստես իմ տեղը և անցնող-դարձողի «բարի օր» ողջույնին կպատասխանես «Աստծու բարին» խոսքերով: Բայց պետք է այդ բառերն ասես մեղմ, հանգիստ, սրտանց, այնպիսի ավյունով, որ արձագանքդ ուժ տա հոգնած ճամփորդին ու վիատ անցվորին: Մի ամիս հետո ես կերևամ և կասեմ, թե որն է Աստծու մոտ տանող ճամփան:

Այս ասելով՝ ծերունին անհետացավ:

Թաթը մի ամիս նստեց թզենու մոտ և առավ անցնող-դարձողի բարևը: Երեսներորդ օրը երևաց ծերունին և ասաց.

— Բարի օր, երիտասարդ:

— Աստծու բարին, բարի մարդ,— պատասխանեց Թաթը:

— Դու կարող ես ասել, թե որն է աշխարհի ամենալավ խոսքը:

— Ողջույնին ողջույնով պատասխանելը՝ *Աստծու բարին*—ը: Ես ամբողջ կյանքում դա չեմ մոռանա:

— Դու կատարեցիր պայմանը, բռնիք ձախ ճամփան և գնա՛ Աստծու մոտ. բարին ընդ քեզ,— ասաց ծերունին:

Թաթը շարունակեց ճամփան: Գնաց, գնաց ու դեմ առավ մի բերդաքաղաքի: Այստեղից հետո մի ճանապարհը երեք էր դառնում: Ինչ իմանաս, թե որն է Աստծու մոտ տանում: Նա դիմեց բերդաքաղաքի տիրոջը: Վերջինս ասաց.

— Իսկ դիմացն ինչ կտաս:

— Տասը ոսկի,— պատասխանեց Թաթը:

— Չէ, ոսկին մեր աշխարհում գին չունի: Ես մի պայման ունեմ:

— Ինչ պայման:

— Դու պետք է մի ամիս ծառայես ինձ մոտ:

— Իսկ ինչ պիտի անես:

— Ամեն օր պիտի հանդիպես իմ տիկնոջը և ասես. «Այդ շրջագգեստով դու ավելի հմայիչ ես. անսման են քո խոպոպիկները, դեմքդ էլ ծիծաղախիտ է»:

Թաթն ուտում ու խմում էր և օրվա մեջ մի անգամ հանդիպում բերդաքաղաքի տիրուհուն: Զարմանալի կին էր, ոչ հրապուրիչ էր, ոչ անհրապույր: Երևի բոլոր կանայք էլ այդպես են. հոգու խնդությունից հրապուրիչ են դառնում, տխրությունից՝ անհրապույր:

Թաթը ջերմագին բարևում էր տիրուհուն և ասում.

— Այդ շրջագգեստով դու ավելի հմայիչ ես. անսման են քո խոպոպիկները, դեմքդ էլ ծիծաղախիտ է:

Տիրուհու դեմքը պայծառանում էր, և նա լիաթոք ժպտում էր Թաթին:

Ամսվա վերջին բերդաքաղաքի տերը Թաթին հարցնում է.

— Ո՞րն է աշխարհի ամենագեղեցիկ խոսքը:

— Տղամարդու՝ կնոջն ասած շոյիչ խոսքը, որից կրկնապատկվում է կնոջ հրապույրը, ինչ հանդերձի մեջ էլ նա լինի:

— Դու կատարեցիր պայմանը,— ասում է բերդաքաղաքի տերը, բարի ճանապարհ մաղթում նրան և ցույց տալիս, թե ինչպես պիտի գնա Աստծու մոտ:

Թաթը նորից բռնում է ճամփան: Հասնում է մի բերդի, որի ասպարակիր պահակն ասում է.

— Չէ, ոսկու դիմաց ես քեզ Աստծու մոտ տանող ճանապարհը ցույց չեմ տա:

— Իսկ ինչ ես ուզում:

— Դու պիտի կատարես իմ պայմանը:

— Ինչ պայման:

— Սա հանցագործների խուց է: Այստեղ բանտարկված են բոլոր տեսակի ավազակները: Ինչ հայհոյանք, զագրախոսություն ասես, որ դուրս չի գալիս սրանց բերանից: Մրանց հետ մնալը նույնն է, ինչ մարդ ամբողջ կյանքն ապրի արտաքնոցում: Մի ամսով ես քեզ կզցեմ սրանց մեջ: Դու պիտի կարողանաս ոչ մի հայհոյանք չտալ, կոշտ ու կոպիտ ոչ մի խոսք չասել:

Թաթը համաձայնվում է և կամովին մտնում խուց: Մտնում է թե չէ, բանտարկյալները սկսում են հայհոյել ու լուտանք թափել նրա գլխին:

Թաթը չլսելու է տալիս և ասում.

— Բարի օր ձեզ, մարդիկ:

Բոլորն արձագանքում են անսասն ինքնուրույն, անպարկեշտ ծամածռություններով: Ամբողջ մի ամիս բանտարկյալները անպատրվակ կոպտում ու վիրավորում են Թաթին, այլազան հիշոցներ թափում նրա գլխին: Թաթը համբերում է և ոչ որի ոչ մի հայհոյանք չի տալիս: Ամսվա վերջում պահակը բացում է խցի դուռը, Թաթին դուրս հրավիրում և հարցնում.

— Ինչ հասկացար այս մեկ ամսում:

— Որ հայիոյանքով և անտաշ խոսքով մարդը անասունից էլ վատ է:

— Քայլենք, հիմա ես քեզ ցոյց կտամ, թե որն է Աստծու մոտ տանող ճամփան,— ասում է պահակը:

— Չէ, ես տուն պետք է վերադառնամ, որովհետև Աստծուն այլևս ասելիք չունեմ:

ՊԼԱՆ

1. Երիտասարդ Թաթը. նրա արարող:

2. Թաթի դիմումը իմաստուններին:

3. Աստծու մոտ գնալու որոշումը:

4. Ճամփաբաժանում հանդիպած ծերունին և նրա պայմանը:

5. Բերդաքաղաքի փերը և նրա պայմանը:

6. Ավազակների խցի պահակը և նրա պայմանը:

7. Վերադարձ հայրենիք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասարանին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

չմահավան աղջիկ, ճարահատյալ, ճարտասան, թոթովախոս, ճամարտակել, վիատ անցվոր, ծիծաղախիտ դեմք, լիաթոք ժպիտ, տղամարդու շոյիչ խոսք, հանդերձ, հանցագործների խուց, հայիոյանք, զագրախոսություն, լուտանք, անսանձ հռիռոց, անպարկեշտ ծամաձողություն:

ԱՄԵՆԱԳԵՏ ՄԱՐԴԸ

Հար Վարդան Այգեկցու

Մի թագավոր կամեցավ բարձրաբերձ աշտարակ շինել, որ կանգնի այնտեղ և դիտի իր տերության մեջ կատարվող գործերը:

Հավաքվեցին վարպետներ ու բանվորներ, չափ ու ձև արեցին, գծեցին, հետո էլ հիմք փորեցին ու սկսեցին շարել պատերը: Ցերեկը պատերը շարում էին, բայց գիշերը դրանք փլվում էին:

Թագավորը կանչեց իր երկրի իմաստուններին և հարցրեց պատերի փուլ գալու պատճառը:

— Պիտի գտնես մի շատ տղետ ու հիմար մարդ, թագավորն ապրած կենա, նրան կենդանի պիտի դնեն այդ պատի մեջ և շարեն: Պատն այլևս չի փլվի,— ասացին իմաստունները:

Թագավորը մարդիկ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը, որ գտնեն—բերեն մի հիմար մարդու:

Իսկ գիտուններն էլ սկսեցին մտածել, թե ո՞վ կարող է լինել ամենահիմարը:

— Ձկնորսից տղետ չկա. նրա գործը ձկան և ջրի հետ է,— ասաց մեկը:

— Կարծում եմ՝ իշապանը ավելի հիմար է. ամառ—ձմեռ էշի հետ է շրջում,— առարկեց երկրորդը:

Մի երրորդ գիտուն էլ ասաց, որ թագավորը մի հովիվ ունի, որ երբեք գյուղ ու քաղաք չի տեսել, ծնվել ու մեծացել է սարում, մշտապես ոչխարի մեջ է ապրել, այն նա է խելապակասը: Ուրախացան, որ գտան հիմարին: Մի քանի մարդ ելավ գնաց հովվի մոտ:

— Մեր ողորմած թագավորը կանչում է քեզ, հովիվ,— ասացին նրան:

Հովիվը ոչխար մորթեց, պանիր ու մածուն բերեց և սրտանց հյուրասիրեց իր մոտ եկած մարդկանց: Հովվի սրտաբացությունից ազդված պալատականները բացեցին գաղտնիքը և ասացին, թե ինչու է թագավորը կանչում նրան:

Հովիվը քահ-քահ ծիծաղեց և ասաց.

— Տգետը այն գիտուններն են, որ իմ տեղն են ցույց տվել:

Հետո դուրս եկավ, բերեց մի մաքի և ասաց.

— Այս մաքին շուտով գառ պիտի ունենա: Այդ գառը էգ է, գլուխը սպիտակ է, մարմինը՝ սև:

Այս ասելով՝ նա մորթեց ոչխարը, և ապշած դրանիկները տեսան, որ նրա ասածը ճիշտ էր:

— Ձեր գիտունները կարող էին այսքան բան իմանալ,— հարցրեց հովիվը:

— Ո՛չ,— պատասխանեցին պալատականները:

Այդ ժամանակ հովիվը նրանց սովորեցրեց, թե ինչպես գտնեն այդ տերության ամենահիմար մարդուն:

Հաջորդ օրը թագավորը կանչեց իր գլխավոր նախարարին, նրա ողջ ունեցվածքը բռնագրավեց, հրապարակավ գանահարել տվեց և հրամայեց կախել:

Ապա երեք օր հետո մունետիկները շրջեցին քաղաքում և հայտարարեցին, թե ով ուզում է դառնալ թագավորի գլխավոր նախարար, թող ցանկություն հայտնի, և թագավորը նախկին նախարարից մնացած ինչքն ու պաշտոնը նրան կտա:

Եվ ահա առաջ եկավ մեկը, որ տեսնելով հանդերձ նախորդ նախարարի գլխին եկածը՝ կամեցավ բռնել նրա տեղը:

— Ահա և քո տերության ամենահիմար մարդը, թագավոր, նրան դիր աշտարակի պատի մեջ,— ասաց հովիվը:

Թագավորը այդպես էլ վարվեց, և աշտարակի պատերը ամուր ու հաստատուն վեր բարձրացան:

ՊԼԱՆ

1. Աշտարակը. փլվող պատեր:

2. Գիտունների առաջարկը:

3. Հիմար մարդու փնտրություն:

4. Իմաստուն հովիվը:

5. Գլխավոր նախարարի գլխին եկած փորձանքը:

6. Ամենահիմար մարդը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Գրապահարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բարձրաբերձ աշտարակ, գտնել-բերել, ամառ-ձմեռ, խելապակաս, սրտանց հյուրասիրել, սրտաբացություն, քահ-քահ ծիծաղել, դրանիկ, ունեցվածքը բռնագրավել, հրապարակավ գանահարել, մունետիկ, ինչք:

2. *Բացատրել մունետիկ, դրանիկ, գանահարել բառերը:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Վարդան Այգեկցին ծնվել է Ասորիքի Տլուք գավառի Մարաթա գյուղում: Կրթություն ստացել է Կիլիկիայի Արքակառին վանքում: Եղել է վարդապետ և քարոզիչ, հաստատվել և ապրել է Այգեկում 1270 թվականին: Այգեկցու առակները ծաղրում են մարդկային արարները և թերությունները, խարազանում են ազահությունը, չարությունը, մեծամտությունը, նախանձը: Այգեկցու առակները հեղափոխում մշակել են Խաչատուր Աբովյանը («Պարապ վախտի խաղալիք»), Հովհաննես Թումանյանը («Մի կաթիլ մեղրը», «Անբուն կլուն»), Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Աթաբեկ Խնկոյանը և այլք:

ԵՐԵՔ ԽՐԱՏ

Ըստ Ռուբեն Զարդարյանի

Մի օր իմաստուն և բարերար Խիկարի մոտ հյուր եկավ: Իրիկվա դեմ տեղ հասավ ու իր էշով իմաստունի տան դարպասով ներս մտավ:

Ծառաները էջը ախոռ տարան, իսկ հյուրին, որի անունը Ամիր էր, տարան Խիկարի մոտ: Ամիրին կերակրեցին, թույլ տվեցին, որ հանգստանա, երկար ճանապարհի հոգնությունը թոթափի:

Այդ գիշեր Խիկարը հրավիրված էր թագավորի պալատը՝ խնջույքի: Երկմտանքի մեջ ընկավ Խիկարը: Ինչ անի: Եթե հյուրին թողնի ու գնա, նրան վիրավորած կլինի: Շատ խորհեց իմաստունը, վերջը որոշեց Ամիր հյուրին իր հետ պալատ տանել:

— Միրելի՛ հյուր, այսօր միասին գնալու ենք թագավորի պալատը՝ խնջույքի: Գիտեմ, որ մեծամեծների հետ սեղան չես նստել: Բայց ոչինչ, մի ամաչիր, մի քաշվիր: Միայն հիշիր և արիությամբ՝ հետևիր իմ տված երեք խրատին:

Խրատ առաջին. տեղդ ճանաչիր, վերը մի՛ նստիր, որ հետզհետե վար չիջնես: Խրատ երկրորդ. ուրիշի խոսակցությանը մի՛ միջամտիր, մեջ մի՛ ընկնիր, խոսիր, երբ քեզ հարց տան, բայց տասը լսիր, մեկ պատասխանիր:

Խրատ երրորդ. մինչև քեզնից որևէ բան չխնդրեն, մեջ չընկնես և չտաս:

— Շատ շնորհակալ եմ, իմաստուն Խիկար, կհետևեմ քո խրատներին, — ասաց հյուրը:

Գնացին պալատ: Ամիրը Խիկարից չէր հեռանում: Թագավորը իմաստունին հրավիրեց բազմելու իր կողքին: Ամիրը չսպասեց հրավերի, անմիջապես տեղ գրավեց Խիկարի կողքին: Շուտով այլ մեծամեծներ ու իշխաններ եկան և Ամիրին տեղից հանելով՝ իջեցրին մինչև դռան մոտ:

Խիկարը մտքում քմծիծաղ տվեց. «Հյուրս չհետևեց իմ առաջին խրատին»:

Խնջույքը տաքացավ. կենդանացան երգ ու խոսակցություն: Խեղճ Ամիրի գլուխը պտտվում էր թունդ գինուց և համադամ խորտիկներից: Գինի էր խմել, կատարը տաքացրել ու կողքին նստածներին պատմում էր իր քաջագործությունները: Թե ինչպես առյուծի երախն էր պատռել, թե ինչպես ձի էր գողացել, թե ինչպես կնոջն էր ծեծել: Եվ վերջապես պատմում էր, թե ինչպիսի անսնման գինիներ է խմել իր ողջ կյանքում, թե որքան խեղճ է թագավորի սեղանը իր տեսածների համեմատ:

Կողքին նստածները ճանճրանում էին ու կշտամբանքով Խիկարի երեսին էին նայում: Բայց Ամիրը ոչինչ չէր տեսնում, ձայնն ավելի էր բարձրացնում, չէր թողնում, որ մեկը բերան բացի, մեջ էր ընկնում և ընդհատում էր հյուրերին:

«Ավանդ, երկրորդ խրատս էլ հովը տարավ առաջինի պես», — մտածում էր իմաստուն Խիկարը:

Ուրախությունը մոտենում էր վախճանին: Ներս բերին վերջին խորտիկը: Սա թագավորի կտրիճ որսորդի սպանած եղնիկն էր, որ խոհարարը խորովել էր թոնրի մեջ, դրել մեծ սկուտեղի վրա ու շուրջը փլավ լցրել: Մատակարարը սկուտեղը բերեց և դրեց երիտասարդ որսորդի առջև: Ըստ ընդունված սովորույթի՝ նա ինքը պետք է կտրեր և մատուցեր եղնիկի միսը:

— Դանակ տուր, դանակը մոռացել ես, — ձայնեց որսորդը մատակարարի հետևից:

Եվ մինչ մատակարարը կրերեր դանակը, Ամիրը տեղից վեր թռավ և գոտուց կախված ոսկրե կոթով դաշույնը գիրթ շարժումով հանեց ու խրեց եղնիկի փորը:

«Հեյ վախ, վերջին խրատս էլ ջուրն ընկավ», — մտքում մղկտաց Խիկար իմաստունը:

Այդ պահին թագավորն այլևս չդիմացավ և ծառաներին հրամայեց այդ չտեսնու անհամ մարդուն զնդան տանել:

ՊԼԱՆ

- | | |
|-------------------------------------|--------------------------------|
| 1. Իմաստուն Խիկարի հյորը: | 5. Երկրորդ խրատի անպետում: |
| 2. Հրավերք թագավորի պալատում: | 6. Կտրիճ որսորդի բերած եղնիկը: |
| 3. Խիկար իմաստունի տված երեք խրատը: | 7. Երրորդ խրատի անպետում: |
| 4. Առաջին խրատի անպետում: | 8. Թագավորի պատիժը: |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապահպարակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

թոթափել ճանապարհի հոգնությունը, երկմտանքի մեջ ընկնել, մեծամեծներ, երգ ու խոսակցություն կենդանանալ, թունդ գինի, համադամ խորտիկներ, կատարը տաքացնել, կշտամբանք, ընդհատել, հովը տանել, սկուտեղ, մատակարար, ոսկրե կոթով դաշույն, գիրթ շարժումով հանել, ջուրն ընկնել, մղկտալ, զնդան տանել:

2. Աշակերտներին առաջարկել այս պատմության համար գրնել նոր ավարտ:

ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ: Ռուբեն Չարդարյանը (1874–1915) արևմտահայ գրող, հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ է, Մեծ եղեռնի զոհերից: Ծնվել է Արևմտյան Հայաստանի Սևերեկ գավառում: Ապա տեղափոխվել է Խարբերդ, այստեղ էլ սրացել է իր կրթությունը: Մեզրե քաղաքի ազգային կենտրոնական վարժարանում աշխատել է որպես ուսուցիչ:

Սրբեղծագործել է փարբեր ժանրերով՝ չափածո և արձակ բանաստեղծություններ, վիպակ, նորավեպ, լեգենդ, հեքիաթ:

Հար Վիլյամ Սարոյանի

Մեր տան դիմաց ապրում էր Տիգրան անունով մի ծերունի: Ութսունն անց էր և գրեթե կույր:

Ծերունին մի տնակ ուներ, որը ներսից շատ մաքուր ու կոկիկ էր, իսկ դրսից սովորական էր: Բայց տնակը շրջապատում էր աշխարհի լավագույն պարտեզը: Բուրավի, սև, տամուկ հողում աճում էին ծառեր ու թփեր. Տիգրանի հոգատարության շնորհիվ այգին փթթում էր ու իր գիրկը կանչում թևավորներին: Երկնքում թևող բոլոր արարածները սիրում էին մեր խղճուկ շրջակայքի այդ դրախտային անկյունը: Տիգրանն էլ սրանց էր սիրում:

Զմռան մի ցուրտ օր, երբ վերադառնում էի դպրոցից, տեսա մեր փողոցի մեջտեղում կանգնած Տիգրանին, որն իր ձեռքի ափի մեջ ինչ-որ բան էր պահում: Ծերուկը հայացքը մեկ դարձնում էր իր ծառերին ու երկնքին, մեկ կրկին իր ձեռքի ափին:

Հետո մոտեցավ ինձ, բացեց ափը և հարցրեց.

— Ափիս միջինն ինչ է:

— Կուլիբրի է,— պատասխանեցի:

— Ինչ բան է:

— Դու գիտես դրանց: Ամռանն են հայտնվում, անշարժ կախվում են օդում ու հետո մեկ էլ սլանում գնում են: Թևերը արագ-արագ թափահարում են: Դրանցից մեկն է ձեռքումդ. մեռնում է:

Սրտաձմիկ տեսարան էր: Ամառվա չքնաղ պստիկ էակը՝ ծեր գեղջուկի մեծ ու կոշտացած ձեռքում: Զմռան այս ցրտին մեռնում էր ամռան ամենակենսախիսնդ էակը:

— Հետս եկ,— ասաց ծերունին ինձ:— Դիմացիր, սիրունիկ թավոանս, դիմացիր, շուտով ամառը կգա,— սա արդեն թռչնակին էր ասում:

Մենք մտանք նրա փոքրիկ տան խոհանոցը, ու մինչ իր տաք շնչով ջերմացնում էր պստիկին, ինձ ասում էր, թե ինչ պիտի անեն:

— Գազօջախի վրա ճաշի մի գդալ մեղր տաքացրո՛ւ ու լցրո՛ւ ափիս մեջ, բայց տեն, որ շատ տաք չլինի:

Ամեն ինչ արեցի ծերունու ասածով: Քիչ հետո կուլիբրին սկսեց կենդանության նշաններ ցույց տալ. սենյակի ջերմությունը, տաք մեղրի գուլորշին և ծերունու սերն ու գորովը իրենցն արեցին: Շուտով ծերուկն իր ափի մեջ փոփոխություն զգաց, իսկ մեկ-երկու րոպե անց թռչնակն սկսեց կտցել մեղրը:

— Սա կապրի,— հայտարարեց ծերունին:

Ծերուկը խանդաղատանքով լայն բացեց ափը: Սքանչելի էր նոր կյանք առած փոքրիկ թռչունը. նա ճախրում էր նեղլիկ խոհանոցում, մոտենում էր պատուհանին, վերադառնում էր կրակի մոտ, կախվում օդում, ողջ կյանքում երբեք իրեն այդքան լավ չէր զգացել:

Ծերունին նստեց աթոռին: Նա լսողությունը լարել և ջանում էր տեսնել թռչնակին, բայց ոչինչ չէր տեսնում: Ինձ էր հարցուփորձ անում՝ ինչպես է, չի թուլացել, լավ է զգում իրեն: Ես մանրամասն նկարագրում էի ամեն ինչ:

— Բանց պատուհանը,— ասաց ծերունին:

— Կապրի,— հարցրի ես:

— Հիմա ապրում է ու թռչել է ուզում,— ասաց նա:— Բայց պատուհանը:
Ես բացեցի պատուհանը, կոլիբրին կախվեց բաց պատուհանի առջև, հետո դուրս թռավ:

Մենք մի երկու բոպե խոսեցինք, ու ես տուն գնացի:

Դրանից հետո ծերուկը միշտ պնդում էր, թե ձմռանը կոլիբրին ողջ է մնացել, բայց ես հավատացած չէի:

Նորից ամառ եկավ, նորից կոլիբրի թռչուններ տեսա, բայց անհնար էր իրա-
րից զանազանել: Մի օր հարցրի ծերունուն թռչնակի մասին:

— Շնորհդ նայիր: Կոլիբրի տեսնում ես:

— Շատ,— բացականչեցի ես:

— Դրանցից ամեն մեկը մեր թռչնակն է,— ասաց ծերուկը մեղմաձայն,—
դրանցից ամեն մեկը, ամեն մեկը:

ՊԼԱՆ

1. Կոյր ծերունին:

2. Փթթող պարտեզը:

3. Ձմռան մի ցուրտ օր:

4. Մեռնող կոլիբրին:

5. Խնամք:

6. Վերակենդանացած թռչնակը:

7. Նորից ամառ:

8. «Դրանցից ամեն մեկը մեր թռչնակն է»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպուսակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

բուրալի, սև, տամուկ հող, դրախտային անկյուն, անշարժ կախվել օդում, սրտաձմիկ տեսարան, ծեր գեղջուկ, ամենակենսախինդ էակ, սիրունիկ թռվույն, կենդանության նշաններ, տաք մեղրի գոլորշի, խանդաղատանք, ճախրել, հարցուփորձ անել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Կոլիբրին աշխարհում ապրող թևավորներից ամենագեղեցիկն ու ամենափոքրիկն է: Նրանցից շարերը սովորական իշամեղվի մեծության են: Իսկ ծիծեռնակի չափերն ունեցող կոլիբրիներին ասում են հսկաներ:

Կոլիբրին ունի վառ գույնի և արտասովոր ձևի փետուրներ: Այս սիրունիկ թռչնակը շար արագ է շարժվում և մեծ քանակությամբ էներգիա է վարձում: Ծախսվածը լրացնելու համար անընդհապ սնունդ է հայթայթում: Նա շարակեր է. օրվա ընթացքում իր կշռից երկու անգամ ավելի սնունդ է ընդունում: Իսկ սնունդը ծաղիկների նեկտարն է կամ մանր միջատները:

Կոլիբրին ապրում է Հարավային և Կենտրոնական Ամերիկայում:

ՈՍԿԻՆ ԵՎ ՑՈՐԵՆԸ

Հսար Արևելքի ժողովուրդների հեքիաթի

Մի ժամանակ Հայաստանում առևտրով կամ արհեստով էին ավելի շատ զբաղվում: Հող մշակել չէին սիրում: Հաճախ արտերը անջրդի ու անմշակ էին մնում: Թագավորը տեսավ, որ այսպես մարդը երես է թեքում հողից՝ իրեն կերակրողից: Նա հրաման արձակեց, որ վարեն ու ցանեն դաշտերը, ցորեն աճեցնեն, որ ամեն ոք հաց ունենա, և սովը չավերի երկիրը:

Բայց շատերը չանսացին թագավորի կոչին. շարունակեցին առևտուր անել: Այդ ժամանակ նա իր մոտ կանչեց համբավավոր մի առևտրականի և մի իմաստուն շինականի:

Թագավորը նրանց հարցրեց.

— Ի՞նչն է աշխարհում ավելի կարևոր՝ ոսկին, թե՛ ցորենը:

Հարուստ առևտրականն ասաց.

— Ոսկին: Ոսկին մարդուն ոչնչությունից դարձնում է նշանավոր: Եթե մարդ ոսկի ունի, նա վայելում է հարգանք, ունի իշխանություն, ապրում է լիության մեջ: Ես խոնարհվում եմ ոսկու առջև:

— Մեր աշխարհում,— ասաց գեղջուկը,— ցորենից կարևոր բան չկա: Ցորենից ենք քաշում մեր ուժը և առողջությունը: Ես խոնարհվում եմ ցորենի առջև:

Հարուստը քամահրանքով քմծիծաղ տվեց, սկսեց վիճել և ապացուցել, որ ոսկին է կարևոր:

Այդ ժամանակ թագավորը հրամայեց, որ և՛ առևտրականը, և՛ գյուղացին գնան իրենց տները, յոթ օր հետո ընտանիքներով ներկայանան իրեն:

— Ձեզ հետ կվերցնեք այն ամենը, ինչը դուք կարևոր եք համարում,— ասաց թագավորը և արձակեց նրանց:

Ցոթ օր անընդմեջ հարուստը ոսկուց զարդեր էր պատրաստել տալիս, կնոջն ու աղջիկներին զուգում—զարդարում էր ապարանջաններով, մանյակներով ու մատանիներով: Իսկ գեղջուկը աղաց ցորենը, կնոջը հրամայեց մեծ քանակությամբ լավաշ թխել, իսկ աղջիկներին՝ թխել կարկանդակ ու գաթա:

Նշանակված օրը եկան թագավորի ծառաներն ու երկու ընտանիքներին առաջնորդեցին պալատի կողքին գտնվող երկու խրճիթ: Նրանց առանձին—առանձին փակեցին՝ թույլ տալով վերցնել իրենց յոթ օրվա պատրաստածը:

Երեկոյան ամեն ընտանիքի՛ն մեկական գավ ջուր տվին:

Շինականի ընտանիքը կերավ իր լավաշը, գաթան, վրայից աղբյուրի սառը ջուր խմեց և պառկեց: Հաջորդ երեք օրն էլ այդպես անցկացրին: Հարուստի խրճիթից լացի և աղաչանքի ձայներ էին հասնում գեղջուկներին: Հարուստը խնդրում էր շինականին, որ իրենց էլ լավաշ տա: Սակայն թագավորը արգելել էր ցանկացած փոխանակություն:

Հինգ օր հետո թագավորը բացել տվեց խրճիթների դռները: Շինականն իր ընտանիքով ուրախ—զվաթ էր, իսկ առևտրականի ընտանիքը սովից չարացած էր աշխարհի և մարդկանց դեմ:

— Դե՛, ի՞նչն է ավելի կարևոր՝ ցորենը, թե՛ ոսկին:

— Ցորենը, ցորենը ու դրանից թխված լավաշը,— հազիվ կմկմաց քաղցից նվաղած առևտրականը:

Դրանից հետո Հայաստան աշխարհում այլևս անմշակ հող չմնաց: Մարդիկ քարից անգամ հաց էին քամում: Երկիրը լիացավ հացով, և երկար ժամանակ սովը մոռացավ Հայոց աշխարհի ճանապարհը:

ՊԼԱՆ

1. Մարդը և հողը:
2. Թագավորի հրամանը:
3. Առկորականն ու շինականը թագավորի մոտ:
4. Երկու ընտանիքի պարտաստությունը:
5. Հնգօրյա կալանք:
6. Սովից նվաղած առկորականը:
7. Լիություն Հայոց աշխարհում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

անջրդի, անմշակ հող, չանսալ, համբավավոր առևտրական, իմաստուն գեղջուկ, քամահրանքով քմծիծաղել, զուգել-զարդարել, ապարանջան, մանյակ, մեկական գավ ջուր, ուրախ-զվարթ, սովից չարանալ, քաղցից նվաղել, քարից հաց քամել:

2. Հիշել ցորենի ու հացի մասին ասույթներ, առած-ասացվածքներ, գրական սրբաբանություններ:

ՎԻՇԱՊԸ

Ըստ Վրթանես Փափագյանի

Վաղուց, շատ վաղուց բարձրագագաթ լեռներից բխում էր մաքուր ու ականա կիտ ջուր, գնում էր, միանում այլ վտակների ու առվակների: Դառնում էր հորդառատ գետ և իր ճանապարհը զարդարում հուռթի ու բարեբեր այգիներով, գնրուխտաշող մարգագետիններով, ծանրասաղարթ անտառներով:

Այդ ջրի ափերին մի մարդաշատ ավան էր ծաղկում: Մարդիկ ուրախ-զվարթ աշխատում էին, երգում և հավասարապես վայելում ջրի պարզևած բարիքը:

Բայց մի օր խուլ հուզում ընկավ մարդկանց մեջ. գետի ջրերը սկսել էին նվազել: Այդպես եթե շարունակվեր, մի քանի տարի հետո գուցե բոլորովին ցամաքեր գետը: Արդեն սկսել էին չորանալ արտերը, ծառաստանների կանաչը խամրել էր, գորշացել:

Եվ դուրս եկան մարդիկ, խմբերի բաժանվեցին ու քայլեցին գետի հունով վեր, որ գտնեն դրա ակունքը, պարզեն ջրի նվազելու պատճառը:

Քայլեցին նրանք հոգնեցուցիչ, տաժանելի ճամփաներով, ուշադիր զննեցին ամեն ժայռ ու քար. ոչ մի հողաթումբ չէր փնջվել, ոչ մի ժայռ ու քար տեղից չէր շարժվել, ոչինչ չէր փակել ջրի ճանապարհը:

Տասնհինգօրյա շրջագայությունից հետո վերադարձան մարդիկ, խորհրդի նստեցին: Երկար վիճեցին, թեր ու դեմ կարծիքներ հայտնեցին, գրեթե ցնորական առաջարկություններ արեցին: Վերջապես տեղից ելավ մի կտրիժ և ասաց.

— Եղբայրներ, մեր ջրերը կլանում է վիշապը, որը բույն է դրել լեռներում:

Բարձրացավ ընդհանուր քրքիջ. հետո ծաղրի ու ծանակի կարկուտ թափվեց երիտասարդի գլխին: Ու հենց այդ օրն էլ նրան կապավ *Խենթ* մականունը:

Անցավ ժամանակ: Ջուրը հիմա մի բարակ առու էր, որ օր օրի ավելի էր նվազում: Մարդիկ այս անգամ նորից հիշեցին Խենթին, գտան նրան և առաջարկեցին գնալ, գտնել վիշապին:

Քայլեցին նորից անմատչելի ծործորներով, մագլցեցին քարափներն ի վեր, հասան գետի ակունքին: Նորից նստեցին, որ խորհեն, ծրագիր կազմեն:

— Մի նստեք, եղբայրներ, եկեք փորենք, ժամանակ չկա,— փորձեց հորդորել Խենթը:

Բայց նրան լսող չեղավ: Ճարահատյալ ու հուսաբեկ՝ նա վերցրեց բրիչը և սկսեց փորել: Նրա բրիչի հարվածից դողում էր լեռը, թնդում էր գետինը: Ժայռերի խորքում լսվում էր խուլ մռնչյուն:

Երբ երեկո դարձավ, ու Խենթը վերջին կարծր քարն էր ջարդում, ականջները գրեթե խլացել էին վիշապի ցասումնալից աղաղակներից: Մյուս մարդիկ՝ դողահար ու դալուկ, հեռվից նայում էին. ոչ ոք սիրտ չէր անում միանալ կամ օգնել Խենթին: Ամեն մեկն ուզում էր իր կաշին փրկել կիսամերկ, ծարավ ու թշվառ մնալու գնով:

Բրիչը մի վերջին ուժգին հարված հասցրեց, գլորվեց վերջին ժայռաբեկորը, և մարդկանց սարսափահար հայացքի առջև պատկերվեց հրեշի այլանդակ գլուխը: Նա բերանը դեմ էր տվել ջրերին, անկշտում ու անհագուրդ կլանում էր՝ հետզհետե ուռչելով ու հաստանալով:

— Հեռու, հանդուգն, թե չէ կոչնչացնեն,— որոտաց հրեշը:

Բայց Խենթը բնավ չերկնչեց, թափով նետեց իր բրիչը և վնասեց Վիշապի ճակատը: Ցավից նա կծկեց բերանը, և մի քիչ ավելի շատ ջուր հոսեց նրա շրթունքների անկյուններից:

Հայրենակիցները, փոխանակ օգնելու Խենթին, նրան ուժով հետ քաշեցին, իրենք էլ բերանքսիվայր փովեցին Վիշապի առջև և սկսեցին ներում հայցել:

— Լավ,— խոստացավ հրեշը,— ձեզ ծարավ չեմ թողնի: Գնացե՛ք, ապրեցե՛ք իմ ողորմածությամբ: Ես շրթունքներիս ծայրերից միշտ ձեզ համար մի քիչ ջուր բաժին կհանեմ:

Ու իր դաժան խոստումը մինչև այսօր էլ ճշտությամբ կատարում է հրեշը: Մարդկանց այնքան ջուր է տալիս, որ կարողանան մի կերպ քարշ տալ իրենց նվաստ ու չնչին գոյությունը:

Մարդիկ պաշտում են հրեշին, նրա համար տաճարներ են շինում, գովաբանական ճառեր ասում, իսկ Խենթին և նրա նմաններիս քարկոծում են և քշում լեռների բարձունքները:

ՊԼԱՆ

1. Հորդառապ գեպը և ծաղկուն ավանը:
2. Գեպի ջրերի նվազումը:
3. Արշավ դեպի գեպի ակունքը:
4. Մարդկանց խորհուրդը:
5. Խենթի կարծիքը:
6. Մարդկանց ծաղրուծանակը:
7. Նոր որոնում:
8. Խենթի ծանր աշխատանքը:
9. Ջրերը կլանող վիշապը:
10. Խնդրանք և զիջում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապահպարակին գրել հեղրկյալ բառերն ու բառակապակցությունները.

բարձրագագաթ լեռներ, ականակիտ ջուր, հորդառատ գետ, հուռթի և բարեբեր այգիներ, զմրուխտաշող մարգագետին, ծանրասաղարթ անտառ, խուլ հուզում ընկնել, տաժանելի ճամփաներ, թեր ու դեմ կարծիքներ, ցնորական առա-

ջարկություններ, ծաղրի ու ծանակի կարկուտ, անմատչելի ծործորներ, ցասում-նալից աղաղակներ, դողահար ու դալուկ, անհագուրդ կլանել, բերանքսիվայր փռվել, ներում հայցել, նվաստ ու չնչին գոյություն, գովաբանական ճառ:

2. *Բացադրել ծործոր, անհագուրդ, բերանքսիվայր բառերը:*

ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐԵԼԻՆ

Ըստ Ռուբեն Զարյանի

Միշտ նայում էի Հրաչյային ու մտածում՝ կնձիռներով պատված այդ դեմքը գեղեցիկ է արդյոք: Նրա մերձավորներից, խաղընկերներից շատերը չեն կարողանա այս հարցին պատասխանել: Այդ դեմքը գուցե և գեղեցիկ չէր, բայց անչափ հմայիչ էր ու արտահայտիչ: Մարդ մի տեսակ կախարդվում էր, գերվում նրանով ու փորձում էր հասկանալ նրա արտաքինի ձգողության, նրա հմայքի գաղտնիքը:

Կնձիռները մի ուրիշի դեմքին ծերությունն են վկայում, իսկ Հրաչյայի դիմագծերին դրանք հաղորդում են կամք և ուժ: Դեմքի առնացի արտահայտությունը մեղմում էր աչքերի կապույտը: Խորունկ, բովանդակալի այդ աչքերը հաճախ առանց խոսքի արտահայտում էին մի ողջ կյանքի պատմություն:

Այդ պայծառ ու կապույտ, արտահայտիչ ու խոսուն աչքերն էին, որ ջահել օրերին փրկել էին Հրաչյային թուրքի դատավճռից:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերն էին: Պոլսի շատ ուրիշ պատանիների հետ զորակոչվում է նաև Հրաչյան: Զինվորական կարգապահությունը խախտելու համար նրան բանտ են նետում: Հրաչյան տաճիկ է ձևանում, քանի որ թուրքերենին տիրապետում էր մայրենի լեզվին հավասար: Բայց առաջին իսկ նամազի ժամանակ թուրքերը հասկանում են, որ նա մահմեդական չէ: Գանակոծություն, հետո էլ դատապարտում են մահվան: Բանտապահը, որ ազգությամբ հայ էր, զգուշացնում է, թե միակ փրկությունը գերմաներենին տիրապետելն է: Հրաչյան ֆրանսերեն շատ լավ գիտեր, իսկ գերմաներեն՝ ոչ: Մահից ազատվելու մի ելք կար. կարճ ժամանակում սովորել գերմաներեն: Բանտապահը գտնում բերում է գերմաներեն մեկ-երկու գիրք ու բռռարան:

Մի շաբաթ հետո, երբ գերմաներենի նրա իմացությունը մի քանի բառից այն կողմ չէր անցնում, բանտից նրան՝ իբրև թարգմանչի, ուղարկում են գնդացրային տեսչություն: Ներկայանում է մայրո Բարեկլային:

Հրաչյան իր սովորած մեկ-երկու բառով զեկուցում է մայրին: Հետո Բարեկլան ինչ-որ բան է ասում: Հրաչյան չի հասկանում ու չի պատասխանում: Մայրը զարմացած նայում է նրան, ու դարձյալ՝ հարց: Հետևում է Հրաչյայի լռությունը: Մայրը բարկանում է, սկսում արագ-արագ խոսել, ձայնը արտահայտում է սպառնալիք, դեմքը զայրույթից կաս-կարմիր է կտրում: Հետո մեկ էլ խոսքի կեսից կտրուկ կանգ է առնում և ապշած նայում իր դիմաց կանգնած երիտասարդին:

Երիտասարդ թարգմանիչը զգաստ ու ձիգ կանգնած էր նրա առջև, իսկ ծովի պես կապույտ աչքերից հոսում էին արցունքի խոշոր կաթիլներ: Հրաչյան նրա զայրույթի մեջ իր մահն էր տեսել:

Մայրը մեղմանում է, հետո երևի կռահում, որ դիմացինը գերմաներեն չի հասկանում: Խոսում է ֆրանսերեն: Հրայան պատասխանում է նրա հարցին և պատմում իր գլխին եկածը:

Բարեկլան, որ բարի մարդ էր, շատ զգացվում է, հովանավորում է նրան և փրկում Հրայայի կյանքը:

Ինչ իմանար այդ վեհանձն մարդը, որ այդ օրերին փրկում էր հայ ժողովրդի պաշտելի զավակի կյանքը:

ՊԼԱՆ

1. Հրայա Ներսիսյանի դեմքը. կնճիռներ և աչքեր:
2. Երիտասարդ օրեր: Պոլիս. զինակոչություն:
3. Բանտ. մահվան սպառնալիք:
4. Գերմաներենի ուսանում:
5. Մայր Բարեկլայի մոտ:
6. Փրկություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադրամագրական գրել հեղուկալ բառերն ու բառակապակցությունները.

խաղընկեր, կնճիռներով պատված, հմայքի գաղտնիք, առնացի արտահայտություն, խոսուն աչքեր, տաճիկ ձևանալ, կարգապահությունը խախտել, գանակոծություն, զայրոյթից կաս-կարմիր կտրել, զայրույթի մեջ մահ տեսնել:

2. Բացարդել նամագ բառը:

3. Դիպել հատվածներ «Պարվի համար», «Տժվժիկ», «Պեպո» կինոնկարներից:

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Ըստ Վիլյամ Շեքսպիրի

Հին ժամանակներում Իտալիայի Վենետիկ քաղաքում ապրում էր Անտոնիո անունով մի երիտասարդ: Նա վաճառական էր, ուներ շատ նավեր, որոնք առևտուր էին անում հեռավոր երկրների հետ: Այս Անտոնիոն, որը մի բարի ու ազնվասիրտ մարդ էր, ընկերություն էր անում Բասանիո անունով մի երիտասարդի հետ:

Բասանիոն շատ աղքատ էր, բայց խելացի էր, հաղթանդամ ու խիզախ: Նա անհույս սիրահարված էր Պորցիա անունով մի չքնաղ օրիորդի: Բասանիոյի սերն անհույս էր, որովհետև Պորցիայի հայրը Վենետիկի հարուստ և ազդեցիկ մարդկանցից մեկն էր:

Մի օր էլ Բասանիոն որոշեց գնալ և խնդրել Պորցիայի ձեռքը: Ամեն ինչ բարեհաջող անցավ. պարզվեց, որ սիրուն օրիորդն էլ սիրում է Բասանիոյին:

Սակայն Բասանիոն հարսանեկան ծախսերի համար դրամ չուներ և իր ընկեր Անտոնիոյին խնդրեց օգնել իրեն: Այդ պահին Անտոնիոյի մոտ դրամ չկար. նրա ողջ հարստութիւնն ու դրամը այն երեք նավերում էին, որ հեռու երկրներից շուտով հասնելու էին Վենետիկ:

Այդ ժամանակ իր սիրուց խենթացած Բասանիոն գնաց Վենետիկի ամենախաբեքա և չար մարդու՝ հրեա Շայլոկի մոտ և պարտքով դրամ խնդրեց: Հրեան իր նենգ սրտի ողջ զորությամբ ատում էր Անտոնիոյին: Երբ իմացավ, որ պարտքը պիտի վերադարձնի Անտոնիոն, նա այսպիսի զարհուրելի պայման դրեց.

— Եթե Անտոնիոն իր նշած օրը պարտքը չվերադարձնի, իր մարմնից ինձ պիտի մի ֆունտ միս տա:

Անտոնիոն միայն ուրախ քրքջաց՝ այդ պայմանը կարդալով, և ստորագրեց պարտամուրհակը: Նա հանգստացրեց Բասանիոյին, որը չէր ուզում այդ գնով ձեռք բերված դրամը վերցնել:

Ճոխ հարսանիք եղավ: Հարսն ու փեսան անչափ երջանիկ էին: Նրանք քաշվեցին Պորցիայի՝ Վենետիկից հեռու գտնվող առանձնատունը և անդորր ու խաղաղ բնության գրկում վայելում էին իրենց սերը:

Բայց մի օր Բասանիոն մի բոթաբեր նամակ ստացավ: Անտոնիոյի նավերը խորտակվել էին, նա սնանկացել էր, իսկ Շայլոկը, չստանալով իր պարտքը, նրան բանտ էր նետել և պահանջում էր իրեն խոստացված մի ֆունտ միսը:

Բասանիոն Պորցիայից պարտքի եռապատիկը վերցրեց և շտապեց ընկերոջը օգնության:

Դատի ժամանակ նա Շայլոկին պարտքի կրկնապատիկն ու եռապատիկը առաջարկեց, բայց հրեա վաշխառուն դանակը սրել, դրել էր կողքին և ասում էր, որ Անտոնիոյից պիտի մի ֆունտ միս կտրի:

Այդ ժամանակ Վենետիկ հասավ մի երիտասարդ փաստաբան և Բասանիոյին և Անտոնիոյին առաջարկեց իր օգնությունը:

Նորից դատ եղավ: Երիտասարդ դատավորը Շայլոկին փորձեց համոզել, որ դրամ վերցնի իր պարտքի դիմաց: Սակայն հրեան համառ էր: Այդ ժամանակ երիտասարդ դատավորն ասաց.

— Այո, Շայլոկ, օրենքով դու պիտի ստանաս քո ցանկացածը՝ մի ֆունտ միսը: Միայն մի ֆունտ միս. ուրիշ ոչինչ, այնպես չէ:

— Այո, այո, ամենագնտ դատավոր,— երջանկացած բացականչեց Շայլոկը:

— Մի ֆունտ միս, բայց ոչ մի կաթիլ արյուն: Եթե դու միսը կտրես, և թափվի գեթ մի կաթիլ արյուն, ապա ամբողջ քո փողը և ունեցվածքը կրճատվեն հոգուտ Վենետիկի:

— Այդ դեպքում,— արագ ասաց Շայլոկը,— տվեք ինձ իմ դրամը. Բասանիոն, եռակի: Չէ՞ որ խոստացար:

— Մի շտապիր,— վրա բերեց դատավորը,— դատարանի առջև դու հրաժարվեցիր փողից: Վերցրո՛ւ քո մի ֆունտ միսն ու գնա՛:

Լսելով այդ՝ Շայլոկը պահանջեց միայն իր տված պարտքը: Սակայն դատավորը դրանից էլ նրան գրկեց:

Այդ ամենից հետո Անտոնիոն և Բասանիոն երիտասարդ դատավորին շնորհակալություն հայտնեցին և խնդրեցին վերցնել այն դրամը, որ պիտի Շայլոկին տային:

Սակայն երիտասարդը ուրախ ժպտաց, գլխից հանեց կեղծամը, և նրանց առջև կանգնեց Բասանիոյի քնքուշ կինը՝ Պորցիան:

Դեռ երբեք վենետիկցիները այդպիսի բարձր և ուրախ քրքիջ չէին լսել:

ՊԼԱՆ

1. Վենետիկցի վաճառական Անտոնիոն:
2. Աղքատ, բայց գեղեցիկ Բասանիոն:
3. Անհույս սեր:
4. Շայլոկի մոտ. զարհուրելի պայման:
5. Բասանիոյի և Պորցիայի ամուսնությունը:
6. Գուժկան նամակը:
7. Դատ. անխիղճ հրեան:
8. Երիտասարդ դատավորն ու նրա արդար վճիռը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասարանին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) Իտալիա, Վենետիկ, Անտոնիո, Բասանիո, Պորցիա, Շայլոկ.

բ) առևտուր, հաղթանդամ, անհույս սիրահարվել, չքնաղ օրհորդ, հարսանեկան ծախս, սիրուց խենթացած, ամենախաբեբա, հրեա վաշխառու, զարհուրելի պայման, մի ֆունտ միս, պարտամուրհակ, առանձնատուն, բոթաբեր նամակ, անանկանալ, բռնագանձվել, հօգուտ, կեղծամ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Վիլյամ Շեքսպիրը (1564–1616)՝անգլիացի հանճարեղ թատերգակ և բանաստեղծ է: Ծննդյան և մահվան ամսաթիվը նույնն է՝ ապրիլի 23: Ապրիլի 23-ը մարդկության հիշողությունից չի ջնջվում արդեն 400 տարի և երբևէ չի ջնջվելու: Այդ օրը ծնվեց Շեքսպիրը: Իսկ 1616 թվականի նույն՝ ապրիլի 23-ին երկու հանճարներ ավարտեցին իրենց մարմնավոր գոյությունը՝ անցնելով երկնային անմահ կեցության: Անգլիայում մահացավ Շեքսպիրը, իսկ Իսպանիայում՝ Սերվանտեսը:

Հանճարեղ Շեքսպիրը մեզ թողել է տոներներ՝ գրված «թուխ կնոջ» համար, պոեմ, կատակերգություններ («Մեծ աղմուկ ոչնչից», «Վենետիկի վաճառականը», «Կամակոր կնոջ սանձահարումը»), ողբերգություններ («Ռոմեո և Ջուլիետ», «Օթելլո», «Համլետ», «Լիր արքա»):

Բառի բացատրություն

Ֆունտ — ծանրության չափ Եվրոպայում, հավասար է 453,6 գրամի

ԴԱՆԱՅԱՆ ՏԱԿԱՐ

Ըստ հունական դիցարանության

Հնում Եգիպտոսն ու Դանայոսը եղբայրներ էին: Եգիպտոսը իշխում էր ջրառատ Նեղոսի ափերին: Նա շատ հարուստ էր և հիսուն որդի ուներ: Պակաս հարուստ և անվանի չէր նրա եղբայրը՝ Դանայոսը, որը Լիբիայի արքան էր: Սա էլ հիսուն գեղանի դուստր ուներ:

Մի անգամ Եգիպտոսն իր որդիներով այցի եկավ Դանայոսին: Նրա հիսուն որդիներն էլ տեղնուտեղը գերվեցին չքնաղ դանայուհիներով:

— Կնության տուր դուստրերիդ իմ ուստրերին, եղբայր,— խնդրեց Եգիպտոսը Դանայոսին:

Բայց Դանայոսը կտրուկ և արհամարհանքով մերժեց: Եգիպտոսի որդիները որոշեցին ուժով տիրանալ այդ ամբարտավան, բայց շատ գեղեցիկ աղջիկներին: Նրանք զորք հավաքեցին, եկան Լիբիա:

Դանայոսը իր զորքով եղբորորդիների դեմ ելավ: Բայց շատ շուտով պարտվեց և ստիպված եղավ ընդունել Եգիպտոսի առաջարկը:

Եգիպտոս արքան բացել տվեց գինու տակառները, եղավ ճոխ հարսանիք: Ողջ ժողովուրդը ամբողջ մի օր կերավ-խմեց, օրհներգեց Եգիպտոսի դյուցազուն գավակներին ու նրանց հարսնացուներին:

Իջավ խավար գիշեր: Ավարտվեց հարսանեկան խրախճանքը: Գինարբուքից հոգնած մարդիկ խոր քուն մտան: Նորապսակներից յուրաքանչյուրը քաշվեց իրեն հատկացված շքեղ առանձնարանը:

Եգիպտոսի ավագ գավակը գրկեց իր դեռատի կնոջը, քնքշությամբ հետ տարավ նրա դեմքը ծածկող շղարշը: Բայց նա չհասցրեց որևէ բառ շշնջալ: Նորահարսը վայրկենաբար մերկացրեց դաշույնը և մխրճեց բուռն սիրով համակված իր ամուսնու սիրտը: Ընկավ Եգիպտոսի անդրանիկ որդին. նրա խրոխտ կրծքից միայն վշտի հեծկտոց դուրս թռավ:

Շուտով նույն դառն ու մահասարսուտ տնքոցը լսվեց մյուս նորապսակների սենյակներից: Բոլոր դանայուհիները իրենց հոր տված դաշույններով սրախողխող էին արել իրենց փեսացուներին:

Սուգ ու կական սկսվեց: Եգիպտոսը խելագարի պես վազում էր սպանված մի որդուց դեպի մյուսը:

Հենց այդ պահին Եգիպտոսի ամենափոքր որդին՝ գեղագանգուր Լինքեոսը, մի հավատարիմ ծառայի և իր չքնաղ կնոջ ուղեկցությամբ փախչում էր մահվան մշուշով պատված պալատից:

Միայն այս վերջին դանայուհին էր զլացել կատարել հոր պատվերը: Նա սիրել էր Լինքեոսին և գիշերվա լռության մեջ խոստովանել, թե ինչ է պատրաստել Դանայոսը:

Շատ զայրացավ Դանայոս արքան, երբ իմացավ փոքր դստեր դավաճանության մասին: Անվախ և աներեր՝ աղջիկը կանգնեց հոր դեմ և դատապարտեց նրա տմարդի արարքը: Աղջկան պաշտպան կանգնեցին բոլորը՝ Դանայոսի բոլոր խորհրդականներն ու իմաստուն ծերերը: Աղջիկը գնաց իր ամուսնու մոտ, և նրանք խաղաղ ու երջանիկ ապրեցին սիրո աստվածուհու հովանու տակ:

Իսկ Դանայոսի քառասունինը աղջիկներին պատիժը վրա հասավ մահից հետո: Հադեսի խավարչտին թագավորությունում նրանք դատապարտված են ջուր կրելու և լցնելու մի շատ մեծ տակառ: Բայց տակառը հատակ չունի:

Ահա ուր որ է տակառը կլցվի, բայց ջուրը հոսում է, և տակառը դատարկ է: Կրկին ու կրկին գործի են անցնում մարդասպան դանայոսիհիները, դարձյալ ջուր են կրում և լցնում անտակ տակառը: Եվ այսպես շարունակ:

Այսպես առաջացել է «դանայան տակառ» թևավոր արտահայտությունը, որը նշանակում է ծանր, բայց անօգուտ աշխատանք:

ՊԼԱՆ

1. Եգիպտոսն ու Դանայոսը:
2. Եգիպտոսի առաջարկը:
3. Դանայոսի մերժումը:
4. Պատերազմ և պարտություն:
5. Հարսանիք:
6. Դանայոսիհիները՝ մարդասպան:
7. Խիզախ կրքսեր դանայոսիին:
8. Պատիժ Հադեսի թագավորությունում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապատմական գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ա) ամբարտավան, դյուցազուն, օրհներգել, հարսանեկան խրախճանք, բուռն սիրով համակված, դաշույն, մահասարսուռ տնքոց, սրախողխող անել, գեղազանգուր, տմարդի արարք, խավարչտին թագավորություն.

բ) Եգիպտոս, Դանայոս, Լիբիա, Նեղոս, Լինքեոս, Հադես:

ՕՐՓԵՈՍ ԵՎ ԵՎՐԻԴԻԿԵ

Ըստ հունական դիցաբանության

Հին Հունաստանում ապրում էր երգիչ Օրփեոսը, նա կիթառ էր նվագում և երգում դրա նվագակցությամբ: Երբ նա սկսում էր նվագել, նույնիսկ հավքերը, ծառերը, ջրերը քարանում էին, որ լսեն նրան:

Երջանիկ էր Օրփեոսը, որովհետև նրա հետ էին երգը և սիրած կինը՝ Եվրիդիկեն, որի հետ նոր էր ամուսնացել: Ուրախ խայտում էր գեղանի Եվրիդիկեն՝ ջերմացած իր ամուսնու սիրով և երգով:

Մի օր էլ Եվրիդիկեն ուրախ-զվարթ խաղում էր մարգագետնում: Վազվզում էր իր ընկերուհիների հետևից, ծաղիկ փնջում կամ էլ պառկում էր դալար խոտին և նայում երկնքի անծայր խորությանը:

Հանկարծ խոտերի վրայով մի օձ կայծակի պես առաջ սլացավ և Եվրիդիկեին խայթեց: Այդ օձը չար էր, ու նրա թույնը ակնթարթորեն էր ներգործում: Մեռավ մանկամարդ կինը, ընդամիշտ փակեց աչքերը, նրա հոգին թռավ մեռյալների խավարչտին թագավորությունը:

Վշտից ու կսկիծից խելագարվում էր Օրփեոսը, լալիս էր ու կանչում իր գեղեցկուհի կնոջը:

Մի օր էլ մի խելահեղ որոշում կայացրեց: Առավ իր կիթառը և գնաց Ստիքս գետի ափը, այնտեղ, ուր խոժոռ ու մռայլադեմ Քարոնը մեռյալների հոգիները նավով անցկացնում էր մյուս ափ՝ Հադեսի դժնի թագավորությունը:

Շատ խնդրեց Օրփեոսը Քարոնին, որ իրեն էլ անցկացնի մյուս ափ, աղաչեց, լաց եղավ, բայց անդդովելի էր Քարոնը:

Վշտաբեկ և հուսահատ Օրփեոսը հաճեց կիթառը և սկսեց նվագել ու երգել երգի մեջ նա պատմում էր, թե որքան են իրար սիրել, որ կյանքը հիմա անհիմաստ է առանց նրա: Այնպես սրտահույզ էր հնչում Օրփեոսի երգը, այնպես տխուր ծորում էին կիթառի հնչյունները:

Քարոնի աչքերը տամկացան: Նրա կրծքի տակ սիրտը սկսեց բաբախել, և նա երգչին անձայն տեղափոխեց Հադեսի թագավորություն:

Օրփեոսը բազում սարսափների միջով անցավ: Վերջապես կանգնեց Հադես արքայի և նրա կնոջ առջև: Անխոս վերցրեց կիթառը: Նորից երգով պատմեց իր սիրո մասին: Լսում են նրան Հադեսն ու Պերսեփոնեն: Նրանց աչքերում շողում են արցունքները:

Երբ ավարտեց երգիչը, և քար լռության մեջ հալվեցին մեղեդու վերջին հեծկլտոցները, Հադեսը հարցրեց Օրփեոսին, թե ինչն է եկել իր աշխարհը:

Օրփեոսը ծնկի եկավ, արքային կարկառեց ձեռքերը և աղիողորմ ձայնով խնդրեց.

— Վերադարձրո՛ւ իմ կնոջը, թո՛ւյլ տուր, որ էլի մի քիչ երջանիկ լինենք միասին:

Հադեսը մի քիչ խորհեց, նայեց իր կնոջը, որը նրան էր հատել իր աղերսագին հայացքը և ասաց.

— Լավ: Բայց մի պայմանով: Դու պետք է հետ չնայես: Պիտի քայլես իմ աշխարհով դեպի լույսը և կենդանությունը, բայց ինչ էլ որ պատահի, պետք է հետ չնայես, այլապես վերջնականապես կկորցնես Եվրիդիկեին:

Սովերների թագավորության միջով քայլում են Հերմեսը, սրա հետևից՝ Օրփեոսը, իսկ նրանց հետևում է Եվրիդիկեի սովերը:

Անցնում են բազմաթիվ սարսափների միջով, ահա հեռվում երևում է լույսը, ուր որ է լքելու են Հադեսի տիրույթները: Անհանգիստ է Օրփեոսը, գալիս է արդյոք Եվրիդիկեն, ո՞ր է նա, ինչն ոչինչ չի լսում ինքը, ինչն չի զգում թիկունքում իր կնոջ թարմ շունչը: Անհուն տվայտանքներից հուսահատ Օրփեոսը այլևս չի դիմանում և շրջվում է՝ տեսնելու՝ գալիս է արդյոք Եվրիդիկեն, թե խաբեց իրեն մեծ արքան:

Ու սարսափով տեսնում է Օրփեոսը, որ իր հետևից եկող Եվրիդիկեն սահում է հետ՝ դեպի սովերների թագավորությունը:

Հերմեսը հեռացրեց նվաղած Օրփեոսին մեռյալների թագավորության սահմաններից, իսկ ինքը վերադարձավ Հադեսի մոտ՝ կատարելու նրա հրամանները:

ՊԼԱՆ

1. Երգիչ Օրփեոսը:
2. Նրա կինը՝ Եվրիդիկեն:
3. Եվրիդիկեի մահը:
4. Օրփեոսի խիզախ որոշումը:
5. Օրփեոս և Քարոն:
6. Օրփեոսը մեռյալների թագավորությունում:
7. Հադեսի պայմանը:
8. Անցում սարսափների աշխարհով:
9. Եվրիդիկեի երկրորդ մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադրախարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) ուրախ խայտալ, գեղանի կին, դալար խոտ, երկնքի անծայր խորություն, մանկամարդ, խելահեղ որոշում, խոժոռ ու մռայլադեմ, անդրդվելի, սրտահույզ երգ, կիթառի հնչյուններ, ծորալ, տամկանալ, մեղեդու վերջին հեծկտոցներ, աղերսագին հայացք, անհուն տվայտանք, նվաղել.

բ) Օրփեոս, Եվրիդիկե, Հադես, Քարոն, Հերմես, Պերսեփոնե:

2. Դասարանում լսել ավարրիացի Ք. Գլյուկի «Օրփեոս և Եվրիդիկե» օպերայից հարվածներ:

3. Համացանցում գրնել և դիպել Ռուբենսի «Օրփեոս և Եվրիդիկե» կրավի վերադրությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Օրփեոսը Հին Հունաստանում առասպելական երգիչ էր, երաժիշտ և բանաստեղծ: Ըստ առասպելի՝ իր երգով ու նվագով կախարդել է մարդկանց ու աստվածներին, սանձել է բնության փարեբը: Մասնակցել է Յասոն հերոսի գլխավորած արգոնավորդների արշավանքին: Իր նվագով ու երգով ուղեկիցներին փրկել է կործանումից:

Օրփեոսի կերպարը, նրա մասին առասպելները ոգեշնչել են շատ բանաստեղծների և դրամատուրգների (Էսքիլես, Եվրիպիդես, Շեյք, Ռիլկե): Շատ երգահաններ են անդրադարձել թրակիական այս հերոսին (Մոնտեվերդի, Լիստ, Հայդն, Գլյուկ, Բելլինոզ): Հռչակավոր նկարիչ Ռուբենսն էլ գույների լեզվով է երգել Օրփեոսին: *

Այսօր Օրփեոս կոչում են անզուգական երգիչներին և երաժիշտներին:

ՈՍԿԻ ՈՒՂԵՂԸ

Ըստ Ալֆոնս Դոդեի

Աշխարհում մի մարդ կար, որի ուղեղը ոսկուց էր: Երբ նա աշխարհ եկավ, բժիշկները մտածեցին, որ նա չի ապրի. նորածնի գլուխը շատ ծանր էր ու զարմանալիորեն մեծ: Սակայն նա ապրեց և մեծացավ արևի տակ, ինչպես ձիթենու մի գեղեցիկ տունկ: Միայն թե նրա խոշոր գլուխը միշտ առաջ էր ձգվում և ցավալի էր տեսնել՝ ինչպես քայլելիս բախվում է կահույքին: Հաճախ էր սայթաքում և ընկնում:

Մի օր էլ նրա գլուխը բախվեց մարմարե աստիճանին, գանգը ձուլածո մետաղի պես գնգաց: Երբ մայրը նրան բարձրացրեց, շիկավուն մազերի մեջ միայն մի թեթև քերծվածք նկատեց՝ մակարդված ոսկու երկու-երեք շիթով: Հենց այդ ժամանակ էլ ծնողներն իմացան, որ իրենց տղան ոսկի ուղեղ ունի:

Սա դարձավ ընտանիքի սուրբ գաղտնիքը: Նրան թույլ չէին տալիս խաղալ հարևան տղաների հետ:

— Քեզ կգողանան, գանձ իմ,— բացատրում էր մայրը:

Երբ տղան դարձավ տասնութ տարեկան, ծնողները բացատրեցին ի վերուստ տրված պարզևի գաղտնիքը: Եվ քանի որ իրենք սնել ու դաստիարակել էին ոսկի ուղեղով իրենց զավակին, պահանջեցին իրենց խնամքի վարձը: Պատանին չզլացավ և անմիջապես իր գանգից մի կտոր ոսկի պոկեց, նետեց մոր ծնկներին:

Այնուհետև իր գլխում կուտակված հարստությունից շլացած, հզորությունից արբած՝ լքեց հայրական տունը և գնաց շրջելու աշխարհով մեկ՝ վատնելով ու շռայլելով իր գանձը:

Նա վարում էր ցոփ ու շվայտ կյանք, աջ ու ձախ շաղ տալիս ոսկին: Կարելի էր կարծել, որ նրա ուղեղն անսպառ է:

Սակայն այդպես չէր. նա սպառվում էր աստիճանաբար, աչքերը խամրում էին, այտերը փոս էին ընկնում: Իսկ գանգի վրա առաջացել էր մի հսկայական բացվածք:

Մի գիշեր էլ խեղճ մարդն արթնացավ ահավոր գլխացավից: Սարսափած վեր թռավ տեղից և լուսնի լույսով տեսավ իր ամենամոտ ընկերոջը: Սա վերարկուի տակ թաքցրած ինչ-որ բան էր տանում: Եվս մի քիչ ուղեղ, ևս մի քիչ ոսկի:

Մի օր էլ այս մարդը հանդիպեց մի փոքրիկ խարտիշահեր օրիորդի: Սիրեց դեղձան վարսերով այդ պչրուհուն, ամուսնացավ նրա հետ: Սիրուց կուրացած՝ իր ողջ գանգը դրեց թեթևամիտ ու թովուս կնոջ ոտքերի տակ:

— Ուրեմն մենք շամ հարուստ ենք, ամուսինս,— հրձվանքով հարցնում էր կինը:

— Օ՛, այո՛, հոգյակս,— մեղմ ձայնով պատասխանում էր ոսկի ուղեղով մարդը:

Եվ քաղցր սիրով ժպտում էր կապույտ թռչնակին, որն անմեղորեն ուտում էր իր ամուսնու ուղեղը:

Այդպես երկու տարի: Հետո մի առավոտ նրա քնքուշ կինը մահացավ: Ուղեղի մնացած ոսկով մարդը շքեղ թաղում կազմակերպեց: Բարձրադողանջ գանգակներ, ծանրաշարժ թավջապատ մեքենաներ, արծաթե փայլազարդեր: Մնացած ոսկուց բաժանեց գերեզմանափորներին, բեռնակիրներին, անթառամ ծաղիկ վաճառողներին, ամենուրեք բաժանեց առանց սակարկելու:

Աշխարհում կան մարդիկ, որոնք դատապարտված են ապրելու իրենց ուղեղով և վճարում են իրենց ուղեղի մաքուր, անաղարտ ոսկով՝ կյանքի ամենաչնչին ու ողորմելի բաներն ունենալու համար:

ՊԼԱՆ

1. Մեծ գլխով նորածինը:
2. Ընտանիքի գաղտնիքը:
3. Ծնողների խնամքի վարձը:
4. Գանգի շռայլում:
5. Դավաճան ընկեր:
6. Սեր և ամուսնություն:
7. Կնոջ մահը:
8. Իրենց ուղեղով ապրող մարդիկ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասիական գրել հերևյալ բառերն ու բառակապակցությունները.

ձիթենու գեղեցիկ տունկ, մարմարե աստիճան, ձուլածո մետաղ, շիկավուն մազեր, մակարդված ոսկի, ի վերուստ տրված, ցոփ ու շվայտ կյանք, փոքրիկ խար-

տիշահեր օրիորդ, դեղձան վարսեր, պջրուիի, կապույտ թռչնակ, բարձրադողանջ գանգակներ, թավշապատ մեքենաներ, արծաթե փայլագարդեր, սակարկել, ուղե-
ղի մաքուր, անաղարտ ոսկի:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Ալֆոնս Դոդեն (1840-1897) ֆրանսիացի նշանավոր գրող է: Հարել է Էմիլ Զոլայի գլխավորած նախորալիստական դպրոցին: Իր ստեղծագործություններում ծաղրել է քաղքենիական աշխարհը, նրա բարքերը: Հայերեն թարգմանված են նրա «Պսոփկը», «Տարասկոնցի Տարտարենը» վեպերը, «Նամակներ իմ հողմադացից» պատմվածքների ժողովածուն:

ՄԱՐԴՈՒ ԱԶՔԸ

Ըստ Նար-Դոսի (ավանդություն)

Մի անգամ չքավոր մի մարդ տարօրինակ իր գտավ: Գտած իրը կակուղ էր, կլոր ու փոքրիկ ընկույզի չափ: Տարավ տուն, ցույց տվեց կնոջը, հարևաններին, բայց ոչ ոք չիմացավ, թե ինչ է աղքատի գտածը:

Շուտով ողջ քաղաքում լուր տարածվեց, թե այսինչ մարդը մի չտեսնված-չլսված բան է գտել: Իրը ո՛չ աղամանդ է, ո՛չ քար, ո՛չ ընկույզ:

Լուրը հասավ թագավորին: Նա ուզեց տեսնել հազվագյուտ իրը: Չքավոր մարդը իր իրով կանգնեց թագավորի առաջ: Թագավորն առավ իրը, ձեռքի մեջ շուռումուռ տվեց, մտածեց, գլուխ կոտրեց, ոչինչ չհասկացավ:

— Ծախիր ինձ այս իրը, — ասաց թագավորը, — որքան կուզես սրա դիմաց:

Գյուղացին ասաց.

— Դրա քաշով ինձ ոսկի տուր:

Գնացին գանձարան, որն անբավ հարստություն էր ամբարում իր ներսում: Գանձապետը վերցրեց ամենափոքր կշեռքը, դրա մի նժարին դրեց իրը, մյուսին՝ մի ոսկի: Սակայն կշեռքը տեղից չշարժվեց: Գանձապետը ավելացնում էր ոսկիները, բայց անօգուտ: Այդ ժամանակ գանձապետը վերցրեց ամենամեծ կշեռքը ու սկսեց ոսկի լցնել նժարին: Բայց զարմանալի իրը դարձյալ ծանր էր: Սկսեցին ոսկիները տոպրակներով դնել, բայց իրը միշտ ծանր էր մնում:

Ջայրացավ թագավորը, ոտքը գետին խփեց, սպառնաց չքավորին, թե նրան կախել կտա: Բայց գեղջուկն էլ պակաս զարմացած չէր: Նա սարսափից դողում էր և ներում էր խնդրում արքայից:

Թագավորը խղճաց նրան, հավատաց, որ գեղջուկը ոչնչից տեղյակ չէ: Ապա հրամայեց, որ իսկույն կեթ իր երկրի բոլոր գիտնականներին հավաքեն, որ պարզեն, թե ինչ իր է դա:

Եկան բոլոր գիտնականներն ու իմաստունները, շատ մտածեցին, շատ վիճեցին, բայց չիմացան, թե ինչ է այդ զարմանալի իրը:

Թագավորը հրամայեց գլխատել նրանց բոլորին, ապա ցասկոտ դարձավ իր պալատականներին ու պահանջեց որոնել, գտնել որևէ իմաստունի, որ կարողանար լուծել այդ հանելուկը:

Դրանիկները ցրվեցին աշխարհով մեկ, շատ որոնեցին, վերջապես մի զառանյալ ու փորձված մարդ գտան: Նրան թագավորի մոտ բերին:

Այլորը հենց տեսավ իրը, պահանջեց, որ բերեն ամենափոքր կշեռքը և մի բուռ հող: Բերին ծերունու ուզածը: Կշեռքի մի նժարին դրեց իրը, իսկ մյուսին սկսեց հող լցնել: Կշեռքի նժարները շարժվեցին և հավասար կանգնեցին:

Այշահար թագավորը հարցրեց.

— Այդ ինչ է, ո՞վ խելոք մարդ:

— Սա մարդու աչք է, թագավոր, — պատասխանեց ծերունին: — Դուք ուզում էիք սա կշռել ոսկով. հողից բացի՝ սա ոչնչով չի կշտանում:

ՊԼԱՆ

1. Չբավորը իր է գտնում:

2. Թագավորը որոշում է գնել իրը:

3. Սկսում են իրը կշռել:

4. Շարժ իմաստուններ են գլխադրվում:

5. Ջառանջալ իմաստունը կշռում է իրը:

6. Մարդու աչքը կշտանում է միայն հողով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասխարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

չտեսնված-չլսված, գլուխ կոտրել, անբավ հարստություն, ամբարել, ցասկոտ, դրանիկ, ոտքը գետին խփել, գեղջուկ, իսկույն ևեթ, զառանյալ ու փորձված մարդ:

ԵՐԿՆՔԻ ԶԱՆԳԱԿԸ

Ըստ Նար-Դոսի

Շատ հին ժամանակներում, երբ ո՛չ թագավորներ կային, ո՛չ իշխաններ, ո՛չ դատավորներ, մարդկանց գործերը քննվում էին մի զանգակով, որ կախված էր երկնքից: Մարդիկ իրենց տարածայնությունների դեպքում դիմում էին զանգակին: Վկաներ կանչելու հարկ չկար, որովհետև զանգակը առանց որևէ մեկի ցուցմունքի էլ ամենաանաչառ վճիռն էր կայացնում, թե ով է արդարը, ով՝ մեղավորը:

Զանգակը կախված էր մի ընդարձակ դաշտի վրա: Նրա տակ՝ գետնից բավական բարձր, շինված էր մի տախտակամած, որի վրա բարձրանում էին սանդուղքով: Գանգատավորները միայն իրավունք ունեին բարձրանալու այդ տախտակամածի վրա, իսկ ամբոխը կանգնում էր ներքևում և այնտեղից դիտում էր: Գործի քննության ժամանակ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսվում. հանդիսատեսը լռելյայն, սրբազան երկյուղածությամբ սպասում էր զանգակի վճռին:

Գանգատավորները երկուսով բարձրանում էին տախտակամածը և փոխադարձաբար բռնում էին զանգակին կապված պարանից: Ով մեղավոր էր, նա բնավ չէր կարողանում շարժել լեզվակը, իսկ ով արդար էր, հենց որ ձեռքն էր առնում պարանը, զանգակն ահագնալի և սարսափազդու ձայնով ամբոխին տեղեկացնում էր, որ նա անմեղ և արդար է:

Մի անգամ մեկը իր հարևանին մի քանի հարյուր ոսկի էր պարտք տվել: Նշանակյալ ժամանակից հետո երբ նա իր ոսկին պահանջեց, պարտապանը կեղծ զարմացավ՝ ասելով, որ արդեն վերադարձրել է պարտքը:

— Դու ինձ ոչինչ չես տվել, ինչո՞ւ ես սուտ խոսում:

— Ես չեմ ստում, պարտքս վաղուց վերադարձրել եմ:

Գնացին զանգակի դատաստանին: Ամբոխը շրջապատել էր տախտակամածը: Ամենքն անհամբեր սպասում էին նրա արդար վճռին:

Գանգատավորները բարձրացան տախտակամածը: Պարտապանը ձեռքին մի հաստ գավազան ուներ: Նախօրոք նա փորել էր այդ գավազանը և պարտք վերցրած ոսկին լցրել էր այդ փորվածքի մեջ, ապա գավազանի գլուխը նորից ամրացրել:

— Բռնիր այս գավազանը, — ասաց նա՝ գավազանը պարտատիրոջը տալով:

Պարտատերը ոչինչ չկասկածեց, վերցրեց գավազանը: Պարտապանը համարձակ մոտեցավ պարանին և բացականչեց.

— Ո՛վ անաչառ դատավոր-զանգակ, դու ասա՛, ոսկին տվե՞լ եմ այս մարդուն, թե՞ ոչ:

Եվ բռնեց լեզվակի պարանից: Լեզվակը նույն վայրկյանին շարժվեց, և զանգակը պարզ ու մեկին դողանջով հայտարարեց, որ պարտքն արդեն տվել է:

— Տեսա՞ր, — դիմեց նա իր հարևանին, — անամոթ, երկու անգամ էիր ուզում առնել փողը: Տնօր ինձ գավազանս:

Նա քար կտրած պարտատիրոջ ձեռքից խլեց իր գավազանը և ուրախ-ուրախ իջավ տախտակամածից:

Ամբոխն սկսեց թքել-մրել խեղճ պարտատիրոջը, որը ապշել էր զանգակի անարդար վճռից: Բայց զանգակը անարդար չէր: Այն բռպեխն, երբ պարտապանը կանգնել էր զանգակի տակ, նա արդեն պարտք ոսկին, գավազանի մեջ լցրած, տվել էր պարտատիրոջ ձեռքը:

Ջայրացավ Աստված մարդու անիրավ խարդախությունից և զանգակը զարհուրելի դողանջունով քաշեց տարավ երկինք: Այսպես մահկանացուն զրկվեց արդար և անաչառ դատավորից:

ՊԼԱՆ

1. Անաչառ դատավոր-զանգակը:
2. Սրախոս պարտապանը:
3. Խաբեություն:
4. Անարգված պարտատերը:
5. Աստված զրկեց մարդուն արդար դատավորից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասարանի գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

տարածայնություն, ամենամանաչառ, տախտակամած, սրբազան երկյուղածություն, ահագնալի ու սարսռազդու ձայն, ամբոխին տեղեկացնել, մի քանի հարյուր ոսկի, պարտապան, կեղծ զարմանալ, գանգատավոր, հաստ գավազան, ոսկին լցնել փորվածքի մեջ, անաչառ դատավոր-զանգակ, պարզ ու մեկին դողանջ, քար կտրած պարտատեր, ուրախ-զվարթ, անիրավ խարդախություն, զարհուրելի դողանջուն:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐՎԱ ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐԸ

Ըստ Անդրե Մորուայի

Ութսունամյա նշանավոր դերասանուհին դուրս եկավ տնից: Նա մտավ ծաղկի խանութ:

— Այսօր չորեքշաբթի է, տիկին, — հոնքերը վեր ձգելով՝ ոչ այն է՝ հարցրեց, ոչ այն է՝ հաստատեց խանութի տերը:

— Այո՛, միթե մոռացել եք:

Վաճառողը լռելյայն տիկնոջը մեկնեց մի փունջ մանուշակ:

Ծեր կինը, որին ճանաչում էր ողջ Փարիզը, քայլեց առաջ՝ պատասխանելով խոնարհ և հիացական ողջուններին: Դերասանուհին հասավ Մինպառնասի գերեզմանոց, մոտեցավ մի շիրիմի և ձեռքի փունջը հոգածությամբ դրեց մարմարե սալիկին:

Ապա կանգնեց լուռ ու մտախոհ: Հիշեց իրեն երիտասարդության փայլուն տարիներին:

Այն ժամանակ քսաներկու տարեկան էր, բայց արդեն ճանաչված ու սիրված դերասանուհի էր: Հատկապես դեռահասներն ու պատանիները խենթանում էին հրաշեկ վարսերով, նշաձև շագանակագույն աչքերով, սլացիկ հասակով այդ դերասանուհու համար: Նա հմայիչ էր ու շքեղ: Ծնվել էր բեմի վրա քայլելու համար:

Երկրպագուներից բազմաթիվ ծաղիկներ, նամակներ ու բացիկներ էր ստանում՝ ամենախենթ և բուռն սիրո բացատրություններով:

Մի չորեքշաբթի օր՝ հերթական հաղթական ներկայացումից հետո, դոնապանը նրան բերեց մանուշակների մի համեստ փունջ, որը զարմանալիորեն քնքուշ բույր ուներ և կարծես ինչ-որ խորհրդավոր աշխարհի համր մունետիկն էր: Ջեննին հիացավ, ըմբռշխսեց մանուշակների ու հեքիաթի աշխարհից եկող բույրը:

— Ո՛վ է բերել այս փունջը, — հարցրեց աղջիկը:

— Մի համեստ ուսանող, — եղավ պատասխանը:

Եվ այդպես վեց ամիս անընդմեջ, ամեն չորեքշաբթի նույն ուսանողը բերում էր մանուշակների փունջը: Ջեննին վարժվել ու սիրում էր չորեքշաբթի օրվա այդ խորհրդավոր ընծան:

Մի օր էլ նա խնդրեց դոնապանին, որ վերև թողնի համեստ երկրպագուին: Ջեննին սրտի թրթիռով էր սպասում նրան: Զարմանալի բան: Այդ օրը մանուշակներ չկային, չնայած դարձյալ չորեքշաբթի էր:

Ջեննին անհանգստացավ, սրդողած հարցուփորձեց դոնապանին: Վերջինս ասաց, որ այդ օրը ուսանողը չի երևացել: Անցավ էլի մի չորեքշաբթի. ուսանողը չկար:

Ջեննին մեկնեց հյուրախաղերի: Երկու ամիս նա բացակայում էր Փարիզից: Երբ վերադարձավ, գտավ մի նամակ, որով նրանից տեսակցություն էր խնդրում մի գնդապետ:

— Օրիորդ, ես ուզում եմ հանձնել իմ որդու նամակները, որոնք ձեզ են հասցեագրված: Ավանդ, նա այլևս չի կարող դա անել: Արդեն երկու ամիս է, ինչ նա հերոսացել և նահատակվել է Մադագասկարում:

Ջեննին հուզված ու ալեկոծված նայում էր նամակների տրցակին: Նա դեռ ոչ մի խոսք չէր ասել:

— Օրիորդ, ես հասկանում եմ ձեր շփոթմունքը: Բայց կարծում եմ՝ դուք կհասկանաք իմ որդուն, որը պաշտում էր ձեզ, և որի միակ մխիթարությունը ամեն չորեքշաբթի ձեզ մի համեստ փունջ մանուշակ բերելն էր:

Դերասանուհին սթափվեց իր հուշերից: Նա մտովի ժպտաց իր պատանի ասպետին, աղոթք մրմնջաց ու քայլեց դեպի մուտքը:

Այսպես՝ ամեն չորեքշաբթի:

ՊԼԱՆ

1. Ութսունամյա դերասանուհին:
2. Ծաղկի խանութում:
3. Մոնպառնասի գերեզմանատանը:
4. Քսաներկուամյա դերասանուհին:
5. Անծանոթ երկրպագուն և նրա մանուշակները:
6. Խնդրանք դոնապանին:
7. Տեսակցություն գնդապետի հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

լռելյայն, խոնարհ և հիացական ողջույններ, հոգաձություն, մարմարե սալիկ, թաղվել խորհրդածությունների մեջ, հրաշեկ վարսեր, նշածն շագանակագույն աչքեր, սլացիկ հասակ, ամենախենթ և բուռն սիրո բացատրություններ, քնքուշ բույր, խորհրդավոր աշխարհի համր մունետիկ, ըմբռնվել բույրը, սրտի թրթիռ, սրդողած հարցուփորձել, նամակների տրցակ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: *Անդրե Մորուան (1885–1967) ֆրանսիացի նշանավոր գրող է, կրթությամբ փիլիսոփա: Մասնակցել է թե՛ Առաջին, թե՛ երկրորդ համաշխարհային պատերազմներին: Գրել է հումորիստական վեպեր, նորավեպեր, հեքիաթներ: Աշխարհի ընթերցասեր հասարակությունը Մորուային ճանաչում է Շելլիի, Բայրոնի, Ժորժ Սանդի, Վիկտոր Հյուգոյի, Դյումաների, Բալզակի մասին գրած կենսագրական վեպերով:*

ԱՆՁՆՎԵՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Ըստ Օսկար Ուայլդի

Մի փոքրիկ խրճիթում մեն–մենակ ապրում էր Փոքրիկ Հանս անունով մի շատ բարի և սիրալիր պատանի: Նա ամբողջ օրը աշխատում էր, աճեցնում հիասքանչ գույնզգույն ծաղիկներ: Փոքրիկ Հանսը շատ բարեկամներ ուներ: Նրանք բոլորը շատ սիրում էին կլորադեմ, ժպտերես պատանուն: Հանսի ամենանվիրված բարեկամը մի մեծատուն էր՝ Ջրաղացպանը: Սա անչափ հարուստ էր, ամբարները պայթում էին հացահատիկի առատությունից, նկուղում տակառներով գինի, չորացրած ու թարմ մրգեր ուներ: Ջրաղացպանը անձնվեր էր և շատ էր սիրում Հանսին: Օրինակ, երբ անցնում էր նրա սքանչելի այգու կողքով, անպայման կանգ էր առնում, մտնում ներս, Հանսի ծաղիկներից մի հսկա փունջ էր կազմում կամ էլ գրպանները լցնում զանազան մրգերով:

Հանսը գարնանը, ամռանն ու աշնանը անընդհատ տքնում էր այգում և հոգս ու վիշտ չունէր: Սակայն ցրտաշունչ ձմռանը, երբ նա ծաղիկ ու պտուղ չունէր, որ շուկա տանէր, տառապում էր ցրտից ու քաղցից: Բացի դրանից՝ ձմռանը նա շատ միայնակ էր: Անձնվեր բարեկամը՝ Ջրաղացպանը, երբեք չէր այցելում նրան:

— Պետք է անհանգստացնել փոքրիկ Հանսին, չէ՞ որ նա հիմա շատ վատ վիճակում է, — ասում էր Ջրաղացպանը իր կնոջը: — Գարնանը կայցելեն Հանսին, և նա իմ գամբյուղը կլցնի ծաղիկներով:

— Բարեկամս, դու ոսկի սիրտ ունես: Միշտ մտածում ես ուրիշի մասին, — քնքուշ ժպիտով ասում էր նրան կինը:

Ձմեռն անցավ: Հանսը հրաշքով չմեռավ այդ դաժան ցրտերին:

Գարունը թառեց նրա խղճուկ տնակի քիվին: Հազիվ էր Հանսը մտել պարտեզ, որ խնամի իր լռակյաց, բայց անուշիկ կանաչ բարեկամներին, երբ Ջրաղացպանը կանգնեց նրա դիմաց: Ողջունեց Հանսին, շուրջը նայեց և խնդրեց, որ իր գամբյուղը լիքը լցնի գարնան առաջին ծաղիկներով:

Հանսը մոլորվեց: Նա որոշել էր վաճառել այդ ծաղիկները և դրանց փողով գրավատնից ազատել իր սայլը, ոսկե կոճակները և էլի մանր-մունր բաներ:

Երբ Ջրաղացպանը սայլակի մասին լսեց, մեծահոգաբար ասաց, որ իր հին ու կոտորված սայլակը նրան կտա, միայն հիմա թող իր գամբյուղը լցնի ծաղիկներով:

— Դուք չափազանց առատաձեռն եք, — ուրախությունից փայլելով՝ ասաց Հանսը:

Այդ չարաբաստիկ գարնանը, հենց որ Հանսը մտնում էր պարտեզ՝ խնամելու իր սիրելի ծաղիկները և ծառերը, հայտնվում էր Ջրաղացպանը և գործի դնում նրան:

— Բարեկամս, մի մոռացիր, որ քեզ եմ տալիս իմ սայլակը:

Գարնան մի մրրկահույզ գիշեր էր: Քամին ոռնում էր և շաչում, ստեպ-ստեպ երկինքը պատռում էր կայծակի կուրացուցիչ շեղքը, իսկ երբեմն էլ քամու ոռնոցին միանում էր ամպերի որոտը:

Հանսը նստել էր իր երերուն տնակում՝ ականջալուր հողմի ահռելի գոռոցներին: Մեկ էլ խրճիթի դուռը ծեծեցին: Շենքին կանգնած էր Ջրաղացպանը՝ լապտերը ձեռքին:

— Հանս, վազիր բժշկի հետևից, տղաս երկրորդ հարկից ընկել է և ոտքը կոտրել:

— Իհարկե, սիրելի բարեկամ, միայն ինձ տվեք ձեր լապտերը:

— Ես հաճույքով կտայի քեզ լապտերը, բայց ես վախենում եմ՝ մի բան պատահի: Հետո, բարեկամս, մի մոռացիր, որ պատրաստվում եմ քեզ նվիրելու իմ սայլակը:

Հանսը ոչինչ չասաց և փոթորկի ու ականակիր գիշերվա մեջ վազեց դեպի բժշկի տունը: Մի կերպ տեղ հասավ, լուր տվեց բժշկին:

Տունդարձի ճանապարհը կորավ Հանսի չար բախտից: Նա ընկավ ձախիձը և խեղդվեց:

Շատ սգացին նրա հարևանները, շատ լացուկոծ արին: Մորմոքելով ու սգալով հանդերձ՝ չկարողացան հասկանալ, թե ինչու էր Փոքրիկ Հանսը գիշերով հայտնվել գյուղից դուրս ընկած վայրում՝ ձախիձների մեջ:

ՊԼԱՆ

1. Փոքրիկ Հանսը. նրա այգին
2. Նրա բարեկամ Ջրաղացականը:
3. Ձմռան ցուրտ օրեր:
4. Ջրաղացականի խոստացած նվերը:
5. Մի փոթորկալի գիշեր:
6. Հանսի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապրախարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

հիասքանչ, գույնզգույն ծաղիկներ, դրախտային վայր, աչք շոյել, մեծատուն հարևան, ամբարները պայթել, ինչք ու ունեցվածք, անընդհատ քնել, գարունը թառել, քիվ, գարնան մրրկահույզ գիշեր, թրատել, կայծակի շեղք, ականջալուր հողմի գոռոցներին, ականակիր գիշեր, տունդարձի ճանապարհ:

ՍՈՒՍԱԿՆ ՈՒ ՎԱՐԴԸ

Ըստ Օսկար Ուայլդի

Սոխակը նստել էր կաղնու ճյուղին: Նա նստել ու մտորում էր, իսկ մտքում սիրո խորհուրդն էր: Այսօր առավոտ նա լսել էր ուսանողի բողոքը: Նա ալ կարմիր վարդ էր փնտրում, որ նվիրեր իր սիրած աղջկան:

«Իսկական սերը հրաշք է»,— մտածեց սոխակը, ապա ուղղեց մույթ թևիկները և թռավ վեր: Կանաչ մարգի կենտրոնում վարդի մի թուփ կար: Թռավ նստեց վարդենու թփին և խնդրեց նրան.

— Ինձ մի կարմիր վարդ տո՛ւր, և ես քեզ համար կերգեմ իմ ամենալավ երգը:

— Իմ վարդերը ճերմակ են, ինչպես ծովի փրփուրը, ինչպես ամենաբարձր լեռան կատարը զարդարող ձյունը:

Սոխակը ճախրեց օդում և տեսավ վարդի մի ուրիշ թուփ, որ աճել էր արևալին ժամացույցի կողքին:

Նույն խնդրանքով դիմեց նա այդ վարդենուն, բայց պարզվեց, որ նրա վարդերը դեղին են, ինչպես արևի շողերը, ինչպես գեղեցկուհու դեղձան վարսերը:

Սոխակը նստեց այն վարդենու ճյուղին, որ աճում էր ուսանողի պատուհանի տակ:

— Տո՛ւր ինձ մի ալ վարդ,— խնդրեց սոխակը:

— Իմ վարդերը կարմիր էին, այո՛, էին,— հառաչեց վարդենին,— բոտր էին, ինչպես արյունը, որ հոսում է քո երակներով: Բայց հիմա դրանք գունատվել են ձմռան ցրտից: Իմ երակներում սառել է արյունը, ցուրտը սպանել է իմ կոկոնները, փոթորիկը կտարել է իմ ճյուղերը:

— Միայն մեկ հատիկ կարմիր վարդ, խնդրում եմ,— ասաց սոխակը:

— Եթե դու ուզում ես ունենալ կարմիր վարդ, պետք է դու ինքդ ստեղծես այն լուսնի կաթնագույն լույսի տակ ու քո երգով: Բացի դրանից՝ դու պետք է ջերմացնես վարդը քո սրտի արյունով: Ամբողջ գիշեր դու պիտի երգես, և իմ փուշը կծակի քո սիրտը, և քո տաք արյունը կթափանցի իմ երակները և կդառնա իմ արյունը:

— Մահը թանկ գին է մեկ վարդի համար,— բացականչեց սոխակը:— Բայց սերը թանկ է կյանքից:

Երբ երկնականարի վրա սահեց գունատ լուսինը, սոխակը թռավ եկավ վարդենու մոտ: Նստեց նրա ճյուղին և իր փոքրիկ կրծքով սեղմվեց փշին: Պաղ լուսինը լսում էր սոխակի երգը և ավելի էր վար կախում իր գունատ դեմքը: Ողջ գիշեր երգում էր սոխակը, իսկ փուշը ավելի ու ավելի խորն էր մխրձվում նրա կուրծքը, և արյունը կաթ-կաթ հոսում էր սոխակի մարմնից դեպի վարդը: Վարդենու ամենավերին ճյուղին գոյացավ մի կոկոն: Սոխակը երգում էր երգ երգի հետևից, և մեղեդուն ներդաշնակ բացվում էին վարդի թերթերը:

Ավելի ու ավելի կիպ էր կաչում սոխակը փշին, և նրա երգերը հնչում էին ավելի ու ավելի բարձր: Սոխակը երգում էր անընդմեջ: Ավելի ու ավելի տանջալից էր դառնում ցավը: Բայց նա երգում էր սիրո մասին, որը գերազանցում է մահին, այն սիրո մասին, որ չի մեռնում երբեք:

Սքանչելի վարդը շիկնեց ու շառագունեց, ինչպես արշալույսը վաղորդայնին: Այ գույնով սկսեց վառվել նաև վարդի սիրտը:

Սոխակի ձայնը ավելի ու ավելի էր թուլանում: Ահա աչքերին մահվան մշուշն իջավ, ու ձայնը մարեց, հանգավ:

Գունատ լուսինը մոռացավ հեռանալ երկնականարից: Արշալույսի աղջամուղջի մեջ զվարթ շողում էր բոսոր կարմիրով զուգված վարդը:

Վաղ առավոտ ուսանողը բացեց պատուհանը և տեսավ հրաշք վարդը:

Իսկ վարդենու ոտքերի տակ հանգչում էր սոխակը՝ սրտում մի սուր փուշ:

ՊԼԱՆ

1. Սոխակի մտորումը:
2. Ուսանողի բողոքը:
3. Սոխակը ճերմակ վարդենու մոտ:
4. Սոխակի դիմումը դեղին վարդենուն:
5. Կարմիր վարդենու պայմանը:
6. Լուսնի լույսի փակ երգող սոխակը:
7. Այ գույնով ներկվող վարդը:
8. Սոխակի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասագրական գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

սիրո գաղտնիք, մտմտուք, ալ կարմիր վարդ, մութ թևիկ, ամենաբարձր լեռան կատարը զարդարող ծյուն, դեղձան վարսեր, բոսոր արյուն, ցուրտը սպանել, գունատ լուսին, մխրձվել, չքսաղ վարդի կոկոն, գերազանցել մահին, շիկնել, շառագունել, մահվան մշուշ, բոսոր կարմիր, վարդենու ոտքերի տակ հանգչել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Օսկար Ուայլդը (1854-1900) անգլիացի նշանավոր գրող և քննադատ է: Ծագումով իռլանդացի է, Դուբլին քաղաքից: Ապրել և ստեղծագործել է Լոնդոնում, հարել է սիմվոլիզմին: Գրել է բանաստեղծություններ, վեպեր, պատմվածքներ, հեքիաթներ, թատերգություններ:

«Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը մեծ ճանաչում ունի: Վեպի սցենարով կինոնկար է ստեղծված:

Ուայլդի հեքիաթները շար ինքնատիպ են, դրանք գրված են նրանց համար, «ովքեր չեն կորցրել ուրախանալու և զարմանալու ի վերուստ փրված շնորհը»:

ՏՐԴԱՏ ԵՎ ՆԱԶԵՆԻԿ

Ըստ Մովսես Խորենացու

«...գի յոյժ գեղեցիկ էր
և երգեր ձեռամբ»

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Բակուր իշխանի ապարանքը լողում էր լույսերի ծովում: Մեծ հրավերք էր կազմակերպել Սյունյաց հզոր իշխանը: Գինին գետի պես էր հոսում, սեղանները խորտիկներով և համադամ կերակուրներով էին բեռնված: Կոչնականները ուտում-խմում էին ախորժակով՝ ականջալուր նվագածուների մեղեդիներին և հայ դյուցազունների կյանքը երգող վիպերգերին:

Այդ պահին մի սրընթաց ձիավոր հասավ Բակուր իշխանի ապարանքի դարպասին և ձգեց փրփրաբաշ աշխետի սանձը:

Ծառաները Բակուր իշխանին շտապ տեղեկացրին նորեկի մասին: Իշխանը խրոխտ քայլվածքով դուրս եկավ խրախճանքի սրահից. եկողը հասարակ սեպուռի չէր, այլ հայոց Տիրան թագավորի փեսան՝ Տրդատ Բագրատունին: Բակուրը ջերմագին ողջագուրվեց Տրդատի հետ և առաջնորդեց խրախճանքի սրահ ու տեղավորեց իր կողքին: Երբ Տրդատը հագեցրեց քաղցը, կոչնականները փորձեցին տեղեկանալ, թե ինչ կա արքունիքում:

Տրդատի առնական դեմքի վրայով քամահրանքի ժպիտ սահեց: Նա ճեպով դատարկեց գինու գավը, սրբեց շուրթերը և ասաց.

— Ձեր առջև նստած է մի մարդ, որ խույս է տալիս հայոց արքայի ցասումից: Ես փախչում եմ Մարաստան: Բակուր իշխանից միայն այս գիշեր եմ օթևան խնդրելու, իսկ վաղորդայնին պետք է առաջ սուրամ՝ մի պահ անգամ չերկմտելով:

Տեսնելով տանտիրոջ և հրավիրվածների հարցական հայացքները՝ Տրդատը պատմեց.

— Դուք գիտե՞ք՝ ես հայոց արքայի փեսան դարձա, որովհետև այդպես էր կամենում իմ հայրը: Երանյակը՝ արքայի աղջիկը, երբեք ինձ չսիրեց, դեռ ավելին՝ անընդհատ ծաղրում և պախարակում էր ինձ նույնիսկ ծառաների ներկայությամբ: Ասում էր, որ ես բռի եմ և վայրենի, մազոտ եմ ու ստոր ծագում ունեմ: Երկու օր առաջ, երբ իմ անգին կողակիցը նորից սկսեց ինձ ծաղրել, ես քաշեցի այդ անամոթի սանձերը. մի լավ գանահարեցի, կտրեցի ոսկե գանգուրները և դուրս արեցի ննջարանից:

Բակուր իշխանի հյուրերը ապշած նայում էին և հիանում նրա քաջությամբ ու առնացի բնավորությամբ:

Հենց այդ պահին սրահ խուժեց Բակուրի սուրհանդակը և գուժեց հայոց Տիրան արքայի մահը: Տրդատը ելավ տեղից, գինով գավը բարձրացրեց գլխից վեր և բարձրագույն շնորհակալ եղավ աստվածներին: Գինարբուրք դարձավ ավելի խելահեղ. կոչնականների աչքերը մշուշվել էին գինուց և հոգիներին իջած խենթությունից:

Մեկ էլ վերնահարկից սկսեց իջնել մի կին:

— Վարձակը, վարձակը, տեղ բացեք, վարդ տեղացեք, Նազնիկն է պարելու:

Երաժիշտները հնչեցրին պարի եղանակ: Նազենիկը նազանքով բարձրացրեց ձերմակ ձեռքերը, ոտքերը հանդարտ սկսեցին շարժվել, և մեկ էլ, մեղեդու հետ ձուլված, վարձակը սկսեց ճախրել սրահով մեկ՝ սքանչացած հյուրերի հիացական բացականչություններից շիկնած: Նրա մազերը և թափանցիկ քողը ծածանվում էին հյուրերի գլխավերևում:

Տրդատը նայում էր անթարթ, ձեռքի մեջ ճգնում էր մի նուռ: Երբ Նազենիկը վերջին ճախրն արեց օդում, Տրդատը վեր թռավ տեղից, գրկեց նրան, բերեց, նստեցրեց ծնկներին և իր իսկ գավով նրան գինի խմեցրեց: Ապա սկսեց զգվել և փայփայել պարուհուն:

— Բակուր իշխան, ի՞նձ տուր այս կնոջը:

Բակուրը զայրույթից նախ կարկամեց, ապա հաղթահարեց շփոթմունքը և կտրուկ մերժեց Տրդատին: Բազրատունին ելավ, հափշտակեց մրգով լի սկահակը և նետեց Բակուրի վրա: Կոչնականները խառնվեցին իրար, շատերը հանեցին իրենց սրերը:

Բայց Տրդատը մի բան շնջաց Նազենիկի ականջին և դուրս թռավ սրահից, հեծավ իր ձին և արշավեց ապարանքից հեռու:

Լուսաբացի գովը սկսեց շոյել պատուհանի առջև սպասող կնոջ դեմքը: Նազենիկը ողջ գիշեր չի քնել և սպասում է իր ասպետին, որին սիրեց միանգամից ու ինքնամոռաց:

Ահա աղջամուղջի մեջ լսելի եղավ սմբակաների ձայն: Վերնահարկի պատուհանից Նազենիկը ցատկեց իր սիրեցյալի գիրկը, ու ամեհի նժույգը ուղղակի խենթացավ գեղուհու հայումից: Առանց հրամանի նա սուրաց առաջ՝ իր մեջքին տանելով սիրահարներին:

ՊԼԱՆ

- | | |
|---------------------------------------|------------------------------|
| 1. Խրախճանք Բակուր իշխանի ապարանքում: | 6. Տրդատի պահանջը: |
| 2. Անկոչ նորերկր: | 7. Բակուրի թունուր մերժումը: |
| 3. Նրա պարմությունը: | 8. Խառնաշփոթ: |
| 4. Տիրան արքայի մահվան գույժը: | 9. Նազենիկի փախուստը: |
| 5. Նազենիկ վարձակը. նրա պարը: | |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապահպրակին գրել՝

ա) հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

լրդալ լույսերի ծովում, գինին հոսել գետի պես, համադամ կերակուր, կոչնական, ուտել-խմել, ականջալուր մեղեդիներին, փրփրաբաշ աշխետ, հասարակ սեպուհ, քամահարանքի ժպիտ, ճեպով դատարկել, ծաղրել, պախարակել, ազնվազարմ կին, գանահարել, հզոր և պարթև մարդ, առնացի բնավորություն, գուժել, հոգիներին մշուշ իջնել, մեղեդու հետ ձուլված կին, սքանչացած հյուրեր, վերջին ճախր, զգվել, փայփայել, զայրույթից կարկամել, սկահակ, ամեհի նժույգ:

բ) հապուկ անունները.

Տրդատ Բագրատունի, Սյունյաց Բակուր իշխան, Երանյակ, Նազենիկ, Տիրան թագավոր, Մարաստան:

գ) Մովսես Խորենացուց վերցված բնաբանը. «...զի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ»:

2. Դասարանում ընթերցել հապավածներ Դանիել Վարուժանի «Հարձը» պոեմից:

ՍՊԱՍՈՒՄ

Ըստ Մուշեղ Գալշոյանի

Կոմիտասը ելավ հյուրանոցից, վերարկուի օձիքը բարձրացրեց, ձեռքերը խոթեց գրպանները և քայլեց արագ ու ճկուն: Դեկտեմբերի կեսն էր. Փարիզի փողոցներում վնգստում էր ցուրտը: Միսած օր էր: Եվ փարիզցիները դուռ ու լուսամուտ գոցել էին օրվա դեմ: Փողոցի շրջադարձում Կոմիտասը մայթին ընկած մի դրամապանակ տեսավ: Հնամաշ էր, պարունակությամբ աղքատ՝ եղած-չեղածը տասը ֆրանկ: «Խեղճ ու կրակ մեկն է կորցրել,— տխուր մտածեց նա և նայեց շուրջը-լորը,— այս ցուրտ օրվա ապրուստն է կորցրել: Կորոնի, կդառնա, հետ կգա: Մի քիչ սպասեմ»:

Նայեց ժամացույցին: Տասներկուսին քառորդ էր պակաս: Իսկ ժամը տասներկուսին Մարգարիտը ճաշի է հրավիրել:

Հանդարտ սկսեց քայլել՝ փողոցի շրջադարձն ու հետ, շրջադարձն ու հետ՝ ուշադիր փողոցով անցնող հատուկենտ անցորդներին: Եվ համոզված էր, որ կգա նա, ու ինքը իսկույն կձանաչի նրան: Կձանաչի, որովհետև ինքը լավ գիտի քաղցի և պաղի դեմքը:

Հիշեց Բեռլինը, ուսանելու տարիները:

1896 թվականին էր, էլի ձմեռ: Բարեբարի ուղարկելիք ամսականն ուշանում էր: Դուրս էր եկել՝ մի ծանոթից պարտք խնդրելու: Մեկ էլ ոտքերի տակ նշմարեց կես մարկ, վերցրեց ու ավելի մոլորվեց: Կես մարկով ոչինչ չես գնի:

Բայց կարելի է: Կես մարկով վիճակախաղի տոմս գնեց և շահեց հարյուր մարկ:

Այդ հուշը մի պահ կախվեց գլխավերևում, մի միտք լուսավորեց դեմքը: Նա ուրախացավ: Արագ, արագ. քանի դեռ չի հայտնվել նա:

Կոմիտասը գրպանից հանեց հարյուր ֆրանկանոց թղթադրամ և դրեց տասը ֆրանկի տակ: Ապա ժպտաց, ձեռքերը շփեց, խոր շունչ քաշեց. թվաց՝ ազատվել է մի հին ու ծանր պարտքից: Հանկարծ հասկացավ, որ տասը տարի առաջ վիճակախաղում շահածը պարտք է համարել: Որովհետև հարյուր մարդ հուսախաբ էր եղել, իսկ ինքը շահել էր:

Արդեն չորս ժամ է, որ նա սպասում էր: Չորս ժամ է՝ ետ ու առաջ էր անում փողոցով:

Ու եկավ նա: Դեռատի կին էր՝ այր մարդու բաճկոնով, այր մարդու ոտնամաններով, բզկտված գլխաշորով: Մանկամարդ կնոջ աչքերում բողբոջ կար, և

հույսը լացի պես կախվել էր շուրթերից ու շողում էր: Նա քայլում էր տրտում ու անվստահ՝ պեղելով մայթը, փնտրելով, գննելով:

— Օրիորդ,— կինը ցնցվեց տղամարդու ձայնից.— օրիորդ, դուք որևէ բան կորցրել եք:

— Այո՛, դրամապանակս եմ կորցրել,— ասաց ցածրածայն:

Կոմիտասը ձեռքը տարավ գրպանը և կնոջը մեկնեց դրամապանակը:

ՊԼԱՆ

1. Ձմռան մի ցուրտ օր:

4. Դեռափի կինը:

2. Կոմիտասը մի դրամապանակ է գտնում:

5. Կորուսված է:

3. Վերհուշ. շահած հարյուր մարկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադասիւրակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

օձիք, ցուրտը վնաստում էր, մրսած օր, գոցել օրվա դեմ, շուրջբոլորը, հատուկ ենտ, հուշը կախվել գլխավերևում, հարյուր ֆրանկ, հուսախաբ լինել, գլուխը կոծել, դեռատի, մանկամարդ կին, բզկտված գլխաշոր, պեղել մայթը, հույսը լացի պես կախվել շուրթերից:

2. Ունկնդրել կոմիտասյան մեղեդիներ:

ԽՈՊՈՏ ՁԱՅՆՈՎ ՀԱՅՐ

Ըստ Շառլ Ազնավուրի

1924 թվականի մայիսի 22-ին Փարիզի ծննդատներից մեկում լույս աշխարհ եկավ Քնար և Միշա Ազնավուրյանների միակ մանչ գավակը: Մայրը կամեցել է, որ որդին Շահնուր կոչվի: Բայց ֆրանսուհի մանկաբարձը ոչ մի կերպ չի կարողացել արտասանել այդ անունը և մանկանը կնքել է Շառլ:

Ուրախ-զվարթ ընտանիքում է մեծացել Շառլը, նրա ծնողները երգում էին հայկական ժողովրդական երգեր և զուրկ չէին դերասանական շնորհքից: Այդ էին վկայում սիրողական ներկայացումները, որոնց մանկուց ականատես էր Շառլը:

Աշխատասեր ու ստեղծագործող Շառլը փորձում է արվեստի շատ ոլորտներ՝ երգ, պար, թատրոն, կինո, բանաստեղծություն և երաժշտություն: Շառլը հպարտությամբ կարող է ասել, որ երբեք չի հանգստացել, որ իր կյանքը եղել է ծանր, երկարատև աշխատանք: Բայց հանդիսատեսը դեռ չի հանձնվում: Սիրով ընդունում է երգահան և բանաստեղծ Ազնավուրին, երբ դրանք կատարում են ժամանակի նշանավոր երգիչներ և երգչուհիներ Էդիթ Պիաֆը, Ժան Բեկոնը և այլք:

Երգիչ Ազնավուրը դեռ երկար ժամանակ ստվերում է մնում: Շառլի խոպոտ և խզված ձայնը մարդկանց զարմացնում և հիասթափեցնում է: Բայց համառ է Ազնավուրը, նա գիտի, որ մի օր հաղթելու է հանդիսատեսին և ստիպելու է հիանալ իրենով:

1959 թվական, Փարիզ, «Օլիմպիա» համերգասրահ: Արդասենյակի պատերը բանտ են հիշեցնում: Այսօր վճռական օր է Շառլ Ազնավուրի համար: Այսօր նա մեն-մենակ կանգնելու է Փարիզի պահանջկոտ հասարակության առջև: Շատ է տառապել այս փոքրամարմին հայը, շատ է տքնել, մինչև հասել է այստեղ: Այսօր առաջին անգամ համերգասրահի մուտքի առջև դրվել է իր ազդագիրը:

Հիմա նա հիշում է անցած քառասուն տարիները: Իր ելույթները էդիթ Պիաֆի հետ, երբ երկրպագուները շրջապատում էին այդ փոքրամարմին, բայց տաղանդավոր կնոջը, իսկ ինքը անտեսված մնում էր մի անկյունում:

Ահա, ահա, կսկսվի:

Հանկարծ նվագախումբը սկսում է համերգի առաջին մասի նախերգանքը: Շառլը վախից ավելի է փոքրանում, կոկորդը չոր է, սիրտը թպրտում է: Հագնվում է, կարգի է բերում փողկապը, ոչ մի կերպ չի կարողանում կապել կոշիկների քուղերը:

Բեմ դուրս գալու պահն է: Սարսափահար է, ու դա ավելի է կատաղեցնում Ազնավուրին:

Վերջապես նրան հրում են բեմ: Լույսերը կուրացնում են աչքերը: Քաղաքավարի ծափերը բնավ էլ չեն սրտապնդում: Մարմինը վառվում է, սրտխառնուք է գգում: Մի ծանձ է անցնում կողքով. հանկարծ կուլ չտամ:

Մեկ էլ հնչում է ձայնը, իր ձայնը. ինքը երգում է:

Դահլիճը չի տեսնում: Հսկայական վիհ է բացված իր առջև, ավելի շատ գգում է, քան լսում: Լավ գիտի, որ մթի մեջ դարանակալ՝ ողջ Փարիզն է ուշադիր ու սառը հետևում իրեն: Նա եկել է այստեղ՝ արձանագրելու կուռքի ոչնչացումը կամ նոր աստղի ծնունդը:

Վեցերորդ երգն էլ է վերջանում: Մնում է յոթերորդը, վերջինը: Յոթերորդ երգից առաջ Ազնավուրը արագ դուրս է գալիս՝ հանելով բաճկոնը, քանդելով վերնաշապկի կոճակները: Բեմ է վերադառնում՝ դանդաղ հագնվելով, ու երգում է.

*Ես առույգ էի, վազահ և ուժեղ,
Ես ձայն ունեի, ունեի մպրեք,
Բայց իմ երգերը լոկ ինձ հուզեցին:
Բայց ես մեղավոր չեմ,
Մեղավորը նա է, ամբոխը,
Որն այնպես էլ ոչինչ չհասկացավ:
Ես շար մաքուր էի կամ շար էի նոր՝
Հասկացվելու համար:*

Երգի ավարտի հետ արդեն հագնված, մեջքով կանգնած է դեպի դահլիճը: Լույսերը հանդարտ մարում են: Բեմի խորքում վարագույր է բացվում, լուսարձակները շլացուցիչ լույսով լցնում են դահլիճը և պարուրում հանդիսատեսին: Կարծես ամեն մի հանդիսատես հենց ինքն է երգիչը, ինքն է բեմի վրա: Իսկ Ազնավուրը օրորվում է մեղեդու, թույլ լույսի ներքո, մինչև որ դանդաղ իջնում է նախաբեմի վարագույրը:

Ազնավուրը կանգնած է՝ երկընտրանքի ու վարանումի ահը սրտում: Նրա ականջին է հասնում բազկաթոռների աղմուկը: «Գնում են»,— անցնում է երգչի մտքով, ու սիրտը ծակում է:

Վարագույրը բարձրանում է: Ահա այդ ահավոր հանդիսատեսը, որ լուռ կանգնած է նրա առջև: Հետո որոտընդոստ ծափերից դղրդում է դահլիճը:

Շառլ Ազնավուրը՝ ազգությամբ հայ այդ տաղանդավոր մարդը, իր խոսքով ձայնով ծնկի էր բերել աշխարհի ամենաքմահաճ քաղաքը՝ Փարիզը:

ՊԼԱՆ

1. Շառլ (Շահնուր) Ազնավուրյանի ծնունդը:
2. Ազնավուրյանների ընտանիքը:
3. Չարքաշ աշխատանք դեռ մանկուց:
4. Երգիչ Ազնավուրը հիասթափեցնում է:
5. 1959 թվական, Փարիզ. առաջին ինքնուրույն համերգը:
6. Երգչի հաղթանակը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադասագրական գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) ֆրանսուիի մանկաբարձ, դերասանական շնորհք, սիրողական ներկայացում, տաժանակիր աշխատանք, խռոպոտ, խզված ձայն, ազդագիր, նվագախումբ, նախերգանք, փողկապ, կոշիկի քուղեր, հսկայական վիի, բաժկոն, լուսարձակ, շլացուցիչ լույս, երկընտրանք և վարանում, որոտընդոստ ծափեր, ծնկի բերել, ամենաքմահաճ.

բ) Փարիզ, Շառլ Ազնավուր, Էդիթ Պիաֆ, Ժան Բեկոն:

2. Դասարանում ունկնդրել Շառլ Ազնավուրի երգերի ձայնագրությունները:

ՎԵՐՁԻՆ ՏԵՐԵՎԸ

Ըստ Օ'Հենրիի

Նյու Յորքի աղքատ արվարձանում արվեստանոց էին վարձել երկու ջահել նկարչուհիներ՝ Սյուն և Ջոաննան: Նրանք ծանոթացել էին մի սրճարանում ընթերլիս: Ջրուցել էին, և պարզվել էր, որ նույն տեսակետն ունեն արվեստի, աղցանի և նորածն թեզանիքների մասին: Եվ ընկերացել էին: Արդյունքում՝ ընդհանուր արվեստանոց աղքատիկ թաղամասի եռահարկ աղյուսե շենքի վերին հարկում:

Դա մայիս ամիսն էր: Իսկ հիմա նոյեմբերն է: Ցուրտ է, մռայլ երկինքը շարունակում է խոժոռվել ու դժգոհել: Իսկ աղքատիկ թաղամասում հյուր է պարոն թոքաբորբը:

Բարալիկ ու քնքուշ օրիորդ Ջոաննային էլ դիպավ այդ զզվելի պարոնի գավազանը: Նա անկողին ընկավ: Ահա պառկած է Ջոաննան անշարժ. անթարթ ու անթթիթ նայում է դիմացի աղյուսե շենքի պատին:

Մի անգամ՝ առավոտյան, բժիշկը հերթական այցից հետո Սյունին կանչեց միջանցք և ասաց.

— Ես արեցի հնարավոր ամեն ինչ, նա կանոնավոր բուժում է ստացել: Հիմա արդեն պետք է սկսվեր ապաքինումը: Դժվար է բուժել այն մարդուն, որը գոր-

ծում է հոգուս գերեզմանափորի և ոչ թե հոգուս բժշկի: Ձեր օրիորդը որոշել է, որ ինքն այլևս չի բուժվի: Ինչի՞ մասին է նա մտածում:

— Նա ուզում էր յուղաներկով ծով նկարել:

— Յուղաներկով: Դատարկ բան: Իսկ կարող է՝ մտածում է որևէ տղամարդու մասին: Անպատասխան սեր, կոտրված սիրտ և այլն:

— Տղամարդ, ո՛չ, ո՛չ: Մի՞թե տղամարդն արժանի է այդպիսի տառապանքի:

— Այդ դեպքում նա շատ է թուլացել: Եթե իմ հիվանդը արդեն հաշվում է իրեն գերեզմանատուն ուղեկցող մեքենաները, ապա հիսուն տոկոսով պակասում է ցանկացած դեղորայքի ազդեցությունը: Եթե դուք կարողանաք հետաքրքրել նրան, եթե նա գոնե մեկ անգամ հարցնի, թե ինչ տեսակ թեզանիքներ են հիմա նորաձև, փրկված է:

Սյուն վազեց սենյակ, տեսավ, որ Ջոաննան պառկած է՝ դեմքով դեպի պատուհանը դարձած:

Աղջիկը ներս բերեց նկարակալը և ներկայանակը, ամրացրեց մի թերթ սպիտակ թուղթ ու սկսեց նկարը, որ նրան հանձնարարել էր մի ամսագիր:

Հանկարծ նա լսեց Ջոաննայի շշուճը: Աղջիկը հաշվում էր: Սյուն մոտեցավ ընկերուհուն: Հիվանդը, աչքերը լայն բացած, հաշվում էր դիմացի տան պատին կառչած բաղեղի տերևները:

— Վեց, — շշուջաց հիվանդը, — երեք օր առաջ դրանք համարյա հարյուր էին, հիմա մնացել է վեցը: Երբ վերջին տերևը պոկվի, ես կմեռնեմ: Ուզում եմ տեսնել, թե ինչպես է պոկվում վերջին տերևը:

Սյուն խիստ վրդովվեց ու անհանգստացավ: Նա կշտամբեց ընկերուհուն, որ իր բախտը կապել է ինչ-որ փտած տերևների հետ:

Այդ շենքի երկրորդ հարկում ապրում էր ծեր նկարիչ Բերմանը: Նա անհաջողակ մարդ էր: Արդեն վաթսուն տարեկան էր, բայց միշտ երագում էր ստեղծել իր գլուխգործոցը: Ծեր ջենտլմենը հովանավորում էր մատղաշ նկարչուհիներին:

— Ի՞նչ, — գոռաց նա, երբ լսեց Սյուի պատմածը, — մեռնել միայն այն պատճառով, որ անիծյալ բաղեղից պոկվում են տերևները: Ա՛խ, իմ խեղճ, փոքրիկ օրիորդ: Իսկ դրսում մոլեգնում էր ուշ աշնան անձրևը, որ երբեմն ձյուն էր դառնում: Երկնքի գույնը սև էր, քամին թոցնում և, իր սառը թևին առած, տանում էր ամեն ինչ: Արև չկար: Կարծես չէր եղել:

Անցավ երեք օր: Հիվանդը ամեն առավոտ ահով նայում էր պատին, ուր դեռ մեկ հատիկ տերև կար: Փոթորկալի երեք գիշեր դիմացել էր այդ վերջին տերևը:

Ջոաննան երկար նայեց տերևին, ապա շրջվեց դեպի ընկերուհին և խնդրեց արգանակ տալ: Վտանգն անցած էր: Հետո բարձերի մեջ թաղված հիվանդը խստեց ծովը նկարելու մասին:

Իսկ երկրորդ հարկում ցուրտ լռություն էր: Ծեր նկարիչը այդ առավոտ մահացել էր հիվանդանոցում: Երկու օր առաջ նա խիստ թրջվել ու թոքաբորբով էր հիվանդացել: Ոչ ոք չգիտեր, թե ուր էր նա գնացել այդ սոսկալի գիշերը:

Հարևան շենքի պատին՝ Ջոաննայի պատուհանի դիմաց, նա վերջապես կերտել էր իր գլուխգործոցը՝ բաղեղի կանաչ տերևը:

ՊԼԱՆ

1. Երկու նկարչուհիների ծանոթությունը:
2. Ընդհանուր արվեստանոց:
3. Ջոաննան հիվանդ է:
4. Անհաջողակ ծեր նկարիչը:
5. Ծեր նկարչի գլուխգործոցը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) արվարձան, աղցան, թեզանիք, մռայլ երկինք, պարոն թոքաբորբ, բարալիկ ու քնքուշ օրհորդ, անքթիթ նայել, հօգուտ, նկարակալ, ներկապնակ, մոլեգնել, ուշ աշնան արև, արգանակ, ցուրտ լուռություն, թրջվել, թոքաբորբով հիվանդանալ, սոսկալի գիշեր, բաղեղի կանաչ տերև, գլուխգործոց.

բ) Նյու Յորք, Սյու, Ջոաննա, Բերման:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: *Օ'Հենրին՝ Վիլյամ Սիդնի Պորտերը (1862-1910), ամերիկացի հայտնի գրող է, կրթությամբ՝ դեղագործ: Հրատարակել է երգիծական շաբաթաթերթ, որի էջերում տպագրել է իր առաջին գրական փորձերը: Մի կարճ ժամանակահատված ամերիկյան բանակի զանձապահ-հաշվապահ է աշխատել: Ազատագրվել է և բանօր ներկվել բանակի դրամը վապուհելու մեղադրանքով: Բանտում անգործ չի նստել. գրել է պարմվածքներ, նորավեպեր: Նրա գրիչը խիստ ինքնատիպ է. ամենալուրջ հարցերը քննարկում է զվարճալի հումորով:*

ԶԱՐԴԸ

Ըստ Գի դը Մոպասանի

Տիկին Մաթիլդը ժամանակին սիրուն և հրապուրիչ աղջիկ էր: Նա ծնվել էր հասարակ պաշտոնյայի ընտանիքում և ամուսնացել էր լուսավորության նախարարության ծառայողի հետ: Այրում էին շատ համեստ, իսկ տիկին Մաթիլդը միշտ երագում էր շքեղ հագուստների, ադամանդակուտ արդուզարդի մասին:

Մի օր նրա ամուսինը պարահանդեսի հրավեր բերեց: Տիկինը հրաժարվեց գնալուց՝ պատճառաբանելով, որ պատշաճ հագուստ չունի: Ամուսինը իր խնայած դրամը նրան տվեց, որ կինը պարահանդեսի շքեղ հագուստ ունենա:

Հագուստը պատրաստ էր, բայց տիկինը դրա հետ կրելու ոչ մի զարդ չունեւ:

— Գնա բարեկամուհուդ՝ տիկին Ֆորեստիենի մոտ, խնդրիր որևէ զարդ այդ օրվա համար, — հուշեց Մաթիլդի ամուսինը:

— Ճիշտ է, այդ մասին ես բոլորովին չէի մտածել, — բացականչեց Մաթիլդը:

Տիկին Ֆորեստիենը Մաթիլդին մի մեծ արկղիկ տվեց և առաջարկեց ընտրել: Մաթիլդը այդ արկղիկից հանեց ապարանջաններ, մարգարտե մի մանյակ, զանազան շղթաներ՝ գմրուխտով ու ակնեղենով ընդելուզված:

Վերջապես Մաթիլդը ադամանդե մի սքանչելի մանյակ գտավ. սիրտը սկսեց բաբախել, ձեռքերը դողում էին: Նա կապեց մանյակը պարանոցին և երկար ժամանակ հիանում էր ինքն իրենով:

Տոնախմբության օրը եկավ: Մաթիլդը չքնաղ էր՝ իր նոր շրջագգեստով և ադամանդե մանյակով: Բոլոր տղամարդիկ գերված էին այդ քնքուշ մանկամարդ կնոջով, անընդհատ հիացական խոսքեր էին ասում իրենց գործընկերոջ սքանչելի կնոջը: Մաթիլդը պարեց ողջ գիշեր: Դա նրա համեստ կյանքի եզակի օրերից մեկն էր:

Առավոտյան ժամը չորսին հյուրերն սկսեցին ցրվել: Ամուսինը Մաթիլդի ուսերին գցեց նրա սովորական թիկնոցը, որը բոլորովին չէր ներդաշնակում պարահանդեսի շքեղ հագուստի հետ:

Տուն վերադարձան ոտքով: Մաթիլդը հոգնած էր, բայց երջանիկ:

Հայելու առջև նա ուսերից վերցրեց թիկնոցը, և ամուսինը լսեց նրա սարսափահար ձիչը. մանյակը պարանոցին չէր: Ամուսնու հետ Մաթիլդը փնտրեց ամեն տեղ, հագուստի և թիկնոցի ծալքերում: Մանյակը չկար: Ամուսինը մի ճրագ վերցրեց և գնաց՝ փողոցներում փնտրելու:

Առավոտյան յոթին վերադարձավ ձեռնունայն:

Մյուս օրը նրանք շրջեցին բոլոր ակնավաճառների խանութներում: Միայն մի խանութում տեսան իրենց կորցրածի նման մի մանյակ: Այն քառասուն հազար ֆրանկ արժեր, բայց ակնավաճառը խոստացավ զիջել և տալ երեսունվեց հազարով:

Ամուսինը հորից մնացած տասնյոթ հազար ֆրանկ ուներ, մնացածը պարտք վերցրին, նսեմացան, մուրհակներ գրեցին, տոկոսով վերցրին: Անհրաժեշտ գումարով ներկայացան ակնավաճառին, գնեցին մանյակը, և Մաթիլդը այն արկղիկով տարավ իր հարուստ բարեկամուհուն:

Ծանր ու չարքաշ կյանքի շրջան սկսվեց: Մաթիլդը դարձավ լվացարար, ուրիշների լվացքն էր անում: Մաշկը կոպտացավ, գեղեցկությունը կորցրեց:

Տասը տարի անցավ: Բոլոր պարտքերը վճարված են: Հիմա Մաթիլդը տգեղ է և ծեր:

Մի օր զբոսանքի դուրս եկավ: Տեսավ հարուստ բարեկամուհուն, որը նույնքան գեղեցիկ ու քնքուշ էր, ինչպես տասը տարի առաջ:

Նա հազիվ ճանաչեց Մաթիլդին: Վերջինս անկեղծորեն պատմեց ողջ ճշմարտությունը: Բարեկամուհին շանթահարված լսեց և կերկերուն ձայնով թոթովեց.

— Մաթիլդ, հրեշտակս, բայց չէ՞ որ իմ մանյակի ադամանդները կեղծ էին. դա հազիվ հինգ հարյուր ֆրանկ արժենար:

ՊԼԱՆ

- | | |
|--|-------------------------------|
| 1. Հասարակ պաշտոնյայի դուստրը: | 6. Մաթիլդի հաղթանակը: |
| 2. Նրա ամուսնությունը: | 7. Կորուստ: |
| 3. Պարահանդեսի հրավեր և նոր շրջագգեստ: | 8. Պարտքեր. թանկարժեք մանյակ: |
| 4. Հարուստ բարեկամուհու մոտ: | 9. Տասը տարի անց: |
| 5. Ադամանդե մանյակը: | |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասակարգակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

շքեղ հագուստներ, ադամանդակուռ, արդուզարդ, պատշաճ հագուստ, ապարանջան, մանյակ, գմրովստով և ակնեղենով ընդելուզված շղթաներ, քնքուշ և մանկամարդ կին, սարսափահար ձիչ, ձեռնունայն վերադառնալ, քառասուն հա-

զար, երեսունվեց հազար, ակնավաճառ, մուրհակ, ծանր ու չարքաշ կյանք, հինգ հարյուր ֆրանկ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Գի դը Մոպասանը (1850–1893) ֆրանսիացի հռչակավոր իրապաշտ գրող է: Գրական աշխարհ մտել է բանաստեղծությունների գրքով: Սակայն գրական տաղանդը դրսևորվել է արձակի ժանրում: Գրել է վեց վեպ («Մի կյանք», «Սիրելի բարեկամ», «Մահվան պես հզոր» և այլն), պատմվածքների և նորավեպերի տասնութ ժողովածու, ակնարկներ, պիեսներ, հողվածներ:

ՆԱՎԱՍՏԻՆ

Ըստ Գիյոմ Ապոլինների

(սպեղծագործական փոխադրություն)

Հոլանդական մի նավ վերադառնում էր ձավա կղզուց: Մնունդ և ջուր վերցնելու համար նավը խարխիս ձգեց անգլիական մի փոքրիկ նավահանգստում:

Հենրի անունով մի նավաստի ափ իջավ այս քաղաքում իր թութակը, կապիկն ու հնդկական ընտիր գործվածքի մի հակ վաճառելու հույսով:

Հազիվ էր մի քանի քայլ արել, երբ նրա դեմ ելավ վայելչատես մի պարոն: Այդ պարոնը շատ քաղաքավարի դիմեց նավաստուն:

— Դուք վաճառում եք այդ թութակը: Վաղուց է՝ այսպիսի թութակ էի փնտրում:

Նավաստին ասաց թութակի գինը, պարոնը իր անաճայնեց և առաջարկեց հետևել իրեն, որովհետև ուզում էր գործվածքը ևս տեսնել և իր ճաշակին համեմատ գնում անել:

Հենրին շատ երջանիկ էր երկնային այդ պարզևից: Նա շահավետ առևտուր կաներ: Դրանը հիմա շատ էր պետք. հայրենիքում նրան էին սպասում մայրը և նշանածը:

Շատ երկար քայլեցին, քաղաքից դուրս եկան: Վայելչակազմ պարոնը լուռ էր ու մռայլ: Նավաստու սիրտը սկսեց կրծել տագնապի որդը:

Բայց ահա պարոնը կանգ առավ երկաթյա ցանկապատի առջև, գրպանից հանեց բանալիների տրցակը, բացեց դարպասը, և հենց որ Հենրին ներս մտավ, արագ փակեց:

Լռակյաց, անծանոթ, անկյանք տուն. այս ամենը շատ էր չարագուշակ: Բայց նավաստին ականայից հետևում էր մարդուն: Երբ մտան գավիթ, անծանոթը նավաստուն մի լապտեր տվեց և առաջարկեց սենյակ մտնել: Հենրին մտավ սենյակ:

Դուռը կողպվեց նրա վրա: Նավաստին սկսեց բախել և հրել դուռը:

Հանկարծ երդիկից լսվեց անծանոթի չոր ու հրամայական ձայնը:

— Լսեցե՞ք և հնազանդվեցե՞ք:

Նավաստին նայեց վեր և առաստաղին բացված անցքից տեսավ իր վրա ուղղված ատրճանակի փողը:

— Սենյակի խորքում վարագույր կա: Հեն քաշե՛ք,— հրամայեց վայելչակազմ անծանոթը:

ՈՒՍՈՒՑՅՈՒՆ՝ Աշակերտներին հանձնարարել շարունակել և ավարտել պատմությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Գիյոմ Ապոլիները (1880–1918) ազգությամբ լեռնասարեղծ է: Ապրել և ստեղծագործել է Փարիզում: Ֆրանսերենով գրել է բանաստեղծություններ, նորավեպեր: Բանաստեղծական արվեստի նորարար է:

ՄԻ ՔԻՉ ԿԱՆԱԶ

Ըստ Ֆրեդերիկ Բրաունի

(ստեղծագործական փոխադրություն)

Մանուշակագույն երկնքում հուրհրատում էր հսկայական բոսորագույն արևը: Հորիզոնում՝ կարմրագորշ թփերով ծածկված հարթավայրից այն կողմ, երևում էին կարմիր ջունգլիները:

Նա բացեց գոտուց կախված պատյանը և ամուր սեղմեց արեգակնային ատրձանակը: Հարյուրերորդ անգամ նա շնորհակալ եղավ իր երջանիկ աստղին այն բանի համար, որ վթարի ժամանակ հաջողվել էր փրկել այդ գեները: Բավական էր՝ մի երկու ժամ ատրձանակը պահեր արևի տակ, և նա սկսում էր կլանել էներգիա, որը հետո անջատվում էր ձգանը սեղմելիս: Առանց այդ ատրձանակի Մաքիերին չէր կարողանա հինգ տարի դիմանալ Կոյուգեր մոլորակի վրա:

Դա մի հրաշալի մոլորակ էր: Այստեղ ոչ գիշեր կար, ոչ ցերեկ: Չկային նաև տարվա եղանակներ: Ջերմաստիճանը միշտ նույնն էր. ոչ քամի կար, ոչ ամպրոպ:

Միայն մի բան էր պակասում, կանաչ գույնը: Ուտելիք ինչքան ասես կար: Այդ մոլորակում Մաքիերին միակ բանական էակն էր: Նա արդեն գրեթե հաշտվել էր իր վիճակի հետ: Բայց, Աստված իմ, ինչպես էր նա ուզում նորից տեսնել կանաչ աշխարհը՝ Երկիրը: Միակ մոլորակը տիեզերքում, որտեղ գերակշռում է կանաչ գույնը, որտեղ քլորոֆիլը բուսական աշխարհի հիմքն է:

Մաքիերին ցնցեց գլուխը և նորից նայեց շուրջը. նորից մանուշակագույն երկինք, բոսորագույն արև, կարմրագորշ հարթավայր, կարմրագորշ թփեր:

Բայց այս ի՞նչ ձայն է: Նա դեպի երկինք բարձրացրեց աչքերը և տեսավ...

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Աշակերտներին առաջարկել շարունակել և ավարտել պատմությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Ֆրեդերիկ Բրաունը (1906–1972) ամերիկացի ֆանտաստ գրող է:

ՊՐՈՖԵՍՈՐԸ

Ըստ Ռաբինդրանաթ Թագորի

(դպրոդական–ստեղծագործական փոխադրություն)

Ճեմարանում հատուկ փառք էի վայելում: Ընկերներս կարծում էին, որ գիտակեմ ու շատ զարգացած: Ցանկացած հարցի շուրջ ես միշտ ունեի իմ ուրույն տեսակետը, բանաստեղծություններ, պոեմներ ու դրամաներ էի գրում: Հանդես էի գալիս գրականագիտական զեկուցումներով: Փառքս օր օրի ուռձանում էր, ես էլ սավառնում էի՝ իմաստասիրության թևերին բազմած:

Բայց մի օր հայտնվեց հակառակորդ՝ Բամաչորո անունով մեկը: Նա սկսեց քննադատել իմ բոլոր ելույթները: Նա լուրջ տոնով և շատ հանգիստ բացատրում էր, թե ես այս հատվածը յուրացրել էի այսինչ գրողից, այն հատվածը՝ այս մեկից: Նա ամեն օր ապացուցում էր իմ գրագողությունը: Փառքս աստիճանաբար խամրեց, խախտվեց ընկերներիս հավատն իմ հանդեպ:

Այդ ժամանակ որոշեցի բոլորից մեկուսանալ և գրել մի գլուխգործոց, որը թաթախված կլիներ մարդկության, բնության, տիեզերքի հանդեպ անեզր ու անհուն սիրով:

Ես ապրում էի Գանգես գետի ափին գտնվող իմ տանը ու խորհրդածում էի: Առավոտյան շատ ուշ էի վեր կենում, օրվա երկրորդ կեսին քնում էի, զարթնում ժամը հինգին, ալարելով դուրս էի գալիս, շրջում փողոցներում: Հետո տուն էի գալիս, ընթրում և նորից մտնում անկողին:

Մի օր էլ, երբ պատշգամբից նայում էի դիմացի պարտեզին, տեսա շատ գեղեցիկ մի աղջիկ: Տեղնուտեղը սիրահարվեցի: Ողջ բնությունը սկսեց շողալ, փայլել: Կյանքը նոր ու չքնաղ իմաստ ձեռք բերեց:

Մի օր էլ համարձակվեցի հյուր գնալ հարևաններիս: Պարզվեց՝ իմ սիրած աղջիկն ապրում էր իր հոր հետ: Շատ համակրելի ու հյուրասեր մարդիկ էին: Նստում էի, ժամերով զրուցում, փորձում էի աղջկա հորը բացատրել իմաստասիրական իմ հայացքները: Սակայն միշտ զրույցի ամենաթունդ պահին Կիրոնը (այդպես էր անուրջներիս տիրուհու անունը) տեղից վեր էր կենում և ինձ որևէ գործի դնում: Մեկ պետք էր հասուն կիտրոն գտնել, մեկ մանգոյի ծառից մի պտուղ պոկել, մեկ պատին մի գամ խփել:

Իսկ ես երագում էի իմ Կիրոնին ծանոթացնել անգլիական բանաստեղծությանը, նրա համար կարդալ ու մեկնաբանել Շելլին, Բայրոնին:

Այսպես երագներով ապրում էի, սպասում էի հարմար առիթի, որ սիրտս բացեմ Կիրոնի առջև, ստանամ հոր համաձայնությունը և ամուսնանամ հետը:

Ասեմ նաև, որ ես մասնակցել էի արվեստների բակալավրի համար հայտարարված քննություններին և սպասում էի պատասխանի:

Վերջապես փոստով ստացա պատասխանը: Իմ անունը ոչ մի տեղ չկար: Ես տապալվել էի: Իսկ առաջին կարգի քննություն տվողների մեջ կարդացի իմ քնքուշ Կիրոնի անունը:

Քարացա: Մի կերպ գնացի հարևաններիս մոտ: Իմ ախոյանի՝ Բամաչորոյի հետ սենյակ մտավ ուրախությունից ու հրձվանքից փայլող Կիրոնը:

Ինձ համար ամեն ինչ պարզ դարձավ: Ես չգրեցի պոեմը, որ պատրաստվում էի հորինել Գանգեսի ափին: Բայց ես այն ապրեցի...

ՊԼԱՆ

1. Փառքի թևերին սավառնողը:
2. Ամենագեղ հակառակորդը:
3. Առանձնություն:
4. Սիրահարություն:
5. Իմաստասիրական զրույցներ:
6. Տապալում:
7. Չգրված, բայց ապրված պոեմ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Աշակերտներին հանձնարարել շարադրել իրենց դասողություններն ըստ բնագրի պահանջի:

2. Գրապահպակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

փառք վայելել, ուրույն տեսակետ, գրականագիտական, իմաստասիրական զեկուցումներ, օր օրի ուռձանալ, իմաստասիրության թևերին բազմած, պպացուցել գրագողությունը, փառքը խամրել, խախտվել հավատը, անեզր ու անհուն սեր, տեղնուտեղը սիրահարվել, համակրելի ու հյուրասեր մարդիկ, ամենաթունդ պահ, անուրջների թագուհի, պատին գամ խփել, անզլիական բանաստեղծություն, արվեստների բակալավր, ուրախությունից ու հրձվանքից փայլող:

Բառի բացատրություն

բակալավր — կրտսեր գիտական կոչում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Ռաբինդրանաթ Թագորը (1861–1941) հնդիկ նշանավոր գրող է: «Չոհաբերության երգեր» արձակ բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է Նոբելյան մրցանակի:

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Ըստ Միխայիլ Դրիշվինի

Վաղ աշուն էր: Կեչիներն ու կաղամախիները ջահել եղևինների վրա ոսկեգույն և կարմիր օղակներ էին թափում:

Շոգ ու գաղջ օր էր: Ես գիտեի, որ հիմա անտառում անթիվ–անհամար սունկ կլինի: Դրանք իրար հետևից դուրս էին գալիս խոնավ ու տաք հողից: Ջամբյուղս առած՝ անտառ մտա: Բայց այս անգամ բախտս չէր բերում: Ինչ տեսակ սունկ ասես կար, բայց սպիտակ սունկ ընդամենը երկու հատ էի գտել:

Օրը շատ տոթ էր: Կոանալուց ու շտկվելուց ներսս այրվում էր: Տանջվում էի ծարավից: Ստտերքում առվակ չկար, անձրևաբեր ամպի հետք անգամ չէր երևում: Մինչև առուն ոտքս չէր գնա, մինչև ամպ ձեռքս չէր հասնի:

Հանկարծ լսեցի, որ խիտ եղևնուտում մի գորշ թռչուն է ձկլթում:

— Խը–մեկ, խը–մեկ...

Գորշ թռչնակը՝ անձրևասերը, խմել էր ուզում: Մի հասարակ թռչնակ ու ես նույն բանն էինք ուզում:

Խիտ եղևնուտում զգույշ ու անձայն առաջ գնացի: Բարձրացրի մի ձյուղ: Անտառային այդ լուսամուտից իմ առջև մի բացատ երևաց. մեջտեղում երկու կեչի էին կանգնած: Կեչիների տակ մի կոճղ կար, իսկ կոճղի կողքին՝ հապալասի կանաչ մի թուփ, թփի տակ՝ կարմիր մի սունկ՝ դառնամատիտեղ: Կյանքումս այդպիսի մեծ սունկ չէի տեսել: Սունկը այնքան էր հասունացել, որ եզրերը վեր էին ձգվել:

Այդ պատճառով էլ սունկը նմանվել էր խոր ափսեի: Եվ այդ ափսեն պոնկեպոունակ լցված էր ջրով:

Մեկ էլ կեչու վրայից ցած թռավ մի գորշ թռչնակ, նստեց սնկի եզրին և կտուցով թըխկ ջրին: Հետո գլուխը վեր բարձրացրեց, որ կաթիլը կոկորդը գնա...

Խմեց, թռավ կեչու վրա: Մյուսը ցած իջավ, նստեց սնկի եզրին, ջուր խմեց:

Եղևնուտից այնպես զգույշ դուրս եկա, որ թռչնակներն ինձնից չվախեցան: միայն մի կեչուց մյուսը թռան: Նրանք տագնապով ծվծվացին, կարծես իրար հարցնում էին.

— Կխամի:

— Չի խամի,— պատասխանում էր մյուս թռչնակը:

— Կխմեմ, կխմեմ, բարեկամներս,— ասացի ես:

Տնքտնքալով ծունկ չոքեցի, պառկեցի փորիս: Կարիքից ստիպված՝ երկրպագեցի սնկին: Մի շնչով դատարկեցի անտառային բաժակը:

Անձրև կգա, դարձյալ սունկ-գավաթը կլցվի ջրով, թռչնակներն ու ինձ նման պապական անցորդը կխմեն ու կերկրպագեն ծեր սնկին: Հետո կհասնեն սնկի սերմերը, քամին կթոցնի, ցրիվ կտա անտառում, որ նոր սերունդ աճի:

Սա բնության հրաշքն է: Իրական հրաշքը:

Իսկ մենք՝ մահկանացուներս, հաճախ մի ծեր սնկի չափ էլ օգուտ չենք տալիս: Աչք ունենք, չենք տեսնում, ականջ ունենք, չենք լսում...

ՊԼԱՆ

1. Աշնան մի փոթ օր:

2. Սունկ հավաքողը:

3. Ծարավ մարդը:

4. Անձրևատեր թռչնակները:

5. Ջրով լցված մեծ սունկը:

6. Թռչնակները ջուր են խմում:

7. Երկրպագություն ծեր սնկին:

8. Բնության հրաշքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Աշակերտներին հանձնարարել գրել վերնագիր այս պատմության համար:

2. Գրապահպակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները:

Կեչի, կաղամախի, ջահել եղևնի, ոսկեգույն և կարմիր օղակներ, գաղջ օր, անթիվ-անհամար, տանջվել ծարավից, անձրևաբեր ամպ, խիտ եղևնուտ, գորշ թռչուն, զգույշ ու անձայն առաջ գնալ, բացատ, հապալասի կանաչ թուփ, դառնամատիտեղ, եզրերը վեր ձգվել, խոր ափսե, պոնկեպոունակ լցվել, տնքտնքալով ծունկ չոքել, երկրպագել սնկին, անտառային բաժակ, սունկ-գավաթ, պապական անցորդ, թոցնել, ցրիվ տալ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Միխայիլ Պրիշվինը (1873-1954) ոռու գրող է, բնության նուրբ երգիչ:

ՄԵՆԱՄԱՐՏ

Ըստ Ջեյ Լոնդոնի

(սպեղծագործական մուտքով փոխադրություն)

Մի տրորված արահետ տանում էր դեպի սառցանցք: Չորս կողմում խոր ու փափուկ ձյուն էր: Մարդկանց լռակյաց շարանը շարժվում էր կածանով: Նրանց հետ քայլող քահանան իր սև սքեմով թաղման տեսք էր տալիս թափորին:

Մենամարտի շտապող երկուսը լուռ էին ու մռայլ: Նրանք հոգու խորքում զարմանում էին իրենց ընկերների վրա: Երկուսն էլ ենթադրում էին, թե ընկերները կվիճեն, կբողոքեն, կարեկցանք ու ցավ կդրսևորեն: Այս լուռ համակերպումը խիստ վիրավորում էր նրանց. այսպիսի անբարբառ համաձայնության չէին սպասում: Ընկերները կարծես տոնակատարության էին գալիս:

— Ինչ հեռավորությունից ենք կրակելու, Բեթլզ,— հարցրեց Լոնը,— հարյուր, թե՛ հիսուն քայլից:

— Հիսուն քայլից,— չոր նետեց Բեթլզը:

Հենց այդ պահին նա տեսավ ընկերներից մեկի՝ Քիդի թևին անփութորեն փաթաթված պարանը:

— Իսկ ի՞նչ ես անելու այդ պարանով, Քիդ,— հարցրեց Բեթլզը:

Քիդը նրան պատասխանի չարժանացրեց, միայն սկսեց շտապեցնել, որ արագացնեն, կրակեն իրար վրա: Մնացածները ևս, ամեն մեկն իր ձևով, անհամբերության նշաններ ցույց տվեցին:

— Բայց ինչի՞ համար է պարանը, Քիդ,— անհանգստացած խոսեց Լոնը:

— Այս պարանը երկրորդի համար է,— դժկամորեն, բայց հաստատական ձայնով ասաց Քիդը:

— Ո՞ւմ նկատի ունես,— բամբ ձայնով ոչ այն է՝ հարցրեց, ոչ այն է՝ աղերսեց Բեթլզը:

— Լսիր, Լոն, դու էլ լսիր, Բեթլզ: Մենք քննարկեցինք ձեր այդ փոքրիկ վիճաբանությունը և մի որոշում կայացրինք: Մենք իրավունք չունենք արգելելու ձեր մենամարտը: Սակայն այնպես կանենք, որ սա առաջին և վերջին մենամարտը լինի մեր փոքրիկ քաղաքում: Ձեր երկուսից նա, ով կենդանի մնա, կկախվի մոտակա ծառից: Իսկ հիմա գործի անցեք:

Լուռ կանգնել էին մարդիկ: Երկինքն ավելի էր ցածրացել՝ գետնին շաղ տալով սառնամանիքի բյուրեղյա փռշին: Լոնը և Բեթլզը կանգնել և սևեռուն նայում էին Քիդի դեմքին: Սակայն այդ դեմքն անթափանց էր սֆինքսի պես:

Նրանք լավ էին ճանաչում իրենց ընկեր Մելմութ Քիդին. նրա խոսքը խոսք էր: Կենդանի մնացողը հենց Քիդի ձեռքով էր կախվելու:

Հանկարծ մենամարտողները իրենց ատրճանակներն ուղիղ Քիդի ոտքերի տակ նետեցին և քայլեցին դեպի քաղաք տանող արահետը:

ՊԼԱՆ

1. Մենամարտի շտապող թափորը:
2. Լոնի և Բեթլզի զարմանքը:
3. Քիդը և նրա պարանը:

4. Քիդի որոշումը:
5. Հրաժարում մենամարտից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Աշակերտներին հանձնարարել այս պատմության համար գրնել համապատասխան սկիզբ և լրացնել պլանի առաջին երեք կետերը:

2. Գրապահպարակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ա) տրորված արահետ, խոր ու փափուկ ձյուն, սև սքեմ, թաղման թափոր, լուս համակերպում, կարեկցանք ու ցավ դրսևորել, անբարբառ համաձայնություն, փոքրիկ վիճաբանություն, սառնամանիքի բյուրեղյա փոշի, սևեռուն նայել, սֆինքսի պես անթափանց դեմք, ատրճանակներն ուղիղ ոտքերի տակ նետել:

բ) Լոն, Բեթլզ, Մելմութ Քիդ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Ջեկ Լոնդոնը (1876–1916) ամերիկացի նշանավոր գրող է: Եղել է Այլասկայում, ոսկի է որոնել, այսպես էլ ծնվել են նրա պատմվածքները:

ԿԱՊԻԿԸ

Ըստ Գրիգոր Ջոհրապի (անավարտ փոխադրություն)

Ծանոթներիցս մեկի տանը հաճախ էի լինում: Սա մի հյուրասեր մարդ էր, ուներ շքեղ այգի և կենդանիներ էր պահում: Այգու՝ լամենից աչքի ընկնող անկյունում մի վանդակ կար, որի մեջ մի կապիկ էր ապրում՝ բարակ շղթայով կապված: Աշխույժ ու չարաձճի էր այս կապիկը:

Ամեն անգամ կանգ էի առնում, նայում կապիկին, որը զարմացնում էր իր դյուրաթեք մարմնի խաղերով, դեմքի ծամածռություններով: Ես ստածում էի, որ սա մարդ է, միայն թե զգացմունքից զուրկ:

Սակայն շատ շուտով հասկացա սխալս:

Այդ տանը հույն մի սպասուհի կար: Շատ գեղեցիկ և հմայիչ աղջիկ էր: Մենք՝ բոլոր տղամարդիկս, հիանում էինք հույն աղջկա դասական դիմագծերով և անթերի կառուցվածքով: Բայց մեզնից ավելի շատ այդ սպասուհուն համակրում էր կապիկը: Նա սնունդ ընդունում էր միայն այս աղախնի ձեռքից, խոնարհ պառկում էր և սպասում, որ աղջիկը իր փափուկ ձեռքով շոյի և փայփայի իրեն: Աստիճանաբար կապիկի համակրանքը վերածվեց բուռն և կատաղի սիրո: Վայ այն այր մարդուն, որ կհամարձակվեր խոսել, առավել ևս դիպչել սպասուհուն: Կապիկը կոկորդային ցատունալից հնչյուններ էր արձակում, մերկացնում էր ատամներն ու կատաղի հայացքով շանթում այդ տղամարդուն:

Եվ բավական է՝ սպասուհին շրջվեր դեպի կապիկը, զար նրան հանդարտեցնելու, երբ ցնորական երջանկությունից խենթացած, հրձվանքի սարսուռը մոտթին՝ դառնում էր հեզ ու խոնարհ: Բարձրացնում էր թաթը և դիպչում աղջկա ձեռքին այնպես քնքշագին աղերսով, որ դեռ չեմ տեսել ոչ մի տղամարդու աչքերում:

Տառապում էր կապիկը, տառապում էր սիրուց, տառապում էր մարդու պես, մարդուց ավելի:

Սպասուհին աշխատում էր կապիկի աչքին չերևալ, թաքնվում էր նրանից: Կապիկը քաշվում էր վանդակի մի անկյունը, տխուր-տրտում, աչքերի մեջ լացը պահած, նստում էր: Չէր ուտում ոչինչ, որովհետև մյուս ծառաներն էին նրան կերակուր տանում:

Մի օր էլ...

ՊԼԱՆ

1. Հյուրասեր ծանոթա:
2. Վանդակում ապրող կապիկը:
3. Իմ մտորումները:
4. Հույն սպասուհին:
5. Կապիկի համակրանքը:
6. Բուռն սեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Վերջաբանը թողնել աշակերպների սպեղծագործական երևակայությանը:*

2. *Գրապահպրակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

հյուրասեր մարդ, աշխույժ ու չարածժի կապիկ, դյուրաթեք մարմին, դեմքի ծածոություն, հույն սպասուհի, գեղեցիկ և հմայիչ աղջիկ, դասական դիմագծեր, անթերի կառուցվածք, սպասուհուն համակրել, խոնարի պառկել, փափուկ ձեռքով շոյել ու փայփայել, բուռն և կատաղի սեր, կոկորդային ցասումալից հնչյուններ, կատաղի հայացքով շանթել, ցնորական երջանկությունից խենթանալ, հրժվանքի սարսուռը մոռոթին, քնքշագին աղերս, տառապել սիրուց, աչքերի մեջ լացը պահած:

ՄՈՌԻԹԻԿ ՖՐԵԴԻՆ

Հար Ջերալդ Դարելի

Չմռան մի օր գնացի կենդանիների վաճառքով զբաղվող մի առևտրականի մոտ՝ տեսնելու՝ չունի՞ մեր գազանանոցի համար որևէ հետաքրքիր բան: Շրջելով խանութում՝ հանկարծ տեսա մի մութ ու խոնավ վանդակ, որի ճաղերի հետևից ինձ էր նայում արցունքից փայլող աչուկներով, ածուխի պես սև, խղճուկ ու սրտաձմիկ մի մոռոթիկ: Կապիկի ձագ էր: Պստլիկն ամենաշատը մի քանի շաբաթական կլիներ: Ցավալի էր, որ նրան դաժանորեն գրկել էին մորից: Ձագուկը դժբախտ տեսքով կծկվել էր վանդակի հատակին և անընդհատ դողում էր, հագում, փռշտում: Վրայի բուրդը կեղտից իրար էր կպել: Ակնհայտ էր, որ նա հիվանդ էր, և եթե շուտափույթ միջոցներ չձեռնարկեինք, կսատկեր:

Գնեցի նրան, տեղավորեցի չոր ու մաքուր վանդակում և սկսեցի հետազոտել: Պարզվեց, որ փոքրիկը հիվանդ է թոքերի բորբոքումով: Հարկավոր էր շտապ արակել, բայց ինչպե՞ս: Ֆրեդին (մենք նրան այդպես անվանեցինք), երևում է, շատ անբարյացակամ էր մարդկանց հանդեպ և ոչ մեկին թույլ չէր տալիս իրեն մոտենալ: Հենց վանդակի դուռը բացում էինք, ահավոր մի ձղձոց էր գցում: Նրան անապայման բուժել էր պետք, այլապես կսատկեր: Որոշեցինք պստլիկին հրապու-

րել խաղալիքով և նրա վանդակը նետեցինք մի թավշե արջուկ, որն իր չափերով Ֆրեդիկից 6-7 անգամ մեծ էր: Դրեցինք վանդակի մեջ և սկսեցինք նայել:

Սկզբում Ֆրեդին մի կողմ քաշվեց, բայց շուտով հետաքրքրությունը հաղթեց, և նա ձեռքը դիպցրեց արջուկին: Ֆրեդիին դուր եկավ, սա փափուկ է ու բրդոտ: Իսկ կես ժամ անց գրկում էր նրան, ջերմագին քնքշությամբ համբուրում: Այդ պահից սկսած՝ ողջ օրը փարված էր արջուկին: Դադարեց նաև մարդկանցից վախենալուց: Մենք ուղղակի վանդակից դուրս էինք քաշում արջուկին և նրան պինդ կպած Ֆրեդիին, սրսկում կամ բուրդը մաքրում էինք: Իսկ մի քանի օրից լիովին բուժվեց և անձանաչելի դարձավ:

Հիմա էլ մի ուրիշ խնդիր մեջտեղ եկավ: Բանն այն էր, որ արջուկն օր օրի կեղտոտվում էր: Հարկավոր էր նրան մաքրել, ախտահանել: Ֆրեդին սուսկալի գայրացավ, երբ արջուկին վերցրինք մոտից, ու մի աներևակայելի ճղճոց գցեց: Ստիպված եղանք մի նոր արջուկ գնել, որ նման լիներ Ֆրեդիի սիրեցյալին: Հենց որ նոր արջուկը հայտնվեց վանդակում, Ֆրեդին ճղճոցը կտրեց, նետվեց դեպի նա, գրկեց և քնեց տանջված արարածի խոր քնով:

Շուտով Ֆրեդին մեծացավ, չափերով գերազանցեց թավշե արջուկներին: Ժամանակն էր նրան հետ վարժեցնել իր խաղալիքներից և տեղափոխել մեծ կապիկների հարկաբաժինը: Առայժմ նրա համար ընկեր ընտրեցինք մի խոշոր սև ծովախոզուկի, որն աչքի էր ընկնում հաշտ բնավորությամբ և ուղեղի կատարյալ բացակայությամբ: Սկզբում Ֆրեդին ուշադրություն չէր դարձնում նրան, բացի այն դեպքերից, երբ ծովախոզուկը մոտենում էր թանկագին արջուկին: Այստեղ հանցագործը մի ապտակ էր ուտում:

Բայց շուտով Ֆրեդին հայտնագործեց, որ ծովախոզուկի հետ քնելն ավելի ձեռնտու է, քան թավշե արջուկի: Ծովախոզուկը ոչ միայն փափուկ էր, այլև տաքուկ: Իսկ ծովախոզուկը, որին մենք Հարուդ էինք ասում, միայն ուտելու մասին էր մտածում: Ուրեմն հազիվ թե նրա սրտով լիներ այն, ինչ անում էր մի բռնակալ կապիկ: Իսկ Ֆրեդին խիստ կարգուկանոն ուներ՝ երբ քնել, երբ արթնանալ, երբ խաղալ, և բնավ էլ մտադիր չէր իր ռեժիմը հարմարեցնել Հարուդի ճաշկերությոներին: Հենց որ Հարուդը գազար կամ մի ուրիշ բան էր գտնում, Ֆրեդին, որոշելով, որ իր քնելու ժամն է, առանց նախապես ներողություն խնդրելու և առանց ձևականությունների բռնում էր նրա ոտքից, քարշ տալիս իր անկյունը և փովելով խոզուկի փափուկ մարմնին՝ հանգիստ խոմփում էր: Վայ, որ խոզուկը համարձակվեր շարժվել: Ֆրեդին մի քանի ապտակով նրան սովորեցնում էր՝ չի կարելի ուրիշի հանգիստը խանգարել և պետք է ավելի քաղաքավարի լինել:

Այսպես աստիճանաբար Ֆրեդին մեծացավ, դարձավ լուրջ ու ծանրաբարո: Ժամանակն էր նրան ներկայացնելու կապիկների հասարակությանը: Այդպես էլ արեցինք:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Դասարանում տեքստն ընթերցելիս աշխատեք պահպանել հեղինակի մեղմ հումորը:

ՊԼԱՆ

1. Սիրունիկ մոտիվով պստիկեր:
2. Կապիկին փրկելու միջոցներ:
3. Ֆրեդիի անբարյացակամ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ:
4. Թավշյա արջուկը:
5. Ֆրեդին մեծանում է:
6. Ծովախոզուկն ու կապիկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասխարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Կենդանիների վաճառքով զբաղվող մի առևտրական, մութ ու խոնավ վանդակ, արցունքից փայլող աչուկներ, խղճուկ ու սրտաճմիկ մի մոտիվիկ, կծկվել, անբարյացակամ կարծիք, հրապուրել խաղալիքով, թավշե արջուկ, համակրանքով լցվել, ջերմագին քնքշություն, խստահանել, աներևակայելի ճղճղոց, սիրեցյալ, հաշտ բնավորություն, ուղեղի կատարյալ բացակայություն, ծանրաբարո կապիկ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: *Ջերալդ Դարելը (1925–1995) 20–րդ դարի անգլիացի ճանաչված գրող է, բնախոյզ, կենսաբան:*

ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

Ըստ Մովսես Խորենացու

Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Նա քաջ ու երևելի այն դյուցազուններից էր, որոնք ըմբոստացան բռնացողների դեմ:

Դժնադեմ մի բռնակալ էր Բելը, որին հաջողվեց տիրույթներ գրավել և ստրկացնել շատերին: Հայկը չցանկացավ ենթարկվել Բելին, ընդդիմացավ և իր զարմով՝ մոտ երեք հարյուր հոգի, ծառաներով և նրանց ընտանիքներով գնաց բնակվեց մի լեռան ստորոտում՝ կանաչազարդ հարթության վրա: Լեռնահովիտն անվանեց Հայք: Հիմնեց նաև մի գյուղ՝ այն իր անունով կոչելով Հայկաշեն:

Ապրում էր Հայկը խաղաղ, աշխարհաշեն գործով էր զբաղված: Իսկ Բելը զօրուգիշեր մտածում էր, թե ինչպես ծնկի բերեր Հայկին ու նրա որդիներին: Եվ ահա որդու գլխավորությամբ իր հավատարիմ մարդկանց ուղարկում է Հայկի մոտ՝ հետևյալ պատգամով. «Տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով՝ խաղաղ ապրիր, որտեղ որ կհաճես»: Հայկը Բելի պատգամաբերներին հետ է ուղարկում՝ խստությամբ մերժելով: Այդ ժամանակ Տիտանյան Բելը հսկայական զորք է ժողովում և խառնիճաղանջ հրոսակախմբով հեղեղի պես խուժում Հայկի բնակության սահմանները:

Հայկը շուտափույթ հավաքում է որդիներին ու թոռներին, քաջ աղեղնավորներին և շարժվում դեպի Վանա ծովակը: Հավաքելով զորքին՝ նա ասում է.

— Կովենք այնպես, որ կամ մեռնենք, կամ մեր զորությունը ցույց տանք և հաղթենք:

Վերջապես հասնում են բարձրաբերձ լեռների միջև ընկած մի դաշտաձև տեղ և ամուր դիրք գրավում բարձրավանդակի աջ կողմում:

Ձախ կողմում Բելի բազմամբոխ և խուռներամ հրոսակախումբն էր, կենտրոնում՝ ամբարտավան Բելը: Նա կրում էր երկաթյա գլխանոց, թիկունքին ու կրծքին՝ պղնձե տախտակներ, մեջքին՝ գոտի: Աջ ձեռքով բռնել էր նիզակ, ձախով՝ վահան: Նրա կողքին կանգնած էին սպառազեն զինվորներ, իսկ թիկնապահները մի քանի շարքով շրջապատել էին նրան:

Այնինչ Հայկը կանգնած էր զորքի առջևում՝ անվախ ու հպարտ:

Երբ երկու կողմի հսկաները բախվեցին, երկրի վրա ահռելի դղրդյուն բարձրացավ: Զգալով Հայկի բազկի ուժը, տեսնելով նրա զինվորների քաջությունը՝ Բելը զարհուրեց և սկսեց նահանջել: Աղեղնավոր Հայկն առաջ նետվեց, թափով քաշեց լայնալիճ աղեղը, և երեթևյան նետը, ձեղքելով Բելի լանջապանակը, շեշտակի անցավ թիկունքով ու խրվեց հողի մեջ: Բելը օրորվեց տեղում

և գետին ընկնելով՝ շունչը փչեց: Առաջնորդին կորցրած գորքը վայրիվերո փախուստի դիմեց:

Հայկն իր սերունդներով շարունակեց ապրել մեծ լեռան փեշերին և շենացնել երկիրը:

Այդ ժամանակներից սկսած՝ մեր աշխարհը կոչվեց Հայք, ժողովուրդը՝ հայեր:

ՊԼԱՆ

1. Հայկ դյուցազնը:

3. Ահեղ բախում:

2. Բռնակալ Բելը:

4. Բելի պարտությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հեղուկալ բառերն ու բառակապակցությունները.

վայելչակազմ, թիկնավետ, գանգուր մագեր, վառվռուն աչքեր, հաստ բազուկներ, ըմբոստանալ, ընդդիմանալ, զարմ, ամբարիշտ, ցուրտ սառնություն, խառնիճաղանջ հրոսակախմբեր, ամբարտավան, լայնալիճ աղեղ, երեքթևյան նետ:

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Հայր Կարեն Մուսայելյանի

Արամայիսը բնակության համար փուն է շինում գերի ափին՝ մի բլուրի վրա, և իր անունով կոչում է Արմավիր...

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Բլուրը ժայռոտ էր և բուսականությամբ հարուստ: Ապառաժներ, խարամ և բազալտ՝ ինչքան ուզես: Արամայիսն այդ բլուրը շատ էր հավանել: Դեռ այն ժամանակ, երբ Արամանյակ հայրը կենդանի էր, ինքը գործի բերումով հաճախ էր անցնում այդ կողմերով: Մտե՛նում էր բարձունքին, կանգնում և ուշադիր զննում տեղանքը: Որքան շինաքար կար: «Իսկական ամրոց կառուցելու տեղ է»,— մտածում էր նա:

Երբ Արամանյակը երկիրը անձնեց որդուն, վերջինս անմիջապես գործի անցավ:

Ահա մի քանի պարթև տղամարդկանց հետ նա հաղթահարում է սարալանջի թեքությունը: Վերելքը դժվար է, սակայն հսկաները գնում են առանց դադար առնելու:

Բլուրը սրագագաթ չէ և ունի մի քանի հարթակներ, որոնք աստիճանների նման հաջորդում են իրար: Տեղ-տեղ վեր են հառնում հսկա ժայռերը:

Ամենաբարձր ժայռը Արամայիսի ոտքի տակ է: Այդտեղից հրաշք տեսարան է բացվում: Հյուսիսային կողմում Արամանյակի լեռն է, արևմուտքից գետ է հոսում՝ լայնահուն ու հանդարտ: Գետից այն կողմ, ուր վերջանում է դաշտը, սրագագաթ լեռներ են բարձրանում: Երկուսն էլ կանգնած են վեհորեն:

Այն, ինքը բլրի վրա ապարանք կկառուցի, կպահի մշտական զորաբանակներ, կհավաքի շուրջը Հայք երկրի մարդկանց և այնտեղից կիշխի իր ընդարձակ աշխարհի ցեղերին: Շուրջը բնական ծառաստաններ են ու արոտավայրեր, իսկ գետից կարելի է առուններ հանել, ափերին մրգատու այգիներ գցել, մարդկանց բարեկեցիկ կյանք վարելու հնարավորություն ընձեռել:

Արամայիսի հրամանով հաջորդ օրն իսկ սուրհանդակներ գնացին Հայք երկրի տարբեր կողմերը՝ շինարարներ ու քարգործ վարպետներ բերելու: Շուտով բլուրն ու նրա շրջակայքը վերածվեցին հսկայական շինհրապարակի: Հարյուրավոր մարդիկ էին աշխատում այնտեղ: Ոմանք քար էին տաշում, մյուսները բլրի հրապարակներն էին հարթում, ուրիշները՝ հող տեղափոխում, պատգարակներ ու փայտե սանդուղքներ պատրաստում: Եվ այդ ամենը՝ Արամայիս արքայի աչքի առաջ: Նա թողել էր Արամանյակ լեռան և Արագածոտնի հարուստ շեները և ընտանիքով բնակություն հաստատել այս փոշոտ վայրում:

Վաղ առավոտյան դուրս գալով վրանից՝ արքան հետևում էր աշխատանքի ընթացքին, և ինքն էլ բանվորների հետ քարեր էր գլորում, ժայտեր տապալում, փայտ տղոցում, գերաններ կապում: «Իմ անունը կրող քաղաքը պիտի կրի նաև ձեռքիս դրոշմը», — մտքում կրկնում էր նա: Ու աշխատում էր օրնիքուն:

Մի քանի տարում կանգնեց հրաշալի կառույցներով, ապարանքներով, կրկնահարկ տներով, ուղիղ փողոցներով քաղաքը: Այա կառուցեցին հաստաբետ ատամներով ու դիտաշտարակներով պարիսպը, որը տեղ-տեղ ընդհատվում էր պղնձակերտ ծանր դարպասներով:

Բլրի չորս կողմը բուրաստաններ ու ծաղկանոցներ դարձրին, պարսպից դուրս դաստակերտներ կառուցեցին և անթիվ մարդկանց բնակեցրին:

Քաղաքը անվանեցին Արմավիր, որտեղ ապրեցին հետագա սերունդները և այնտեղից իշխեցին Հայք երկրին: Բնակավայրը տարեցտարի մեծանում էր՝ իր մեջ առնելով մերձակա տարածքները:

Այդպես հիմնվեց հայոց առաջին մայրաքաղաքը:

ՊԼԱՆ

1. Արամայիսի հավանած բլուրը:
2. Քաղաք կառուցելու որոշում:
3. Քաղաքի հիմնադրումն ու ավարտը:
4. Առաջին մայրաքաղաքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

խարամ, բազալտ, պարթև տղամարդիկ, հսկա ժայտեր, լայնահուն ու հանդարտ գետ, սրագագաթ լեռներ, բնական ծառաստաններ, բարեկեցիկ կյանք, քարգործ վարպետներ, հաստաբետ ատամներով ու դիտաշտարակներով պարիսպ, պղնձակերտ ծանր դարպասներ, վեհության ու իշխանության խորհրդանիշ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Ըստ Սրեպիան Օրբելյանի

Աղվանքի իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա ջքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում: Ասես նյութեղեն չէր, այլ կերտված էր օդից ու լուսնի շողերից, արևի թրթռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:

Շահանդուխտի ձեռքը խնդրեցին Թորգոմյան տնից: Նա դուրս եկավ հայրենի աշխարհից՝ ուղևորվելու իր նոր բնակատեղին: Մոռնելով Բաղաս աշխարհը՝ անցնում էր մի ապառաժոտ վայրով: Ճանապարհի կողքին լերկ հեղեղատ էր, որի ստորոտը կորչում էր անհատակ ու խավարչտին անդունդում: Երբ նազելի օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր բարձր քարաժայռի կատարով, հանկարծակի նրանց վրա հարձակվեցին անասարսուռ կերպարանքով գինյալներ:

Թե ինչ պատահեց հետո, պատմում է Շահանդուխտի ձեռքով գրված նամակը, որ բարեբախտաբար պահպանվել է. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Թորգոմյան տուն հարս էի գնում: Հասա Բաղքի սահմանը, այն քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա այստեղ հանկարծակի հանդիպեցին խմայելացիները, որոնք կամենում էին ինձ հափշտակել: Նրանք կտտորեցին մեր հեծելագունդը: Ես ճիշտ համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն գահավիժումով մեռնել հանուն Քրիստոսի: Եվ հիշելով սուրբ Հովհաննիսին՝ խաչակնքեցի ու ձիուս հետ թռա քարաժայռից: Քանու ուժգին հոսանքով ու աներևույթ գորությամբ կարծես թե կառքով իջա ձորի խորխորատը և խոնարհությամբ խորին երախտագիտությունս հայտնեցի ինձ փրկողին: Այդ օրվանից անձս նվիրեցի Քրիստոսին: Ուխտեցի այլևս երբևէ այստեղից դուրս չգալ: Շինեցի մի մատուռ, որտեղ ձգնեցի և ապաշխարեցի ամբողջ կյանքիս ընթացքում: Թեև ծնողներս և Թորգոմյան իշխանները շատ թախանձեցին վերադառնալ աշխարհիկ կյանք, բայց ես անդրդվելի էի: Կանչեցի Սյունյաց եպիսկոպոսին, ամբողջ ունեցվածքս տվեցի նրան՝ կեսը բաժանելու կարիքավորներին, մյուս կեսը նվիրելու սուրբ եկեղեցուն»:

Այստեղ ավարտվում է Շահանդուխտի նամակը: Քաջարի օրիորդի մասին պահպանված գրույցն ասում է, որ նա հավաքում է ուրիշ կույսերի և ձգնությամբ ապրելով երեսուն տարի՝ մեռնում:

Տաթևի վանքի ճիշտ դեմուդեմ՝ ձորի վրա, այսօր էլ մի հսկա քարաժայռ է կախված: Ասում են՝ դա հենց այն ժայռն է, որի գլխից ձիով թռել է Շահանդուխտը: Ահա թե ինչու տեղաբնակներն այդ ժայռաբեկորն անվանել են *Շահանդուխտի քար*:

ՊԼԱՆ

1. Չքնաղ Շահանդուխտը:
2. Ուղևորություն դեպի Թորգոմյան տուն:
3. Խմայելացիների հարձակումը:
4. Անվնաս գահավիժում:
5. Շահանդուխտի ուխտը:

Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

արևի թրթռուն ճառագայթներ, ծաղիկների անուշաբույր նեկտար, շաչուն-շառաչուն, հավաստի, ուխտել, ճգնել, ապաշխարել, թախանձել, խավարչտին անդունդ, երկնակարկառ քարաժայռ, ահասարսուռ կերպարանք, վայրենաբարո ելուզակներ, աշխարհիկ կյանք, ապաշխարել, խոնարհությամբ խորին երախտագիտություն հայտնել:

ԻՄԱՍՏՈՒՆ ԹԱԳՈՒՇԻՆ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Վանի թագավոր Սարդուրի Երրորդը գահակալել է մեր թվարկությունից առաջ 645-635 թվականներին: Մի օր նրան տեղեկացրին, որ Տուշպա մայրաքաղաքի մի բնակչուհի՝ Վանուհի անունով, արդեն տասնութ զավակների մայր է:

— Տեր արքա,— ասացին պալատականները,— այդ Վանուհու ավագ որդիները ծառայում են մեր բանակում: Ամեն մեկը մի-մի հսկա է և արժե տասը զինվոր: Նրանք բոլորը հերոսներ են: Ասում են նաև, որ նրանք ունեն մի քույր, որ արտասովոր ուժի, խելքի և գեղեցկության տեր օրիորդ է:

Շատ զարմացավ Սարդուրի արքան, ափսոսաց, որ իր թագավորության մեջ այդպիսի ընտանիք է ապրում, բայց ինքը տեղյակ չէ: Նա կանչեց արքունի գանձապահին և հրամայեց.

— Պետության միջոցներով մեկական տուն կառուցել տուր այդ տասնութ հերոսների համար, իսկ թագավորական կառքերից մեկը հատկացրո՛ւ բազմազավակ մորը: Հայրենիքին այդքան զինվոր տվող կնոջ ոտքը պիտի գետնին չդիպչի:

Սարդուրին այդ ժամանակ դեռ ամուսնացած չէր: Շատ աղջիկներ կային նրա շրջապատում, բայց նա ոչ մեկին չէր հավանում:

— Երկրի թագուհին,— ասում էր նա,— պիտի լինի ոչ միայն գեղեցիկ, այլև առաջին հերթին իմաստուն, որ ամեն բոպե կարողանա կանգնել թագավոր ամուսնու կողքին և օգնել խորհուրդներով: «Եթե Վանուհու դուստրը գեղեցիկ է և իմաստուն, ինչո՞ւ չգնամ և չտեսնեմ նրան»,— մտածեց Սարդուրին և մի քանի թիկնապահներով գնաց նրանց տուն:

Իսկապես, օրիորդը, որի անունը Ծովինար էր, չքնաղ մի էակ էր: Սարդուրին երբևէ այդպիսի գեղեցկուհու չէր հանդիպել: Նրան թվում էր, թե աղջիկն անմիջապես կհամաձայնի արքայի կին դառնալ: Բայց արի ու տես, որ այդպես չեղավ:

— Ես կհամաձայնեմ քո կինը դառնալ միայն այն դեպքում, եթե վագքի մրցույթում առաջ անցնես ինձնից,— ասաց Ծովինարը:

Երիտասարդ արքան քնծիծաղ տվեց և ընդառաջելով աղջկա ցանկությանը՝ բազմության աչքի առջև նրա հետ մրցույթի դուրս եկավ: Սկզբում մրցուղում առջևից վազում էր Ծովինարը, հետո արքան առաջ անցավ ու հաղթեց օրիորդին:

Այս վագքից հետո, կատարելով իր խոստումը, օրիորդ Ծովինարը համաձայնեց հարս գնալ արքունիք: Բայց, չգիտես ինչու, աղջիկն անընդհատ ձգձգում էր հարսանիքը: Եվ ահա Սարդուրի արքան օրիորդին ասաց.

— Ծովինար, երևում է, որ քո մտքում ինչ-որ բան կա, ինչո՞ւ ես անընդհան ձգձգում մեր հարսանիքը: Չէ՞ որ ես կատարեցի քո ցանկությունը:

— Դա ճիշտ է, ցանկությունս կատարեցիր, բայց չհաղթեցիր, — ասաց աղջիկը:

— Ինչպե՞ս թե չհաղթեցի, — զարմացավ Սարգուրի արքան:

— Այո՛, ոչ թե դու հաղթեցիր, այլ ես պարտվեցի:

— Դա ի՞նչ է նշանակում:

— Գնանք, մարդկանց աչքից հեռու մի տափարակ տեղ ընտրենք, վազենք, և դու կհամոզվես, որ չես հաղթել ինձ:

Սարգուրին համաձայնեց: Կառք նստեցին, բավական հեռացան Վանից և հարմար մի տեղ գտնելով՝ դուրս եկան մրցության: Այս անգամ հաղթեց Ծովինարը:

— Այո՛, ընդունում եմ իմ պարտությունը, դու հաղթեցիր, — ասաց արքան, — իսկ ինչո՞ւ առաջին մրցույթի ժամանակ պարտվեցիր:

— Չուզեցի հաղթել, Սարգուրի՛, հպատակների առջև արքան միշտ հաղթող պիտի լինի:

Աղջկա այդ պատասխանը հիացրեց Սարգուրիին, և նա ասաց.

— Դու ոչ միայն գեղեցիկ ես, այլև իմաստուն:

Եվ մի քանի օր հետո Ծովինարը դարձավ հայոց թագուհի:

ՊԼԱՆ

1. Բազմազավակ Վանուհին:

4. Օրիորդի պայմանը:

2. Բազմանդամ ընտանիքին օգնելու հրաման:

5. Վազքի մրցույթ:

3. Գեղեցկուհի Ծովինարը:

6. Պարված արքան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասագրական գրել հեղուկալ բառերն ու բառակապակցությունները.

գահակալել, Տուշպա մայրաքաղաք, թագավորական կառքը հատկացնել, ոտքը գետին չդիպչել, չքնաղ էակ, տափարակ տեղ, քմծիծաղ տալ, ընդառաջել ցանկությանը, անընդհան ձգձգել հարսանիքը, պարտությունն ընդունել:

Ի ՓԱՌՍ ՃԵՐՄԱԿԱԶԻՈՒՅՆ

Ըստ Բաֆֆու

Շոգ կեսօր էր: Արևի բարկ ճառագայթների ներքո Շապուհ արքայի բանակատեղին ներկայացնում էր խիստ տխուր տեսարան: Վրանները թափուր էին, իսկ ռազմադաշտը և նրա շրջակայքը ծածկված էին դիակներով: Ինքը՝ արքայից արքան, չէր երևում ո՛չ գոհվածների, ո՛չ գերիների մեջ: Ատում էին, որ նա փախել էր հենց այն ժամանակ, երբ հայերն անակնկալ հարձակում էին գործել, փախել էր ծպտված, իր սենեկապետներից մեկի հագուստով: Արքայական փառաշուք վրաններն իրենց ողջ հարստությամբ մնացել էին անտեր: Մնացել էր նաև Շապուհի կանանոցը՝ լի արևելքի և արևմուտքի գեղեցկուհիներով: Նրանց թվում էր նաև պարսից թագուհին: Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հրամանով հայ զինվոր-

ների մի ջոկատ շրջապատել էր կանանց վրանները՝ որևէ վտանգից նրանց զերծ պահելու նպատակով:

Վրաններից մեկում՝ ճանապարհորդական աթոռակին, նստած էր հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Նրան շրջապատել էին զինակից ընկերները: Լուռ էին նրանք և ինչ-որ բանից դժգոհ:

— Ես այս պարսիկ գերիներին գլխատել կտամ և նրանց խրտվիլակներով կգարդարեմ Արտագերս ամրոցի աշտարակները, բայց այն, ինչ դուք եք պահանջում, ես երբեք ընդունել չեմ կարող, — ասաց Մուշեղը:

— Ինչո՞ւ, Մուշեղ, — հարցրեց զորապետներից մեկը, — մոռանում ես, թե ինչպես Շապուհը Արշակ թագավորին խաբեությանը կանչեց Տիգրան և նետեց Անիուշ բերդը, մոռանում ես, թե ինչպես քո հորը՝ Վասակ Մամիկոնյանին, մորթագերծ արեց, հազարավորներին դժբախտացրեց, մեր նախարարներից շատերի կանանց գերեվարեց:

— Ինչ իրեն կարող է թույլ տալ պարսիկ Շապուհը, նույնը չի կարող անել հայոց սպարապետը: Ճիշտ հակառակը, ես նրա բոլոր կանանց ամենայն հարգանքով կուղարկեմ Տիգրան, և դա կլինի իմ ամենամեծ վրեժխնդրությունը:

Այս ասելով՝ Մուշեղը դարձավ սենեկապետին.

— Գնա հայտնի՛ր պարսից թագուհուն, որ ես ուզում եմ այցելել իրեն:

Թագուհու ներքինապետը դուրս եկավ՝ դիմավորելու հայոց սպարապետին: Մուշեղը մտավ թագուհու վրանը: Ներսում ոչ ոք չկար: Պարսից սովորությամբ կինը իրավունք չուներ երես առ երես խոսելու օտար տղամարդու հետ: Նա կարող էր խոսել միայն վարագույրի հետևից:

— Ողջուն պարսից մեծափառ թագուհուն, — ասաց Մուշեղը՝ դեմքով կանգնած դեպի վարագույրը: Ցավում եմ և բառեր չեմ գտնում քեզ մխիթարելու համար: Բայց այս բոլոր աղետների հանցավորը ոչ թե մենք՝ հայերս ենք, այլ քո թագավոր ամուսինը: Սակայն այդ ասելու համար չէ, որ եկել եմ քեզ մոտ: Ես եկել եմ հայտնելու, որ մենք գիտենք վատությունը լավությամբ ջնջել: Քեզ և Շապուհի բոլոր կանանց, որ այժմ գերի են իմ ձեռքում, վաղը զինվորներին ուղեկցությամբ և ամենայն պատվով կուղարկեմ Տիգրան:

Դեռ սպարապետն իր խոսքը չէր ավարտել, երբ վարագույրի հետևից հանկարծ հայտնվեց թագուհին, ծնկի իջավ և գրկելով սպարապետի ոտքերը՝ բացականչեց.

— Դու մարդ չես, քո բերանով բարության արարիչն է խոսում: Բո մեծահոգությունը, ո՛վ քաջ, անմոռաց կմնա իմ սրտում: Երբ հասնեմ Տիգրան, իմ առաջին խոսքն այս կլինի թագավոր ամուսնուս. «Հայոց սպարապետն իր ազնվությամբ մի ծանր պարտք դրեց քեզ վրա, և այդ պարտքը նույնպիսի ազնվությամբ պիտի վճարես»:

Մուշեղ Մամիկոնյանի արարքը զարմացրեց պարսից արքունիքին: Նրանց համար դա չլսված հրաշք էր: Իսկ Շապուհը հրամայեց նրա պատկերը իր սպիտակ ձիով դրվագել իր ոսկյա գավաթի վրա և ամեն անգամ, երբ դա ձեռքն էր առնում, հիշում էր ազնիվ հերոսի ազնիվ գործը և խմում՝ կրկնելով.

— Ի փառս Ճերմակաձիոյն:

ՊԼԱՆ

1. Շապուհ արքայի բանակալորեղին:
2. Զինվորական խորհուրդ:
3. Մուշեղ Մամիկոնյանի այցը պարսից թագուհուն:
4. Մուշեղի պարկերը գավաթի վրա:

Գրապրահարակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

արևի բարկ ճառագայթներ, խիստ տխուր տեսարան, արքայական փառաշուք վրաններ, անակնկալ հարձակվել, ծպտված փախչել, սենեկապետի հագուստ, արևելքի և արևմուտքի գեղեցկուհիներ, ճանապարհորդական աթոռակ, խրտվիլակ, խաբեությամբ կանչել Տիգրոն, Անհուշ բերդ, երես առ երես խոսել տղամարդու հետ, բարության արարիչ, դրվագել գավաթի վրա:

ՓԱՌԱՆՁԵՄ ԹԱԳՈՒՀԻՆ

Հայր Սյրեվան Զորյանի

Հայոց աշխարհում բազում եղեռնագործություններ կատարելուց հետո պարսից Շապուհ արքան շարժվեց դեպի Արտագերս ամրոցը, ուր սակավաթիվ զորքով փակվել էր Փառանձեմ թագուհին: Շապուհն ընչաքաղց էր, բայց այս անգամ նրան արքայական գանձերը չէին հրապուրում. նա ուզում էր գերեվարել հայոց հպարտ թագուհուն: Ժայռեղեն բարձունքներին թիկնած Արտագերսն անառիկ էր: Պարսից զորական ուժը փշրվում, խորտակվում էր Արտագերսի անսասան ապառաժների վրա: Փառանձեմն անձամբ էր ղեկավարում ամրոցի պաշտպանությունը: Շապուհն այդպես էլ ամոթահար կհեռանար բերդապարիսպներից, եթե դավաճան Հայր Մարդպետը ցույց չտար Արտագերս տանող գաղտնի ճանապարհները:

Անառիկ ամրոցն ընկավ: Գերելով Փառանձեմ թագուհուն՝ պարսիկ սպաները նրան առաջնորդեցին բերդի դիմացի հարթավայրը, ուր ծանր վիշապի նման տաբածվել էր թշնամին: Կենտրոնում աչքի էր զարնում առյուծանիշ դրոշմով մի շքեղ վրան: Դա Շապուհի վրանն էր:

Թագուհու շնչառությունն արագացավ. նա աչքերը ականա փակեց. պիտի հանդիպեր այն մարդուն, որը Արշակ թագավորին բանտարկեց Անհուշ բերդում, մորթագերծ արեց սպարապետ Վասակ Մամիկոնյանին, այնքան արյունահեղությունների պատճառ դարձավ:

Մինչ Փառանձեմին կառաջնորդեին արքայի մոտ, վերջինս ինքը դուրս եկավ վրանից: Նա շքեղ հանդերձանքով էր, գլխին՝ գոհարազարդ թագ: Շապուհը չարախիսնդ նայեց Փառանձեմին:

— Անզգամ կին, չկամեցար գալ ինքնական, եկար որպես գերի և ստրուկ: Քո համառության համար դու կհատուցես, — մոնչաց Շապուհը:

Հանկարծ կատարվեց անսպասելին. հայոց թագուհին վիրավոր հովազի պես մի թռիչքով խոյացավ ու Շապուհի դեմքին շառաչուն մի ապտակ իջեցրեց:

— Ա՛ն, լի՛րբ և խաբեբա՛, — կատաղած բղավեց նա, — իբր արքա ես, բայց չես կարողանում վայելույ խոսել կնոջ հետ:

Ասաց ու թքեց Շապուհի երեսին: Այդ հանդգնությունն այնքան անակնկալ էր, որ արքայից արքան առաջին պահին շփոթվեց, ձեռքն ականա տարավ դեպի երեսը և ճղճղաց.

— Տի՛ց հանել անառակին, ցի՛ց հանել:

Թիկնապահները վրա թափվեցին, բռնեցին թագուհու ձեռքերն ու տարան: Փառանձեմը քայլում էր հպարտ, գեղեցիկ գլուխը բարձր բռնած:

Լեռնային ուղին իջնում էր դեպի Արաքսի ափը: Քիչ անց հասան գետի եզերքը, որից սկսվում էր անհատակ մի վիհ: Խորխորատի եզրին ցցված էր մի հսկայաբեկոր ժայռ: Թագուհին ասաց.

— Պարսից սպաներ, իմ գորավարը գերեց ձեր արքայի կանանոցը և պատվով ուղարկեց Տիգրոն: Ես ձեզնից այդպիսի բան չեմ խնդրում: Բայց թնյլ տվեք մահվանից առաջ աղոթել:

— Աղոթիր,— համաձայնեց սպան, որն ինքն էլ էր ուզում մի փոքր հանգստանալ: Փառանձեմը բարձրացավ ժայռի վրա, ծնկի եկավ և սկսեց աղոթք մրմնջալ: Պարսիկ սպաները երեսները դարձրին, որ նրան չխանգարեն: Թագուհին ավարտեց աղոթքը, ապա մեկեն ելավ, խրոխտ կանգնեց և աչքերից կրակներ ցայտեցնելով՝ գոչեց.

— Հայտնեցեք ձեր օձակերպ արքային, որ հայոց թագուհին երբեք գերի չի լինի:

Սպաները զարմացած հետ նայեցին և տեսան, թե ինչպես գերի թագուհին թևերը պարզած թռչունի պես գահավիժեց անդունդը:

ՊԼԱՆ

1. Դեպի Արփազերս:

2. Անտիկ ամրոցը:

3. Գերեվարված Փառանձեմ թագուհին:

4. Շապուհի և Փառանձեմի հանդիպումը:

5. Հայոց թագուհին գերի չի լինի:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Եղեռնագործություններ, սակավաթիվ զորք, ընչաքաղց, արքայական գանձեր, ժայռեղեն բարձունքներին թիկնած ամրոց, համառ պաշարում, անսասան ապառաժներ, ծանր վիշապի նման, առյուծանիշ դրոշով մի շքեղ վրան, մորթագերծ անել, դառը հիշողություններ, գոհարագարդ թագ, լիրբ, խաբեբա, վայելուչ խոսել, անհատակ վիհ, խորխորատ, թռչունի պես անդունդը գահավիժել:

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Հայր Լեոյի

Չորս հարյուր հինգ թվականին էր՝ ամառային շենշող մի օր: Արարատյան դաշտը շողշողում էր հազարերանգ գույներով ու բույրերով: Թռչուններն ուրախ ձովողում էին: Ինչ-որ հուզիչ ու խորհրդավոր, ինչ-որ համընդհանուր հրճվանք էր թևածում շուրջբոլորը:

Այդ օրը ցնծություն էր ողջ Հայաստան աշխարհում, առավել ևս մայրաքաղաք Վաղարշապատում: Հանդիսավոր դողանջում էին եկեղեցական զանգերը, լեփ-լեցուն փողոցներում ու հրապարակներում մոլեգնում էր զվարթ շուրջպարը: Ամենուրեք եռուզեռ ու աշխուժություն էր. բոլորը՝ մեծ թե փոքր, դրսում էին, իսկ քաղաքի դարպասների մոտ թագավորի, Սահակ Պարթև կաթողիկոսի, նախարարների ու հոգևոր դասի շուրջը խլրտում էր տոնականորեն զուգված ժողովուրդը:

Եվ անհա ճանապարհի երևացող հատվածում փոշի բարձրացավ: Ձիավորներ էին, որոնցից առաջինի ձեռքին փողփողում էր հայոց դրոշը: Մարդկանց անհամբեր աչքերը սրարշավ վարգող խմբի մեջ փնտրում էին մեկին, և ամենքը նայում էին այնպիսի երկյուղածությամբ, ասես հայտնվելու էր Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը:

Եկողը միջին տարիքի տղամարդ էր՝ բարձրահասակ, թիկնեղ: Սևաթույր ու խռիվ մազերը թափվել էին լայն ուսերին: Աչքերում գերբնական կայծեր էին շողում, որ մեղմանում էին բարի ժպիտով և գորովագույթ, կարոտակեզ հայացքով՝ ուղղված դիմավորող բազմությանը:

Այդ սքանչելի հայկազունը Մեսրոպ Մաշտոցն էր՝ հայ գրերի երկնողը, որ վերադառնում էր արտասահմանից՝ բերելով իր հորինած այբուբենը:

Օդը թնդացնող ուրախության աղաղակները վկայում էին, որ ամենքը հպարտ էին և խորությամբ հասկանում էին ճանապարհորդ վարդապետի գյուտի կարևորությունը:

Ապրեց հայ ժողովուրդը, և նրան ապրեցնողը նախ և առաջ իր այբուբենն էր: Անցավ հարյուրամյակների դժխեմ քառուղիներով՝ միշտ կրծքին սեղմած հայատառ մատյանները, իսկ սրտում՝ սուրբ ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի լուսապսակ անունը:

ՊԼԱՆ

1. 405 թվականի ամառային պայծառ օրը:
2. Ցնծություն Վաղարշապատում:
3. Մեսրոպ Մաշտոցի հարուստ վերադարձը:
4. Հայ ժողովրդի հավերժության գաղտնիքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրատախտակին գրել հեպրևյալ բառերն ու բառակապակցությունները.

ամառային շենշող օր, հազարերանգ գույներ, հուզիչ ու խորհրդավոր, համընդհանուր հրճվանք, չորսբոլորը, զվարթ շուրջպար, տոնականորեն հագնված ամբոխ, վառվռուն, անհամբեր աչքեր, հարյուրամյակների դժխեմ քառուղիներ, լուսապսակ անուն:

ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՆՆՋԵՑՅԱԼԸ

Հայր Լեոյի

Չորս հարյուր երեսունինը թվականի փետրվարն էր: Թխպոտ երկնքից անընդհատ թափվում էր ձյունը՝ իր պաղ ծածկոցի տակ առնելով ամեն ինչ:

Համընդհանուր սպիտակության մեջ աչքի էին զարնում քաղաքի կավե պարիսպներն ու աշտարակները: Վաղարշապատն էր՝ Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը: Այս քաղաքում փետրվարի տասներեքին մի մարդ ընդմիշտ փակեց աչքերը՝ ցնցելով ողջ մայրաքաղաքը և համայն հայ ժողովրդին:

Աշխարհից հեռանում էր մի սուրբ մարդ՝ սուրբ անունով, սուրբ գործով հռչակված: Այդքան պաշտված ու հարգված հանգուցյալը թագավոր, մեծատոհմիկ կամ իշխանագն չէր, ոչ էլ պատերազմի հերոս կամ մեծատուն: Մոտ ութսուն տարեկան ծերունի էր՝ լայն ճակատով, ուր ասես դարերի իմաստությունն էր ամփոփված, փառահեղ մորուքով և կրծքին խաչված մոմե մատներով: Նա ծագումով հասարակ գեղջուկի որդի էր, որին ժողովուրդն անվանում էր Հայերենի առաջին ուսուցիչ: Գործել էր երեսունհինգ տարի, աճեցրել էր տաղանդավոր սաներ՝ Խորենացի, Կորյուն, Եղիշե, Վարդան Մամիկոնյան:

Մինչ կաթողիկոսարանում դրված էր Ուսուցչի մարմինը, քիչ այն կողմ շշուկով վիճում էին, թե ո՞ր պիտի որոնել այն մի ասի հողը, որ սուրբ մարդուն ամփոփելու պատիվն ունենա:

Բացվեց փետրվարյան սառնաշունչ օրը: Լեփ-լեցուն էին փողոցները, Մայր աթոռի գավիթը: Թախծոտ թրթիռով դողանջում էին եկեղեցիների զանգերը՝ սրպես սգո և ազգային մեծ վշտի նշան:

Ահա մարդկային գլուխներից վեր երևաց դագաղը՝ թանկագին բեռով, ամբողջովին ծաղիկների մեջ: Մարդիկ ուսերի վրա տանում էին Ուսուցչին՝ աչքերում անթեղած վիշտ ու արտասուք: Հազարավոր մարդիկ, և ոչ մի ձայն, ոչ մի շշուկ: Մեծ լռություն էր իջել Արարատյան դաշտի վրա:

Թափորը թեքվեց դեպի Օշական՝ Վահան Ամատունու կալվածքը: Այդտեղ իջեցրին դագաղը: Օդում ելևէջում էին պատարագի մեղեդիները, բուրվառներն անուշ խնկարկում էին: Վշտալլուկ հուղարկավորները, լռելյայն անցնելով դագաղի մոտով, խոնարհում էին գլուխները՝ վերջին հրաժեշտը տալով սուրբ մարդուն: Իսկ նրա աշակերտները, ցավից կծկված, վերջին անգամ համբուրեցին Ուսուցչի՝ արևից էլ պայծառ ճակատը:

Շուրջ հազար հինգ հարյուր տարի Օշականի հողը իր ծոցում պահում է սուրբ մարդուն՝ Մեսրոպ Մաշտոցին:

ՊԼԱՆ

1. 439 թվական: Վաղարշապատ:
2. Ուսուցչի մահը:
3. Նրա գործունեությունը:
4. Վեճ՝ թաղման տեղի համար:
5. Սուրբ շիրիմն Օշականում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասարանային գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

թխպոտ երկինք, համընդհանուր սպիտակություն, կավե պարիսպներ ու աշտարակներ, պաշտված ու հարգված հանգուցյալ, դարերի իմաստություն, փառահեղ մորուք, մոմե մատներ, գեղջուկ, լեփ-լեցուն, թախծոտ թրթիռ, Մայր աթոռ, մեծ լռություն, պատարագի մեղեդիներ, ելևէջել, բուրվառներն անուշ խնկարկել, վշտալլուկ հուղարկավորներ:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Հար փարբեր աղբյուրների

Չորս հարյուր իննսուներե թվականի գարնանային մի տաք երեկո եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի բացօթյա դահլիճներից մեկը լեցուն էր բազմությամբ: Բեմի վրա՝ փափուկ բազմոցներին, նստած էին պատկառելի տարիքի մի քանի այր: Դրանք մեծանուն փիլիսոփաներ էին, գիտնականներ ու պատմիչներ, որոնք եկել էին՝ աշխարհի տարբեր կողմերից ժամանած վաթսուն իմաստասերների մրցույթը ղեկավարելու: Միցույթին մասնակցում էր նաև մի հայ երիտասարդ փիլիսոփա՝ անունը Դավիթ:

Դահլիճը լարված հետաքրքրությամբ հետևում էր իմացության, գիտելիքների, ճկուն մտքի մրցույթին: Արդյոք ո՞վ պիտի դառնար օրվա հերոսը, ո՞վ պիտի շահեր հաղթանակի դափնին:

Ահա հրապարակ դուրս եկավ հայտրդի Դավիթը: Մեծահամբավ իմաստասեր Օլիմպադորասը հետաքրքրությամբ նայեց նրան, ապա ծանրումեծ հարցրեց.

— Երիտասարդ, ի՞նչն է աշխարհում հավերժական:

— Ժամանակը, — անվարան պատասխանեց Դավիթը, — այն անտեսանելի է, անշոշափելի, անսկիզբ, անվերջ ու անվախճան:

— Կա՞ տիեզերքում որևէ բան, որ անընդմեջ ընթացքի մեջ է և երբեք կանգ չի առնում:

— Կա: Դարձյալ ժամանակը: Այն հոսում է անդադար, անկախ որևէ մեկի ցանկությունից: Միակ բանն է ողջ տիեզերքում, որը ի վիճակի չէնք ո՛չ կանգնեցնելու, ո՛չ սանձելու:

Եվ կրկին հարց տվին Դավիթին.

— Ո՞րն է երկարակեցության գաղտնիքը:

— Քչակերությունը, սակավապետությունը: Ոչ թե պիտի ապրել ուտելու, այլ ուտել ապրելու համար:

— Ի՞նչը կարող է մարդուն մոտեցնել Աստծուն:

— Աստծո նման սիրել աշխարհն ու մարդկանց, կյանքում առաջնորդվել Աստվածաշնչի ոսկե օրենքով. «Այն ամենը, որ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ համար, այնպես և դուք արեք նրանց համար»:

— Անսահմանության մեջ ի՞նչն է ամենից արագ թռչում:

— Միտքը: Այն վայրկենապես կարող է կտրել հեռավոր աշխարհներ, թափանցել օվկիանոսների հատակը, կարող է սլանալ դարերի խորքը, հասնել բիրլիական ժամանակները, հաղորդակցվել նախամարդու կամ Աստծո հետ:

— Ո՞վ է ամենախմաստունը բոլոր ժամանակներում:

— Բնությունը՝ մայրը ամենայն գեղեցկի, բարու և չարի: Նա գիտի ամեն ինչ իր տեղում և ժամանակին անել: Բնությունն անսխալական է:

Հարց ու պատասխանն ավարտվեց: Մի պահ տևած լռությանը հաջորդեցին բուռն ծափահարությունները: Ունկնդիրները հոտնկայս վանկարկում էին.

— Դավիթ Արմենիոն, Դավիթ Անհաղթ:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Այս նյութը հեշտությամբ վերարտադրելու համար առաջարկում ենք առաջին ընթերցման ժամանակ կարդալ Դավիթ Անհաղթին տրվող հարցերը միայն, իսկ պատասխանները՝ ոչ: Թող աշակերտն ինքը մտածի, թե ինչ կպատասխաներ, եթե դրանք իրեն առաջարկվեին: Երկրորդ անգամ նրանց համար ընթերցել տրված ամբողջությամբ:

Դավիթ փիլիսոփային տրվող հարցերը կարելի է գրել գրապատասխանի: Այդ դեպքում դրանց պատասխանելն ավելի դյուրին կլինի:

ՊԼԱՆ

1. Իմաստասերների մրցույթ:
2. Դավիթ իմաստասերին առաջարկված հարցերը.
 - ա) Ինչն է աշխարհում հավերժական:
 - բ) Ինչն է, որ անընդմեջ ընթացքի մեջ է և երբեք կանգ չի առնում:
 - գ) Ո՞րն է երկարակեցության գաղտնիքը:
 - դ) Ինչը կարող է մարդուն մոտեցնել Աստծուն:
 - ե) Ինչն է ամենից արագ թռչում:
3. Դավթի պատասխանները:
4. **Անհաղթ** պատվանունը:

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՆԱԶՈՐ ՍՐԲԻ ՄԱՍԻՆ

Ըստ Արամ Ղանալանյանի

Ըայ ժողովուրդը պաշտել է միջնադարի հանձարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն: Այնքան մեծ է եղել նրա «Մատյան ողբերգության» պոեմի հմայքն ու ներգործուն ուժը, որ ժողովուրդն այն հռչակել է սուրբ գիրք՝ անվանելով «Նարեկ», իսկ իրեն՝ բանաստեղծին, դասել է սրբերի շարքը՝ նրա մասին հորինելով պարմություններ:

Ծիծաղախիտ Վանա ծովակի ափին՝ համեստ տնակում, ապրում էին մարդ ու կին՝ Գնելն ու Շահանդուխտը: Ամուսինը ծուկ էր որսում, վաճառում, և ստացված եկամուտով ոչ միայն իրենք էին ապրում, այլև օգնում էին դրացիներին: Այդ բարի մարդիկ մի անփարատելի վիշտ ունեին. Աստված նրանց զավակ չէր պարգևում: Գնելն ու Շահանդուխտը շատ սրբերի դուռ գնացին, սակայն ապարդյուն:

— Ամենագորավոր սուրբը Գրիգոր Նարեկացին է, գնացեք նրա շիրմին այցի, և նա ձեզ զավակ կտա, — խորհուրդ տվեցին հարևանները:

Ամուսիններն այդպես էլ արեցին: Եվ հրաշք կատարվեց. չանցած ինն ամիս՝ արու զավակ ունեցան և սրբի պատվին անվանեցին Գրիգոր:

Երբեմնի խաղաղ ու լուռ տնակը լցվել էր ուրախությամբ, երեխայի գրնգուն ծիծաղով: Ծտողներն առավոտ-երեկո փառաբանում էին սուրբ Գրիգոր Նարեկացուն:

Երբ տղան դարձավ յոթ տարեկան, Գնելն ու Շահանդուխտը որոշեցին դարձյալ ուխտի գնալ սրբի շիրմին: Վարդավառ էր, օրը՝ տաք ու հաճելի: Այդ խաղաղ պահին որտեղից որտեղ անսպասելիորեն մի չար քամի բարձրացավ, գալարվեց օծապտույտ և իր հոսանքի մեջ առնելով տղային՝ օդ բարձրացրեց, ապա նետեց ծովակի կապույտ ալիքների հորձանուտը: Շահանդուխտը ճչաց աղեկտուր, Գնելն

իրեն ջուրը նետեց՝ տղային փրկելու, բայց ոչինչ անել չկարողացավ: Երեխան անհետացել էր ջրերի խորխորատում:

Մի քանի օր խելճ ծնողները դեգերում էին ծովափին, կորած գավակին կանչում, ողբում: Համոզվելով, որ անդառնալիորեն կորցրել են փոքրիկ Գրիգորին՝ Գնելն ու Շահանդուխտը կոտրված սրտով բռնեցին տունդարձի ճանապարհը: Եվ քանի որ արցունքը չէր կտրվում նրանց աչքերից, կորցրին տեսողությունը, կուրացան:

Անցավ մեկ տարի: Ստեփանում էր Վարդավառի տոնը, դրացիներն ասացին.

— Արտասուք թափելով ձեր որդուն չեք վերադարձնի: Եղածը եղած է: Եկեք դարձյալ գնանք Նարեկացու գերեզմանը, աղաչենք, որ գոնե ձեր աչքերը բուժի:

Ողջ գյուղով ճամփա ընկան դեպի սրբի տապանը: Հենց մոտեցան, մեկ էլ տեսան մանուկ Գրիգորին, որ ջրաթաթախ նստած էր տապանաքարի վրա: Մարդիկ իրենց աչքերին չէին հավատում, մտածում էին՝ տեսիլք է: Այդ պահին երեխան վազելով եկավ և փարվեց ծնողներին:

Երբ ընդհանուր հուզմունքը մի քիչ հանդարտվեց, Գնելն ասաց.

— Որդիս, պատմիր, ի՞նչ պատահեց քեզ, որտե՞ղ էիր և հիմա ինչպե՞ս հայտնվեցիր այստեղ:

— Երբ ընկա ծովը, — պատմեց տղան, — հայտնվեց սուրբ Գրիգոր Նարեկացին, ձեռքիցս բռնեց և իր հետ տարավ ծովի հատակը: Գավազանը խրեց տիղմի մեջ, ձերմակ թիկնոցը հանեց ու փռեց գավազանի վրա՝ սարքելով վրան: Ջրերը հետ գնացին ու վրանի վրա կամար կապեցին: Սուրբը չորս կողմը խաչակնքեց, ու լճի հատակը լուսավորվեց արևի տաք ճառագայթներով: «Տղանս, — ասաց նա, — այստեղ մնա, մինչև վերադառնամ»: Հաջորդ օրը եկավ և երկու նշխար բերեց: Դրանք կերա ու զորացա: Այսպես ամեն օր: Իսկ այսօր ասաց. «Քո հայրն ու մայրը գալիս են ուխտի: Հասել է մեր բաժանման ժամը: Վերցրու այս թաշկինակը, քսիր ծնողներիդ աչքերին: Նրանք նորից կտեսնեն Աստծո լույսը»: Այսպես խոսեց սուրբ Գրիգոր Նարեկացին, և ես անգամ չհասցրի նրա աջը համբուրել, հայտնվեցի տապանաքարի վրա:

Տղան թաշկինակը տվեց ծնողներին: Գնելն ու Շահանդուխտը այն թեթևակի հպեցին իրենց աչքերին, և նույն պահին նրանց բիրբերին լույս իջավ: Կրկին տեսան պաշտելի գավակին, Վանա ծովակը, Աղթամար կղզին: Հրաշքի ականատեսները գոհունակություն հայտնեցին Աստծուն և փառաբանելով ամենագոր սրբին՝ Գրիգոր Նարեկացուն՝ ուրախ-ուրախ վերադարձան իրենց տները:

ՊԼԱՆ

1. Միջնադարի հանճարեղ բանաստեղծը:
2. Անփարավորելի վիշտ:
3. Փոքրիկ Գրիգորը:
4. Ծովակի հափալում:
5. Երկրորդ հրաշքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասխարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) ծիծաղախիտ ծովակ, դրացի, զավակ պարզել, ուխտի գնալ սրբի շիրիմին, արու զավակ, Վարդավառ, չար քամի, օձապտույտ, կապույտ ալիքների հորձանուտ, խորխորատ, դեգերել, անդառնալիորեն կորցնել, նշխար, աջը համբուրել.

բ) Աստված, Շահանդուխտ, Վանա ծովակ, սուրբ Գրիգոր Նարեկացի, Աղթամար կղզի:

ՀԵՔԻԱԹ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Ըստ Վանիկ Սանթրյանի

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակար չկա...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Ստամբուլ քաղաքում սուգ էր: Մեծ սուլթանը երեք օր էր՝ քուն ու դադար կորցրած՝ բերանը պատառ չէր դրել: Նրա նորածին զավակը՝ ապագա գահակալը, հիվանդացել ու կաթ չէր ուտում, իսկ թագուհին վշտից քարացել էր. ո՛չ խոսում էր, ո՛չ ուտում, ո՛չ խնամում երեխային: Բժիշկները և հեքիմները խոստովանել էին, որ իրենք անգոր են, չեն կարող բուժել թագուհուն և նորածնին: Սուլթանի հրավիրած իմաստունները խորհուրդ էին տվել.

— Տիեզերքի՛ արեգակ, աշուղներին հրավիրիր. թող նրանք երգեն իրենց տաղերը: Թագուհին կուրախանա, կարտասվի և կթափվի: Միայն մայրը կարող է փրկել գահաժառանգին, նախ մորը պիտի փրկել:

Սուլթանը կատարեց իմաստունների խորհուրդը, սակայն ոչ մի աշուղ չկարողացավ թագուհուն դուրս կորզել թմբիրից:

Յուրաքանչյուր կես ժամը մեկ սողալով ներսուդուրս անող պալատականները բարի լուր չէին բերում: Հրամայված էր՝ եթե հրաշք տեղի ունենար, ուրախության աղաղակով պիտի ներս մտնեին, ձչոցով, ողջ հասակով կանգնած: Բայց... սողում էին, ու աղաղակ չկար:

Սուլթանը ծափ զարկեց: Չորեքթաթ ներս սողաց վեզիրը:

— Հը՛, ի՛նչ կա:

— Հուսադրիչ լուր ունեմ, տեր իմ: Ասում են՝ մի աշուղ կա հայոց աշխարհում, աշուղ Նահապետ Քուչակը: Նրա երգը, ասում են, սպեղանի է:

Սուլթանի աչքերում հուսո կայծ երևաց:

— Գտե՛ք ու բերե՛ք, — հրամայեց:

— Մարդ եմ ուղարկել, տեր իմ:

— Մարդ եմ ուղարկել, տեր իմ, — սուլթանը ծաղրաբար կրկնեց վեզիրի ասածը, — գուցե զենք, գուցե զո՞րք ուղարկեիր, գուցե սպանո՞ւյիր, որ եթե չգաս, գլուխդ կթոցնենք: Հը՛, հիմար:

— Ո՛չ, տեր իմ, ո՛չ: Խնդրագիր եմ ուղարկել: Բանաստեղծի դեմ չի կարելի սուր ձո՞ճել:

— Փանք աստծո, մի խելացի բան ասացիր: Կորիր աչքիցս:

Սուլթանի բանագնացները Նահապետ Քուչակին գտան Վասպուրականի Խառակոնիս գյուղում ու աղաչանքով հրավիրեցին պալատ՝ բուժելու թագուհուն:

Ու երգեց Քուչակը թագուհու համար, այնպես երգեց իր կախարդական տաղերը, որ թագուհին անզուսպ հեկեկաց, ու արցունքի հետ նրա մարմնից դուրս եկան ցավերը: Թագուհին ու թագաժառանգը փրկված էին:

Ոսկեհուռ գահին բազմել է սուլթանը, հայ տաղասացին նստեցրել է կողքին:

— Ի՞նչ գանձեր ես ուզում, բանաստեղծ, ի՞նչ ցանկություն ունես,— Քուչակին դիմեց սուլթանը,— լեզուդ ինչ պտտի, քոնն է:

Բանաստեղծը ոչինչ չխնդրեց: Բայց երբ սուլթանը շատ ստիպեց, ասաց.

— Ստամբուլից մինչև Խառակոնիս կառուցել տուր յոթ եկեղեցի և յոթ կամուրջ: Ասում են՝ յոթերորդ եկեղեցու բակում այժմ էլ խաղաղ ննջում է միջնադարի անմահ բանաստեղծ Նահապետ Քուչակը:

ՊԼԱՆ

1. Սուգ է Սյամբուլ քաղաքում:
2. Թագուհուն և գահաժառանգին փրկելու անօգուտ ջանքեր:
3. Քուչակը հրավիրվում է պալատ:
4. Երգը՝ սպեղանի:
5. Յոթ եկեղեցի և յոթ կամուրջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապախարակին գրել հեպրեյալ բառերն ու բառակապակցությունները.

ապագա գահակալ, վշտից քաքանալ, թագուհուն դուրս կորզել թմբիրից, չորեքթաթ սողալ, խնդրագիր, Վասպուրականի Խառակոնիս գյուղ, բանագնացներ, կախարդական տաղեր, անզուսպ հեկեկալ, ոսկեհուռ գահ, տաղասաց:

2. Դասարանում ընթերցել Նահապետ Քուչակի հայրեններից մի քանիսը:

3. Լսել երգեր Քուչակի հայրենների թեմաներով:

ԳՈՐԾՍ ՄՆԱ ՀԻՇԱՏԱԿՈՂ

Ըստ Գևորգ Դևրիկյանի

Անիի բազում եկեղեցիների և ապարանքների ճարտարապետ Տրդատը ժամանել էր Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս: Ամեն ինչ այստեղ նոր էր նրա համար և հետաքրքիր: Շրջում էր քաղաքում, ուսումնասիրում յուրաքանչյուր կառույց: Հոյակերտ տաճարներով, շատրվաններով ու պուրակներով այս քաղաքը մի սքանչելի աշխարհ էր ճարտարապետի համար:

Սակայն ուր էլ գնար, որքան էլ զարմանալի բաներ տեսներ, ձգտում էր կրկին ու կրկին լինել Ավգուստոն կոչվող հրապարակում, ուր արծաթի և ոսկու մեջ շողշողում էր Բյուզանդիայի փառքը՝ Սուրբ Սոֆյայի տաճարը: Կոստանդնուպոլիս գալուց

ի վեր Տրդատը քանի անգամ էր կանգնել տաճարի առջև, դիտել որմ առ որմ, մուտք առ մուտք, հայացքով չափել բարձրությունը և ցավով նայել այն պարապությանը, ուր մի ժամանակ եղել էր գմբեթը: Կառուցումից երկու տասնամյակ անց ուժեղ երկրաշարժից գմբեթը փլվել էր: Ոչ մի ճարտարապետ հանձն չէր առել վերաշինելու:

Շոգ միջօրե էր: Տրդատը, կանգնած տաճարի դիմաց, մտքում չափում էր փլված գմբեթի մեծությունը և հաշվարկներ էր անում, երբ նրան մտեցավ պալատական մի պաշտոնյա:

— Անի մեծահամբավ քաղաքի ճարտարապետ Տրդատը տաճարն է դիտում, — հարցրեց նա:

Տրդատը գլխով արեց և ասաց.

— Տաճարը հոյակապ է և արժանի իր փառքին: Ափսոս, որ գրկվել է պսակ-գմբեթից:

— Դա օգոստոսափառ կայսրի սրտի ցավն է: Փլուզումից հետո բազմիցս հրավիրել է անվանի շատ ճարտարապետների, որ վերականգնեն գմբեթը, սակայն ապարդյուն:

— Անհրաժեշտ է պարզել փլուզման պատճառը. կարծում եմ՝ սխալ հաշվարկ է եղել:

— Կհամաձայնեմ հանձն առնել կառուցումը:

— Նման մտքից վախ չունեմ:

Գմբեթի վերակառուցման գործը հանձնարարվեց հայ ճարտարապետին:

Ամիսների երկար տքնանքից հետո որմերին ձուլված չորս հզոր մույթերի վրա ճարտարապետը կանգնեցրեց գմբեթը՝ նախկինից չավելի ամուր ու գեղեցիկ: Եվ որպես հայ մտքի հաղթանակ՝ գմբեթն օղակող քարե գոտու վրա հաստատուն տառերով փորագրեց՝ *Տրդատ*:

Մեծ տոնահանդես էր Կոստանդնուպոլսում. հասել էր տաճարի վերածման օրը: Բոլորը շտապում էին Ավզուստեոն հրապարակ՝ մասնակցելու հանդիսավոր արարողությանը: Պատվավոր հյուրերին հատկացված տեղում կանգնած էր Տրդատ ճարտարապետը. նա գործը հաղթական ավարտին էր հասցրել:

Հաջորդ օրը կայսրը Տրդատին իր ապարանքը հրավիրեց, խոստացավ պատիվ, տիտղոս, փառք, հարստություն, եթե նա համաձայնի մնալ Կոստանդնուպոլսում:

Տրդատը թեթևակի խոնարհվեց և բարեկրթորեն պատասխանեց.

— Խորին շնորհակալություն եմ հայտնում առաջարկության համար: Սակայն պետք է մերժեմ, որովհետև ինձ է սպասում անավարտ տաճարը Անի քաղաքիս: Շատ հաճելի է ինձ մատուցվող պատիվը, բայց հայրենիքս առավել թանկ է:

Երկու օր անց Տրդատը ուղևորվեց հայրենիք:

ՊԼԱՆ

1. Տրդատ ճարտարապետը Կոստանդնուպոլսում:
2. Սուրբ Սոֆյայի տաճարը:
3. Գմբեթի վերականգնումը Տրդատի ձեռքով:
4. Օծման արարողություն:
5. Շոյիչ առաջարկ:
6. Անիի անավարտ տաճարի կանչը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապահպակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) արծաթի և ոսկու մեջ շողշողալ, որմ առ որմ, շոգ միջօրե, մեծահամբավ Անի քաղաքի արքունի ճարտարապետ, պսակ-գմբեթ, որմերին ծուլված չորս հզոր մույթեր, երկար տքնանք, գմբեթն օղակող քարե գոտի, հանդիսավոր արարողություն, թեթևակի խոնարհվել, բարեկրթորեն պատասխանել.

բ) Բյուզանդիա, Կոստանդնուպոլիս, Սուրբ Սոֆյայի տաճար, Ավգուստոնոս հրապարակ:

2. Բացադրել որմ և մույթ բառերը:

ՉՎԱՐԹՆՈՑ

Հար փարբեր աղբյուրների

643 թվականն էր: Գարունն արդեն լիիրավ տեր ու տնօրեն էր Հայաստան աշխարհում, և Վաղարշապատում նույնիսկ շոգ էր:

Մայր տաճարի դիմաց գտնվող վեհարանի սենյակներից մեկում, սեղանի վրա փռված թղթերի վրա հակված, գրուցում էին երեք մարդ: Մեկը հայոց Ներսես Երրորդ կաթողիկոսն էր: Մյուսը կաթողիկոսի տեղապահն էր: Ի տարբերություն այս երկու վեղարավոր անձանց՝ երրորդը աշխարհական էր՝ Հայաստան աշխարհում ծանաչված ճարտարապետ և շինարար Վրթանես վարպետը:

— Կառուցվելիք տաճարի նախագիծը ինձ հաճելի երևաց, որոյանկ,— ասաց վեհը,— վստահ եմ, որ Մասիսների համայնապատկերի վրա այն առավել վսեմ և պերճաշուք կլինի: Որքան ժամանակ է պետք կառույցն ավարտին հասցնելու համար:

— Տասը տարի, վեհափան, եթե ինձ տրամադրեք բանվորներ և անհրաժեշտ շինանյութ:

— Ես արդեն պատրաստել եմ նամակներ՝ մեր նախարարներին և երևելիներին ուղարկելու համար, և խնդրել եմ, որ օգնեն: Անհոգ եղիր: Այժմ գնա խաղաղությամբ և սպասիր իմ կանչին:

Ներսես Երրորդ կաթողիկոսը նախապես շրջել էր ու ընտրել տաճարի տեղը: Դարեր առաջ Վաղարշապատից 3 կմ հարավ ընկած հարթ տարածության վրա կանգնած էր հեթանոս հայերի Տիր աստծո մեհյանը: Տասը դար էր, ինչ այն փլուզվել էր: Տեղանքի բացառիկ գեղեցկության համար կաթողիկոսն ընտրեց այդ տարածքը:

Չանցած մեկ ամիս՝ սկսվեց Սուրբ Գրիգոր եկեղեցու կառուցումը: Դա եռահարկ, շքեղ հորինվածք էր՝ հինգ մուտքերով, միայնաց շատ մոտիկ պատուհաններով:

Տասը տարի ընդարձակ շինհրապարակում աշխատում էին հազարավոր մարդիկ, քարգործ վարպետներ: Նրանց հրաշագործ ձեռքերը ծնում էին քարե ժանյակներ, արծիվներ, նուռ ու խաղող, տերև ու ոստ:

Վերջապես 652 թվականի սեպտեմբերյան մի օր տաճարի շինարարությունն ավարտվեց: Դեպի Վաղարշապատ տանող ծանապարհներին ասեղ գցելու տեղ չկար: Գալիս էին սայլերով, ձիով, ոտքով, գալիս էին մատաղացու ոչխարներով,

երինջով ու արաղաղով: Գալիս էին երգով ու նվագով, բամբիտով ու ծնծղայով, գուննա-դիտով ու պարկապզուկով:

Սկսվեց տաճարի օժման արարողությունը: Գմբեթի տակ ելևէջեցին պատարագի անուշ մեղեդիները, տարածվեց խնկի մաքրագործող բուրմունքը:

Այսպես հիմնադրվեց Սուրբ Գրիգոր տաճարը, որը հետագայում վերանվանվեց Զվարթնոց:

Ժողովրդական ավանդությունն ասում է, որ տաճարի ծանրությունն իրենց վրա կրող մույթերը եղբայրներ են եղել: Տարիներ ու դարեր նրանք սրբությամբ պահում էին տաճարը: Բայց մի օր հոգնեցին, և յուրաքանչյուրը մտքում որոշեց մի քիչ հանգստանալ: Իրարից թաքուն առանձին-առանձին բեռնաթափվեցին, հանգստացան: Եվ քանի որ եղբայրներն արդեն միասնական ու ազնիվ չէին միմյանց հանդեպ, զարմանահրաշ տաճարը կործանվեց:

ՊԼԱՆ

1. Երեք անվանի այր:
2. Ճարտարապետի ներկայացրած նախագիծը:
3. Տաճարի կառուցման վայրը:
4. Սուրբ Գրիգոր տաճարի շինարարությունը:
5. Համաժողովրդական տոնախմբություն:
6. Ժողովրդական ավանդություն Զվարթնոցի մասին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

Լիիրավ Ներսես Երրորդ կաթողիկոս, կաթողիկոսի տեղապահ, վեհարան, վեղարավոր, աշխարհական, Մասիսների համայնապատկեր, բանբեր, քարգործ վարպետներ, քարե ժանյակներ, բամբիռ ու ծնծղա, օժման արարողություն, գմբեթի տակ ելևէջել, խնկի մաքրագործող բուրմունք, Սուրբ Գրիգոր տաճար:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Զվարթնոց բառը ոչ միայն նշանակում է ուրախ, խնդուն, այլև հրեշտակ: Զվարթնոց, այսինքն՝ հրեշտակների տուն:

ԴԵՂ ՍԻՐՈ

Ըստ Վիգեն Խեչումյանի

Մեռնում էր աշնան արեգակը, լույսը գունատ էր, ջերմությունից գուրկ թեք ճառագայթները լիզում էին տների հողե պատերը:

Տարեց մի տղամարդ նստած էր դռան շեմին: Շուտով ձմեռը ծանր կնստի, անտառ տանող արահետներին ձյուն կիջնի: Ձմեռը մարդկանց ցավեր ու հիվանդություններ կբերի, և այն ծաղիկներն ու բույսերը, որ ամբողջ ամառ հավաքել է դեղորայք պատրաստելու համար, կբավականացնեն արդյոք:

Քամի բարձրացավ, պտույտ տվեց ու թերթեց կողքին դրված հին բժշկարանը: Տղամարդը կարդաց կարմիր մի տող. «Դեղ սիրո»: Ժպտաց, միտքը սահեց հետ:

Տարիներ առաջ էր, երիտասարդ էր: Հայրը՝ Սիմեոնը, բժիշկ էր, ամեն խոցի դեղ էր տալիս, ոտքի կանգնեցնում անգամ ծանր հիվանդին:

Ձմռան երկար գիշերներին հայր ու որդի նստում էին ճրագի առջև. հայրը թերթում էր բժշկարանը, կամաց-կամաց որդուն մասնակից էր դարձնում իր արվեստի գաղտնիքներին: Երբ բացվում էր գարունը, նրանք գնում էին անտառ, ելնում սարերը, ծաղիկներ, արմատներ, բույսեր էին հավաքում դեղորայքի համար: Հիվանդի մոտ էին գնում միասին, Գնելը օգնում էր հորը:

Հետո հայրը մահացավ՝ Գնելին թողնելով բժշկելու արվեստն ու իր բժշկարանը: Գնելը սարսուռով թերթում էր այդ մատյանը: «Վերցրո՛ւ վաղամեռուկ և աղավաբուր ծաղիկների հյութը, մի քիչ խեժ, բարկ քացախով եփիր, մինչև կես կթղա մնա և աղոթիր: Կոկորդի ցավի համար է»: Սրա դիմաց հոր ձեռքով գրված էր. «Փորձյալ է»: Ապա հիշատակված էին այն մարդկանց անունները, որոնք ընդունել էին այդ դեղը և բուժվել:

Հին բժշկարանի մեջ կար մի դեղատոմս, որի դիմաց ոչինչ չէր գրված: Գնելն այդ դեղատոմսը շիկնելով էր կարդում, որովհետև ջահել էր, ու մտքի մեջ հարևանի աղջիկն էր՝ Հրանուշը: Խոսում հոնքեր ուներ Հրանուշը. նրանք մերթ անշարժ կամար էին կապում քիչ տամուկ աչքերի վրա, մերթ մեկը ձգվում էր վեր, մյուսը՝ իջնում, կամ հավաքվում էին քթարմատի մոտ ու մթնեցնում հայացքը: Գնելը սարսուռում էր այդ մութ նայվածքից ու իսկույն հեռանում էր:

Այդ տարի գարունը եկավ մի օրվա մեջ: Առավոտյան Գնելը կտրեց Հրանուշի ճանապարհը, որ Վարսենիկի հետ աղջիկներից առանձին էր քայլում:

Աղջիկը խոժոռեց դեմքը և շրջվեց դեպի Վարսենիկը և ասաց.

— Ասա՛ թող քար չդառնա ջրիս ճամփին, ասա՛ իրեն չեմ սիրում:

Դրսում բացվում և փրփրում էր գարնան առաջին օրը. սարալանջի մացառների մեջ խոսում էր կաքավը: Գնելը շտեղից ելավ, գնաց թռչնի ձայնին:

Իրիկունն ուշ տուն դարձավ: Իմացավ, որ Հրանուշը հիվանդ է, որ իրեն փնտրել են:

Մախաղի մեջ մի փունջ ցայգածաղիկ կար: Դողացող մատներով հանեց, մամլեց, խառնեց օշարակի հետ, լցրեց մի կթղայի մեջ ու դուրս թռավ տնից:

Պառկած էր Հրանուշը՝ գլուխը ծածկած ծաղկավոր հաստ վերմակով, և ինչքան էլ մայրը խնդրում-աղաչում էր, վերմակը չէր հեռացնում երեսից:

Տուն եկավ Գնելը մթնած: Խորշում տեղավորեց ձեռքի կթղան, նստեց, գլուխը դրեց ձեռքերին: Ինչի՞ն էր պետք գարունը, եթե Հրանուշը իր երեսն էլ չէր ուզում տեսնել: Ի՞նչ էր անելու հին բժշկարանը, որտեղ բազմաթիվ սպեղանիների դիմաց արդեն գրել է. «Փորձյալ է»:

Հետո ուշ էր, դրսում գիշեր էր: Վարսենիկը կանգնել էր գլխավերևում, խնդրում էր. «Ա՛ռ, կո՛ւմ արա, գլխիդ ցավը կանցնի: Ես կում արի, իմ գլուխը էլ չի ցավում»:

Գնելը կթղան մոտեցրեց շուրթերին, ըմպեց մի կում և նոր միայն լայն բացեց աչքերը: Կթղայի մեջ մի կում սիրո դեղ էր մնացել. խմել էր միամիտ աղջիկը գլխացավի դիմաց, մնացածը տվել էր Գնելին:

Տարեց մարդը ժպտաց իր հուշերին, անցած օրերին, ձեռքով արեց մարգերի վրա կռացած կնոջը և բժշկարանի լուսանցքում «Դեղ սիրո», «Փորձյալ է» բառերի տակ ավելացրեց. «Վարսենիկ՝ դուստր Անանիայի, որ եղև կողակից նվաստ բժշկիս Գնելի՛ որդվո Սիմեոնի»:

ՊԼԱՆ

1. Աշունն ու փարեց փղամարդը:
2. Հին բժշկարանը:
3. Վերհուշ. հայրը՝ բժիշկ Սիմեոնը:
4. Հրանուշը:
5. Խոսքովանություն և մերժում:
6. Սարերում:
7. Հիվանդ Հրանուշը:
8. Գլխացավի դեղը:
9. Նշում հին բժշկարանում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադասագրական գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները

աշնան արեգակ, գունատ լույս, ձմեռը ծանր նստել, սպեղանի, վաղամեռուկ, աղափնաբուր ծաղիկ, բարկ քացախ, կթղա, խոսուն հոնքեր, տամուկ աչքեր, մութ նայվածք, քար դառնալ ջրի ծամփին, կաքավը խոսել, մախաղ, ցայգածաղիկ, օշարակ, «Վարսենիկ՝ դուստր Անանիայի, որ եղև կողակից նվաստ բժշկիս Գնելի որդվո Սիմեոնի»:

2. Աշակերտներին առաջարկել թվարկել ծաղիկների և բույսերի անուններ, որոնք օգտագործվում են բժշկելու համար:

ԵՐՁԱՆԻԿ ԱՐՔԱՅԱԶՆԸ

Ըստ Օսկար Ուայլդի

«Քաղաքի կենտրոնում՝ երկնասլաց պատվանդանի վրա, Երջանիկ արքայագնի արձանն էր՝ ոտքից գլուխ պատված ոսկու թերթերով, աչքերի տեղ՝ փայլուն շափյուղաներ, սուսերի երախակալին՝ շողշողուն կարմիր սուտակներ:

Մի գիշեր քաղաքի վրայով թռչում էր ծիծեռնակը: Նրա ընկերները վեց շաբաթ առաջ չվել էին Եգիպտոս, իսկ ծիծեռնակը հետ էր ընկել երամից: Ընկերներին հասնելու համար նա թռավ ամբողջ օրը և գիշերը որոշեց մնալ քաղաքում: Թառեց Երջանիկ արքայագնի ոտքերի մոտ ու կամեցավ քուն մտնել: Հենց այն է՝ գլուխը թևի տակ պետք է դնել, ջրի մի կաթիլ ընկավ վրան: Ապա երկրորդը, երրորդը: Թռչնակը վեր նայեց ու ինչ տեսավ. Երջանիկ արքայագնի աչքերը լի էին արցունքով, և կաթիլները գլորվում էին ոսկյա այտերն ի վար:

— Ինչո՞ւ ես լալիս, արքայագն, — ասաց նա, — տես, թրջեցիր ինձ:

— Երբ ես ողջ էի և մարդկային սիրտ ունեի, — պատասխանեց արքայագնը, — չգիտեի՝ ինչ է արտասուքը, քանի որ ապրում էի պալատում, ուր վշտի մուտքն արգելված էր: Չգիտեի՝ ինչ կա պալատի պատերից դուրս: Իսկ այժմ ինձ կանգնեցրել են այստեղ, որտեղից պարզ երևում է մարդկանց թշվառությունը: Ու թեև կապարե սիրտ ունեմ, դարձյալ անկարող եմ զսպել արցունքներս: Այս պահին, օրինակ, այնտեղ՝ հեռվում, մի աղքատիկ տնակ եմ տեսնում: Բաց պատուհանից երևում է սեղանի մոտ նստած մի կին, որը կոշտացած մատներով ծաղիկներ է ասեղնագործում թագուհու զգեստի վրա: Սենյակի մի անկյունում պառկած է այդ կնոջ հիվանդ տղան: Նա ջերմություն ունի, և սիրտը նարինջ է ուզում: Բայց մայրը ջրից

բացի ոչինչ չունի: Ծիծեռնակ, փոքրիկ ծիծեռնակ, սուսերիս երախակալի սուտակը չեմ տանի նրանց: Իմ ոտքերը գամված են պատվանդանին, և ես չեմ կարող:

— Թեև այստեղ սաստիկ ցուրտ է, բայց քեզ չեմ մերժի, մի գիշեր կմնամ ու կլինեմ քո սուրհանդակը,— հառաչեց բարեսիրտ թռչնակը:

Նա հանեց արքայազնի սուսերի խոշոր սուտակն ու կտուցն առած՝ ճախրեց, հասավ աղքատիկ տանը: Ներս թռավ, սուտակը դրեց կնոջ մատնոցի կողքին ու հետ եկավ Երջանիկ արքայազնի մոտ, պատմեց ամեն ինչ ու ավելացրեց.

— Շատ տարօրինակ է, որ այս ցրտին չեմ մրսում:

— Պատճառն այն է,— հրճվանքով ասաց արքայազնը,— որ բարի գործ ես կատարել:

Հաջորդ գիշեր, երբ լիալուսին էր, և ծիծեռնակը պատրաստվում էր թռչելու Եգիպտոս, արքայազնն ասաց.

— Ծիծեռնակ, փոքրիկ ծիծեռնակ, խնդրում եմ, այս գիշեր էլ մնա ինձ հետ: Քաղաքի ծայրին՝ ձեղնահարկում, մի երիտասարդ եմ տեսնում: Նա ուզում է աշխատել, բայց չի կարողանում, որովհետև ցրտից սառել է, քաղցն էլ մյուս կողմից է տանջում: Կտուցով հանիք աչքերիս շափյուղաներից մեկն ու տանք այդ տղային:

— Չմտը եկավ արդեն,— պատասխանեց ծիծեռնակը,— և ուր որ է պաղ ձյուն կգա: Սիրելի արքայազն, ես այլևս անկարող եմ մնալ այս ցուրտ քաղաքում:

Բայց տեսնելով Երջանիկ արքայազնի՝ արցունքով լեցուն աչքերը՝ բարի ծիծեռնակը չդիմացավ և այս անգամ էլ կատարեց նրա խնդրանքը:

Երբորդ գիշերը եկավ հրաժեշտ տալու և վերջապես ուղղություն վերցնելու դեպի տաք Եգիպտոս: Բայց արքայազնը դարձյալ խնդրեց մնալ և իր մյուս աչքի շափյուղան հասցնել դժբախտության մեջ ընկած մի աղջկա:

— Այժմ դու կույր ես,— ասաց ծիծեռնակը՝ արքայազնի հանձնարարությունը կատարելուց հետո,— ինչպե՞ս կաքող եմ այսուհետև քեզ մենակ թողնել: Այլևս ոչ մի Եգիպտոս էլ չեմ թռչի և ընդմիշտ կմնամ քեզ հետ:

Եվ մնաց ծիծեռնակը ու ամեն օր թերթ առ թերթ պոկեց ոսկին, թերթ առ թերթ հասցրեց բոլոր նրանց, ովքեր քաղցած էին ու սառած, տնանկ էին ու կարոտյալ:

Մի օր էլ առատ ձյուն տեղաց: Խեղճ, փոքրիկ ծիծեռնակն այլևս անկարող էր դիմանալ ցրտին, բայց նա չէր կարող լքել արքայազնին, քանի որ շատ էր սիրում նրան: Զգաց, որ մեռնում է: Թառեց արքայազնի դեմքին, համբուրեց սև ակնախոռոչները և անշնչացած ընկավ նրա ոտքերի մոտ: Այդ պահին արձանի ներսից արտասովոր ճարձատյուն լսվեց, կարծես ինչ-որ բան պայթեց: Արքայազնի կապարե սիրտը ճաքեց և երկու կես եղավ:

ՊԼԱՆ

1. Երջանիկ արքայազնի արձանը:

2. Ճանապարհորդ ծիծեռնակը:

3. Երջանիկ արքայազնի վիշտը և խնդրանքը:

4. Բարի ծիծեռնակը:

5. Երկու անձնագոհ սիրտ:

6. Օգնություն կարողյալներին:

7. Ծիծեռնակի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասագրական գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

երկնասլաց պատվանդան, փայլուն շափյուղա, սուսերի երախակալ, շողշողուն կարմիր սուտակ, ոսկյա այտերն ի վար կաթիլներ գլորվել, ոտքերը գամվել պատվանդանին, արցունքով լեցուն աչքեր, ընդմիշտ մնալ, տնանկ ու կարոտյալ կապարե սիրտ, լիալուսին, ձեղնահարկ, սև ականախոռոչներ, արտասովոր ծարձատյուն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: *Օսկար Ուայլդը (1854–1900) անգլիացի նշանավոր գրող և քննադատ է:*

ՎԱՆԴԱԿՈՒՄ ԵՐԳԵԼ ՉԻ ԼԻՆԻ

Հար Սոմերսեթ Մոմսի

Միամի արքան ուներ յոթ դուստր: Նրանցից վեցը չար էին ու դաժան, իսկ յոթերորդը՝ Մերին, ոչ միայն գեղեցիկ էր, այլև սքանչելի բնավորության տեր:

Միամի արքան մի սովորություն ուներ. իր ծննդյան օրը նվերներ ստանալու փոխարեն ինքն էր տալիս: Մի անգամ՝ դարձյալ իր տարեդարձի օրը, նա դուստրերից յուրաքանչյուրին ոսկե շքեղ վանդակների մեջ մեկական հիանալի թութակ նվիրեց: Աղջիկները նրանց շատ սիրեցին և սկսեցին խոսել սովորեցնել:

Մի օր, երբ արքայադուստր Մերին գնաց իր թութակին բարի լույս մաղթելու, նրան անկենդան գտավ: Սկսեց հոնգուր–հոնգուր լաց լինել: Հանկարծ ներս թռավ մի չքնաղ թռչնակ և հիանալի մի երգ սկսեց թագավորական պարտեզում գտնվող լճակի, ոսկե ձկնիկների, վարսաթափ ուռենիների ու վարդի թփերի մասին: Երբ երգն ավարտվեց, արքայադուստրն այլևս չէր լալիս:

— Ինչ լավ երգ էր, — ուրախացավ նա:

Թռչունը գլուխ տվեց և ասաց.

— Կցանկանայիր քո թութակի փոխարեն ինձ պահել: Ճիշտ է, ես այդքան գեղեցիկ չեմ, բայց քեզ համար կարող եմ երգել:

Արքայադուստրը ուրախությունից ծափ տվեց: Այդ օրվանից նրանք անբաժան էին: Թռչնակը ուտում էր աղջկա ափսեից, խմում նրա բաժակից:

Մերիի չար քույրերը սկսեցին նախանձել նրան: Իսկ Մերին, արտույտի պես երգելով, վազում էր սենյակից սենյակ, թռչնակն էլ ծախրում էր նրա շուրջը, սոխակի պես դայլայլում:

Մի օր արքայադուստրերը Մերիին ասացին.

— Զո թռչունը ցանկացած պահի կարող է փախչել: Նրան վանդակը մտցրու և այլևս բաց մի թող: Միայն այդ դեպքում կարող ես ապահով լինել, որ նա չի փախչի:

Եվ այսպես Մերին որոշեց այլևս բաց չթողնել թռչնակին: Սա շատ զարմացավ, երբ մի օր արքայադուստրը իրեն դրեց ոսկե վանդակի մեջ: Թռչունը մի պահ քարացավ, պապ նստելով փղոսկրյա թառին՝ ասաց.

— Սա ի՞նչ կատակ է:

— Կատակ չէ: Մայրիկի կատուններն այս գիշեր սենյակս էին մտել: Ինձ թվում է, որ դու վանդակում ավելի ապահով կլինես:

— Բայց այստեղ ինձ բոլորովին դուր չի գալիս:

— Լավ, միայն այս գիշեր համբերիր, առավոտյան քեզ բաց կթողնեմ:

Թռչնակը գլուխը դրեց թևի տակ ու խոր քուն մտավ: Բայց ոչ առավոտյան, ոչ էլ հաջորդ օրերին Մերին թռչունին բաց չթողեց:

— Բաց վանդակի դուռը: Ես ուզում եմ թռչել գնալ, ազատ ճախրել:

— Ավելի լավ է՝ նստես այդտեղ՝ քո հիանալի ոսկե վանդակում: Օրը երեք անգամ նաժիշտները քեզ ուտելիք ու միրգ կբերեն: Ես քեզ վանդակ եմ դրել, որովհետև շատ եմ սիրում: Ավելի լավ է երգես ու մոռանաս վշտերդ:

— Ինչպե՞ս կարող եմ երգել: Ես ուզում եմ լինել ծառերի, թփերի վրա, բրնձի կանաչ արտերի մեջ:

Հաջորդ առավոտ արքայադուստրը վազեց դեպի վանդակը և սարսափած ճչաց: Թռչնակն ընկած էր վանդակի հատակին: Աղջիկը շտապ բացեց դռնակը, նրան դուրս բերեց և թեթևացած շունչ քաշեց. թռչնակի փոքրիկ սիրտը դեռ բաբախում էր:

— Արթնացիր, թռչնակ իմ, արթնացիր, — ճչաց նա:

Նրա արցունքներն ընկան թռչունի վրա, և նա բացեց աչքերը: Տեսնելով, որ այլևս վանդակում չէ, ասաց.

— Ես չեմ կարող երգել, եթե ազատ չեմ, իսկ եթե չերգեմ, կմեռնեմ:

Արքայադուստրը խոր հառաչեց.

— Ստացիր ուրեմն քո ազատությունը: Ես փակեցի քեզ ոսկե վանդակում, որովհետև սիրում էի ու ցանկանում, որ ամբողջովին իմը լինես: Գնա, թո՛իր դեպի լճափի ծառերը, ճախրիր բրնձի կանաչ արտերի վրայով ու երջանիկ եղիր, ինչպես դու ես ուզում:

Արքայադուստրը չկարողացավ զսպել արցունքները, որովհետև շատ դժվար է, երբ ուրիշի երջանկությունը քոնից բարձր ես դասում:

ՊԼԱՆ

1. Սիամի արքայի դուստրերը:
2. Արքայի ընծան:
3. Երգող թռչնակը:
4. Մերիի ու թռչնակի բարեկամությունը:
5. Նախանձ արքայադուստրերի խորհուրդը:
6. Ազատություն տենչացող թռչնակը:
7. Ուրիշի երջանկությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպակին գրել հեղուկալ բառերն ու բառակապակցությունները.

սքանչելի բնավորություն, ծննդյան օր, ոսկե շքեղ վանդակների մեջ մեկական թութակ, հոնգուր-հոնգուր լաց լինել, թագավորական պարտեզում գտնվող լճակ, վարսաթափ ուռենիներ, արտույտի պես երգել, սենյակից սենյակ, սոխակի պես դայլայլել, նաժիշտ, հեծկլտալ, փղոսկրյա թառ, ուրիշի երջանկությունը բարձր դասել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Վիլյամ Սոմերսեթ Մոեմը (1874-1965) անգլիացի գրող է, սպացել է բժշկական կրթություն: «Սպրկություն մարդկային» վեպը որոշ չափով ինքնակենսագրական է: Հայտնի են նրա «Լուսին և վեցպենսանոց», «Թափրոն», «Ածելու սայրը» վեպերը, ինչպես նաև բազմաթիվ պատմվածքներ և նորավեպեր:

ՍԱՄՍՈՆ ԵՎ ԴԱԼԻԼԱ

Ըստ Աստվածաշնչի

Աստված իսրայելցիներին պատգամել էր ապրել ազնիվ ու արդար աշխատանքով, սիրել մարդկանց, օգնել միմյանց: Սակայն նրանք, ընդդիմանալով աստվածային պատվիրաններին, անօրինություններ էին անում, բանսարկությանը, գողությանը, խաբեբայությանը էին զբաղվում: Զայրացավ Տերը և քառատուն տարով նրանց դրեց փղշտացիների լծի տակ:

Այդ ժամանակ Իսրայելում մի մարդ ու կին էին ապրում: Սրանք հավատում էին Աստծուն, կատարում նրա պատվիրանները: Սակայն այս մարդիկ մի մեծ վիշտ ունեին. անզավակ էին:

Բայց ահա կատարվում է անսպասելին: Մի օր հայտնվում է Տիրոջ հրեշտակը և ավետում.

— Աստված լսեց ձեր աղոթքները, և քանի որ դուք արդար և բարեպաշտ մարդիկ եք, շուտով արու գավակ կպարգևի ձեզ, որը հետագայում անսովոր ուժի տեր և բացառիկ երիտասարդ կդառնա: Բայց, հիշեցեք, երբևէ մկրատ չի դիպչելու տղայի մազերին, որովհետև դրանց մեջ է լինելու նրա զորության գաղտնիքը:

Այսպես խոսեց հրեշտակը և աներևութացավ:

Զանցած մեկ տարի՝ այդ բարի մարդիկ մի գեղեցիկ տղա են ունենում և անունը դնում են Սամսոն: Եթե ուրիշ երեխաներ մեծանում էին տարիներով, Սամսոնը աճում, զորանում էր ժամ առ ժամ: Շուտով դառնում է առասպելական ուժով օժտված, խրոխտ, հաղթանդամ մի երիտասարդ՝ թշնամիների ահն ու սարսափը:

Սամսոնը սիրահարվում է Դալիլա անունով մի աղջկա: Սա սիրում էր պճսվել և սեթևեթել տղամարդկանց ներկայությամբ: Իսկ Սամսոնը միամիտ էր ու անփորձ: Նա սիրում ու հավատում էր Դալիլային:

Ճանաչելով թեթևաբարո աղջկան՝ փղշտացիների նախարարները գալիս են նրա մոտ և ասում.

— Խաբեությանը կորզվիր նրա ուժի գաղտնիքը: Դրա դիմաց մենք քեզ շատ փող կտանք:

Երեկոյան, երբ ահեղ ճակատամարտից վերադարձած Սամսոնը քնել էր, Դալիլան կտրում է նրա մազերը և երիտասարդ հերոսին հանձնում թշնամուն: Ձեռնաշղթաներ են դնում և բանտ նետում: Բայց թշնամիները չգիտեին, որ մազերը աճելուն զուգընթաց վերականգնվում է Սամսոնի ուժը:

Մի օր գինաբերուք էր փղշտացիների պալատում: Սրահ են առաջնորդում Սամսոնին և նրան նվաստացնելու նպատակով ստիպում են պարել: Հպարտ ու անընկճելի էր Սամսոնը: «Լավ է մեռնեմ արժանապատիվ, քան ապրեմ անպատված,— մտածում է նա,— Տեր, զորավիճ եղիր, որ սրանցից վրեժս լուծեմ»: Նա հենվում է պատին, ձեռքերը հենում աջ ու ձախ սյուներին և գերմարդկային ուժով

քանդում դրանք: Տանիքը փլվում է՝ ջախջախելով նախարարներին, զորապետներին, խրախճանքի բոլոր մասնակիցներին, նաև իրեն՝ Սամսոնին:

ՊԼԱՆ

1. Աստծո պատգամը իսրայելցիներին:
2. Անզավակ ամուսինները:
3. Աստծո շնորհը և պատվիրանը:
4. Սամսոնը:
5. Դալիլան:
6. Մարտություն:
7. Սամսոնի վրեժը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապատկերակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

բանասարկություն, խաբեբայություն, փղշտացի, զորության գաղտնիք, առաքելություն, առասպելական ուժ, սեթևեթել, թեթևաբարո աղջիկ, գաղտնիքը կորզել, ձեռնաշղթա դնել, զորավիգ լինել:

2. Լսել հատվածներ Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա» օպերայից:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: «Սամսոն և Դալիլա» առասպելի հիման վրա 1868 թ. նորմանդացի նշանավոր երգահան Կամիլ Սեն-Սանսը համանուն օպերա գրեց:

ՄՈՌԱՆԱԼ ՀԵՐՈՍՏՐԱՏԻՆ

Ըստ Նեյհարտի

*Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Աննձք նրա չար գործին...*

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Փոքրասիական Եփեսոս քաղաքում պաշտում էին մայրության և պտղաբերության աստվածուհի Արտեմիսին, ներբողում նրա շնորհները, զարմանահրաշգեղեցկությունը: Ի պատիվ սիրելի դիցուհու՝ եփեսոսցիները որոշեցին կառուցել մի այնպիսի տաճար, որի նմանը չէր եղել աշխարհում:

Հարյուր քսան տարի տևեց մարմարյա նրբագեղ տաճարի շինարարությունը, որի վրա աշխատում էին հազարավոր ստրուկներ: Կառույցը շքեղ էր, աչք էին շոյում բարձրաքանդակ մույթերը, ժանեկազարդ խոյակները, ոսկյա որմնաքանդակները:

Եփեսոսի բնակիչները հպարտանում էին Արտեմիսի տաճարով և քաղաք մտած օտարերկրացիներին առաջնորդում՝ հրաշագեղ շինությունը տեսնելու, մարդկային հանձարով ապշելու:

Թվում էր՝ չնաշխարհիկ մարմարիոնե կերտվածքը պատկանելու է դարերին: Բայց, ցավոք, այն կանգուն մնաց ընդամենը հարյուր տարի: Մեր թվարկությունից առաջ երեք հարյուր հիսունվեց թվականի գարնանային արևոտ մի օր Եփեսոսի փողոցներում հանկարծ լսվեցին տագնապալի բացականչություններ.

— Արտեմիսի տաճարն այրվում է:

Այդ ժամանակ Եփեսոսում ապրում էր չնչին ու ողորմելի մի մարդուկ՝ Հերոստրատ անունով: Սա ոչնչով չէր զբաղվում: Վատնում էր հորից մնացած ժառանգությունը և ողջ օրը տանը նստած՝ անգործությունից հորանջում էր ու ձանձրանում: Հերոստրատը փառատենչ էր ու սնապարծ: Գիշեր-ցերեկ մտածում էր, թե ինչ անի, որ մարդկանց հիշողության մեջ միշտ անմեռ մնա իր անունը:

Մի օր, երբ դարձյալ սին խորհրդածությունների մեջ էր, հանկարծ գլխում փայլատակեց մի զարհուրելի միտք...

Հրդեհը բռնկվել էր միանգամից՝ ընդգրկելով սրահը, փայտամած տանիքը, պատերն ու սյուները: Մարդիկ վազվզում էին մոլեգնած կրակի շուրջը, բայց ոչնչով օգնել չէին կարողանում:

Թագավորի հրամանով նույն օրը պալատում հավաքվեց Եփեսոսի ծերակույտը:

— Մենք պիտի որոշենք՝ ինչ պատիժ տանք Հերոստրատին, այրեր հարգաբաժան: Սա սովորական զանցանք չէ, այլ ոճիր, հետևաբար պատիժը նույնպես բացառիկ և անսովոր պիտի լինի, — խոսեց թագավորը:

Երկար-բարակ խորհրդակցելուց հետո որոշեցին նզովել և մեկընդմիջտ մոռանալ նրան:

Հաջորդ օրը թագավորն իր մոտ հրավիրեց ժամանակի մեծանուն պատմիչներին, փիլիսոփաներին, գրողներին և ասաց.

— Ձեզ՝ գիտության քուրմերիդ, հետևյալն եմ հանձնարարում. արձանագրեք պատմությունը մեր, գրեք երգ ու բանաստեղծություն, բայց ոչ մի տեղ ոչ մի բառով մի հիշատակեք չարագործի անունը, որ չկատարվեն անմահանալու մասին նրա ցնորքները:

Սակայն Հին աշխարհի որոշ պատմիչներ թեև արհամարհանքով ու զայրույթով, բայց և այնպես թղթին հանձնեցին եղելությունը, և Հերոստրատը փաստորեն անմահացավ:

Գոյություն ունի «Հերոստրատի փառք» արտահայտությունը, որով որակում են անարժան վարմունքը, տխրահոջակ փառքը:

ՊԼԱՆ

1. Արտեմիսի տաճարը:
2. Հրդեհ:
3. Հերոստրատը:

4. Ծերակույտի որոշումը:
5. Անմեռ ապրող չարը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասագրական գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

փոքրասիական, մայրության և պտղաբերության աստվածուհի, ներբողել, մարմարյա նրբագեղ տաճար, բարձրաքանդակ մույթեր, ժանեկազարդ խոյակներ, որմնաքանդակներ, մարմարիոնե կերտվածք, չնչին ու ողորմելի մի մարդուկ, սնապարծ, սովորական զանցանք, ոճիր, գիտության քուրմեր, անմահանալու մասին ցնորքներ:

ԱՐԴԱՐ ՎՐԵԺԻ ՈԳԻՆ

Հար Վահան Մինախորյանի

1921 թվականի մարտի 15-ն էր: Առավոտյան սովորականից շուտ արթնացա:

Արևի շողերը արդեն հասել էին դիմացի տան պատուհանին: Հազիվ էի ավարտել նախաճաշս և ուզում էի բազկաթոռս մոտեցնել լուսամուտին, երբ հանկարծ դիմացի շքամուտքը բացվեց, և հայտնվեց Թալեաթը ու փղի պես ծանրորեն սկսեց իջնել փողոցով: Գրպանումս շոշափելով ատրճանակը՝ դուրս նետվեցի: Միրտս հուշում էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ինձնից փախչել, բայց և հուզմունքը փոթորկում էր հոգիս:

Հակառակ մայթով քայլելով՝ հավասարվեցի նրան, ապա արագընթաց առաջ անցա: Երբ բավական իջել էի, կտրուկ դիմեցի դեպի այն մայթը, որով գալիս էր Թալեաթը, և քայլեցի նրան ընդառաջ: Այժմ արդեն դեմ դիմաց մոտենում էինք միմյանց: Նա գալիս էր ձեմելով և ձեռնափայտը անփույթ ձոճելով: Զարմանալի բան: Փոթորկվող սիրտս միանգամից խաղաղվեց: Գրեթե հավասարվել էինք: Հրեշը շեշտակի նայեց ինձ, մի քիչ թեքվեց, որ խուսափի, բայց զենքը դուրս քաշելս ու գլխին պարպելս մեկ եղավ: Թալեաթը հարվածից ցնցվեց, ապա օրորվեց և սողցված կաղնու պես թնդյունով տապալվեց երեսի վրա: Սև, թանձր արյունը վայրկենապես լճացավ Թալեաթի գլխի շուրջը: Կարծես ջարդված անտթից մազութ էր թափվում:

— Բռնեցեք, բռնեցեք, — ականջիս հասավ ինչ-որ մեկի բամբ ձայնը:

Անմիջապես ամբոխը շրջապատեց ինձ: Չէի հասկանում, թե ինչ են ուզում: Մեկն ինձ քաշքշեց, մյուսներն սկսեցին անխնա հարվածել: Աչքերս մթնեցին: Հասան ոստիկանները, թևերս ոլորեցին ու տարան: Ոչինչ չէի զգում: Համակվել էի ներքին հրձվանքով, որի նմանը չէի զգացել երբեք:

Հաջորդ առավոտ քննիչը հալֆրեց.

— Գիտե՞ք՝ ով էր այն մարդը, որին երեկ սպանեցիք:

— Այո՛, Թալեաթ փաշան, — ասացի:

— Ի՞նչը ձեզ դրդեց այդ ոճիրը գործելու:

— Ոճրագործը ես չեմ, այլ Թալեաթը: Նրա հրամանով էր, որ սպանվեցին մայրս, եղբայրս, ազգականներս և իմ ժողովրդի մի մեծ հատվածը: Այդ օրից ես ապրել եմ միայն նրանից վրեժ լուծելու տենչով:

— Ընդունում եք, որ կատարել եք կանխամտածված սպանություն:

— Իհարկե: Միրտս լցվում է ուրախությամբ, որ մեկ միլիոն հայերի վրեժը վերջապես լուծված է: Ես երդվել էի մորս անհայտ գերեզմանով և երդումս կատարեցի:

Չորս ամիս տևեց իմ գործի քննությունը: 1921 թվականի հունիսի 6-ին Բեռլինի միջազգային դատարանում բանավեճն ավարտվեց: Նախագահը, երդվյալներն առանձնացան՝ խորհրդակցելու և դատավճիռ արձակելու:

Քիչ անց դատական կազմը դահլիճում զբաղեցրեց իր տեղը, ապա հանդիսավոր հնչեց երդվյալներից մեկի ձայնը.

— Հանցավոր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլերյանը 1921 թվականի մարտի 15-ին Թալեաթ փաշային սպանելու համար: Ո՛չ, հանցավոր չէ՛:

Սրահը դղրդաց որոտընդոստ ծափահարություններից: Երբ աղմուկը դադարեց, երդվյալը շարունակեց.

— Սողոմոն Թեհլերյանն արդարացված է...

ՊԼԱՆ

1. 1921 թվականի մարտի 15-ի առավոտը:
2. Թալեաթի սպանությունը:

3. Քննություն:
4. Արդար դատավճիռ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հետևյալ բառակապակցությունները.

փղի պես ծանրորեն իջնել, գենքը դուրս քաշել ու գլխին պարպել, սղոցված կաղնու պես թնդյունով տապալվել, սև, թանձր արյունը վայրկենապես լճանալ գլխի շուրջը, կարծես ջարդված անոթից մազութ թափվել, ապրել վրեժ լուծելու տենչով, կանխամտածված սպանություն, խորհրդակցել և դատավճիռ արձակել:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Մինչև փոխադրության նյութը կարդալը սովորողների հետ զրույց վարել, ճշտել, թե ինչ գիտեն Սողոմոն Թեհլերյանի մասին: Կարելի է նաև հանձնարարել, որ որևէ աշակերտ փողեկություններ հավաքի և պատմի իր ընկերներին Ս. Թեհլերյանի մասին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: Սողոմոն Թեհլերյանը ծնվել է 1896 թվականի ապրիլի 2-ին Դարանաղյաց գավառի Բագառոճ գյուղում: Ընտանիքը բաղկացած էր վեց հոգուց՝ հայրը, մայրը, ինքը՝ Սողոմոնը, և երեք եղբայրները:

Ավարտելով Երզնկայի Կեդրոնական վարժարանը՝ 1913-ին մեկնում է Սերբիա, ուր մտադիր էր նախապատրաստվել և հաջորդ փարի ուսումը շարունակել Գերմանիայում: Բայց պայթեց Առաջին համաշխարհայինը, և Սողոմոնի ծրագրերն ի դերն ելան:

Տասնյոթ փարեկանից Սողոմոն Թեհլերյանը նվիրվում է ազգային-ազատագրական պայքարին, կոչում Անդրանիկի գնդում:

1915 թվականին Մեծ եղեռնի արյունալի ջարդերի զոհ են դառնում միլիոնավոր հայեր, այդ թվում և Թեհլերյանի մայրը, եղբայրը, ազգականները՝ ութսունչորս հոգի: Հայրենասեր ազնիվ հոգին փոթորկվում է վրեժխնդրության ծարավից: Եվ նա մտադրվում է վրեժ լուծել ջարդերի կազմակերպիչներից: Նրան առանձնապես հալածում էր Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի ճիվաղային կերպարը: Թեհլերյանը գիտեր, որ նա ծպտված բնակվում է Բեռլինում՝ Այի Սայիի բեյ անունով: Երեք փարվա որոնումներից, հետապնդումներից հետո Թեհլերյանը ճշտում է, որ Թալեաթը ապրում է Հարդենբերգ փողոցի թիվ 4 տանը: Բնակարան վարձելով ճիշտ դիմացը՝ համառ վրիժառուն գիշեր ու զօր պատրաստից հետևում է թուրք մարդասպանի փան անցուղարձին: Եվ ահա 1921 թ. մարտի 15-ին նա դեմառոճ հանդիպում է հայակեր հրեշին և մեկուկես միլիոն հայերի վրեժը լուծում:

Սան Ֆրանցիսկոյի քաղաքային գերեզմանատանը կա մի հուշակոթող, որի վրա երկաթագիր փառերով դրոշմված է.

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆ

1896-1960

Հուշակոթողի պատվանդանին երբեք չեն չորանում ծաղիկները...

ՍՈՍԵ

Հայ Սոսա Զեյթյանի

Նեմրութ լեռան՝ ալ կարմիր կակաչներով ծածկված լանջերին՝ հուրթի կանաչի մեջ, տարածված էր Թեղուտը: Իրենց բնության նման խրոխտ ու խիզախ էին թեղուտցիները: Ցերեկն աշխատում էին, գիշերները հավաքվում որևէ մեկի տանը, ու ծայր էր առնում գրույցը:

Հյուրընկալ էր թեղուտցի Մարգարի օջախը: Բազմանդամ ընտանիք էր. ապրում էին սիրով ու համերաշխ: Մարգարն ուներ շատ երեխաներ, որոնց մեջ իր գեղեցկությամբ առանձնանում էր կրտսեր աղջիկը՝ Սոսեն: Նա ծերմակ-վարդագույն այտեր ուներ և խարտյաշ գանգուր մազեր: Երբ երեկոյան գյուղի երիտասարդները հավաքվում էին նրանց տանը, և հորեղբայր Առաքելը հետաքրքիր դեպքեր էր պատմում նախնիների քաջագործություններից, Սոսեն հափշտակությամբ լսում էր, և այտերը վառվում էին ներքին հուզմունքից:

Մի օր, երբ գյուղի երիտասարդները դարձյալ բոլորել էին նրանց օջախի շուրջը, հորեղբայրը խոսք բացեց Սոսեին նշանելու մասին: Աղջիկը հանկարծ առանց ձևականությունների խոստովանեց.

— Կնշանվեմ միայն Սերոբի հետ:

Ներկաները ծիծաղեցին: Ծիծաղեց նաև Սերոբը, բայց աղջկա ասածը չմոռացավ: Մի քանի ամիս անց նրանք ամուսնացան:

1896 թվականի կոտորածներից առաջ Սերոբը վերադարձավ հայրենի գյուղ: Զգալով մոտալուտ վտանգը՝ երիտասարդներին հորդորեց զենք գնել և պատրաստ լինել ամեն անակնկալի: Զինվեցին, ջոկատներ կազմեցին, որոնց ղեկավարում էր ինքը՝ Սերոբը: Խմբին միացավ նաև Սոսեն:

— Որտեղ Սերոբը, այնտեղ էլ ես ու զավակներս, — հայտարարեց վճռակալորեն:

Խումբը քաշվեց սարերը, Սոսեն՝ նրանց հետ: Նա հրաշալի տիրապետում էր զենքին, փոթորկի պես ձիով սուրում՝ քաջության զարմանալի դասեր տալով տղամարդկանց:

Թուրքերն ահուսարսափով էին լսում Սերոբի անունը: Ամեն հնար բանեցնում էին՝ բռնելու հայ դյուցազնին, բայց իզուր:

Մարտերից մեկի ժամանակ Սերոբն ընկավ թշնամու գնդակից: Սոսեի աչքերը մթնեցին: Հերարձակ կռվում էր, հրե հեղեղով սարսափի մատնում թշնամուն: Մնահավատ թուրքերին նա երկնային ոգի էր թվում, հրեղեն էակ: Նույնիսկ անդրանիկ որդու՝ Հակոբի զոհվելը չմարեց Սոսեի ցասումը: Արցունքները կուլ տալով՝ նոր ատելությանը նետվեց մարտի՝ անգամ չզգալով, որ թշնամու գնդակը խոցեց աջ դաստակը: Ծորում էր արյունը, զենքը չէր կարողանում բռնել, շրջապատման օղակը գնալով նեղանում էր: Սոսեն գերի ընկավ: Այնքան հերոսական, այնքան վեհ էր նա, որ ապշեցրեց անգամ թշնամուն: Թուրք հրամանատարը հրամայեց չսպանել նրան, այլ կալանավորել:

Սոսեին նետեցին Բաղեշի բանտը:

Թուրքական բանտը: Ինչ տանջանքներ կրեց, ինչ կտտանքների ենթարկվեց Սոսեն, բայց դիմացավ: Երբ դուրս եկավ բանտից, աշխարհում միայնակ էր մնա-

ցել: Երկրորդ զավակը ևս զոհվել էր: Սներ հագած Սոսեն ցավով թողեց հայրենի երկիրը, հաստատվեց Ալեքսանդրիայում:

1953-ին նա ավանդեց հոգին:

— Սերոբը կանչում է, նրա մոտ եմ գնում,— վերջին բռպեին ասաց իր բարեկամ Հայկ Խանամիրյանին:

Սոսեն հրաժեշտ տվեց այս աշխարհին՝ իր մասին թողնելով անմար հուշ: Ժողովուրդը նրան սքանչելի երգերով ու զրույցներով անմահացրեց:

ՊԼԱՆ

1. Թեղույր գյուղը:
2. Թեղույրցի Մարգարի հյուրընկալ օջախը:
3. Սոսեն:
4. Սոսեի ամուսնությունը Սերոբի հետ:
5. Ֆիդայական ջոկարի կազմավորումը:
6. Հերոսամարտ. Սերոբի մահը:
7. Տարագրություն և կարոտ:
8. Անմար հուշ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպուրակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ալ կարմիր կակաչներով ծածկված լանջ, հուռթի կանաչ, հյուրընկալ, ծերմակ-վարդագույն այտեր, խարտյաշ գանգուր մազեր, զգալ մոտալուտ վտանգը, դյուցազն, երկնային ոգի, սնահավատ, հրեղեն էակ, տանջանքներ կրել, կտտանքների ենթարկվել, հաստատվել Ալեքսանդրիայում, երգերով ու զրույցներով անմահացնել:

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԸ

Ըստ Մարտին Գորկու

Հազարավոր տարիներ առաջ հեռու-հեռու ծովերից այն կողմ կար մի երկիր: Հոսում էր լայնահուն գետը, առատ ջուր տալիս դաշտերին: Դրա համար էլ շռայլ ու առատաձեռն էր այդ երկրի հողը:

Այդ երկրում ապրում էր հզոր մարդկանց մի ցեղ: Ոչ ոք, ոչ մի թշնամի չէր համարձակվում խախտել նրանց անդորրը: Այդ մարդիկ գազաններ էին որսում, խրախճանք էին անում, երգում ու պարում:

Մի անգամ՝ խնջույքի ժամանակ, երկնքից մի արծիվ իջավ և փախցրեց ցեղի աղջիկներից մեկին, որը քնբուշ էր գիշերվա պես: Տղամարդիկ վեր թռան, նետեր արձակեցին արծվի վրա, բայց նրանց խղճուկ նետերն ընկան գետնին: Մարդիկ խմբեր կազմեցին, գնացին՝ աղջկան որոնելու: Ոտնատակ տվին սար ու ձոր, դաշտ ու անտառ, բայց չգտան:

Անցավ քսան տարի, և ահա մի օր աղջիկն ինքը եկավ: Նա հյուծվել, հալունաշ էր եղել: Նրա հետ կար մի երիտասարդ, որ գեղեցիկ և ուժեղ էր, առնական ու

ամրապինդ: Ու երբ աղջկան հարցրին, թե որտեղ է եղել այդքան ժամանակ, նա պատմեց, որ արծիվը իրեն տարել է լեռները, ու այնտեղ ապրել են որպես մարդ ու կին: Ահա արծվի որդին, իսկ հայրն արդեն չկա:

Բոլորը զարմանքով նայում էին արծվի որդուն: Սա ուներ սառն ու գոռոզ հայացք, հպարտ էր ու ամբարտավան, ինչպես թռչունների արքան: Մարդիկ ուզում էին զրուցել նրա հետ, բայց սա արհամարհաբար լռում էր: Հավաքվեցին ցեղի ավագները, արծվի որդուն ասացին.

— Դու անպետք ու բութ նետի ես նման: Ո՛չ պատկառանք ունես, ո՛չ ամոթ: Զեզպեսների համար մեզ մոտ տեղ չկա: Գնա՛, ուր ուզում ես:

Արծվի որդին ծիծաղեց ու քամահրելով հավաքվածներին՝ մոտեցավ մի աղջկա ու գրկեց նրան:

— Դու ինձ դուր ես գալիս,— ասաց,— գնանք ինձ հետ:

Աղջիկը հրեց նրան և ուզում էր հեռանալ, բայց տղան այնպես հարվածեց, որ աղջկա բերանից արյուն ցայտեց: Աղջիկը հեծկլտաց, գալարվեց ու մեռավ:

Երկյուղը բռնեց բոլոր նրանց, ովքեր տեսան այդ: Ու երկար լռում էին ամենքը՝ նայելով մեռած աղջկան: Իսկ տղան մենակ ու հպարտ կանգնած էր բոլորի դեմ:

Երբ մարդիկ խելքի եկան, բռնեցին նրան, կապտեցին ու այդպես էլ թողեցին՝ կարծելով, որ անմիջապես սպանելը քիչ է, դա իրենց չի բավարարի: Ցեղապետերը հավաքվեցին, որ միտք անեն, թե ինչ պատիժ տան, որ արժանի լինի հանցագործությանը: Մի իմաստուն երկար մտածելուց հետո ասաց.

— Հարցնենք նրան, թե ինչո՞ւ այդպես վարվեց:

Հարցրին տղային, և նա ասաց.

— Ես առաջինն եմ աշխարհում: Ինձնից բարձր ոչ ոք չկա:

Լսելով տղայի հանդուգն պատասխանը՝ իմաստուններից մեկն ասաց.

— Սպասեցե՛ք, արժանի պատիժ կա: Դրա դատաստանը հենց իր մեջ է:

Թողե՛ք դրան, թող ազատ լինի, մեզնից մերժված, մեզնից հեռու:

Այդ պահին հրաշք կատարվեց. պարզ երկինքը որոտաց, և երկնային ուժերը հաստատեցին մարդկանց որոշումը:

Իսկ երիտասարդը, որ հիմա ստացել էր Լարա, այսինքն՝ *Վոնդված, Մերժված* անունը, ծիծաղում էր՝ մնալով մենակ, ազատ, ինչպես իր հայրը: Բայց չէ՞ որ նրա հայրը մարդ չէր: Իսկ սա մարդ էր: Եվ տղան սկսեց ապրել ազատ թռչունի պես: Թաքուն գալիս էր մարդկանց մոտ, անասուններ, աղջիկներ փախցնում: Նրա վրա նետեր էին արձակում, բայց դրանք չէին խոցում տղային, որովհետև երկնային ուժերի կամքով նա անխոցելի էր դարձել: Այդպես տասնամյակներ, հարյուրամյակներ միայնակ պտույտ էր գալիս բնակավայրերի շուրջը:

Բայց ահա մի անգամ տղան մոտեցավ մարդկանց, և երբ վերջիններս հարձակվեցին նրա վրա, տեղից չջարժվեց, թույլ տվեց, որ իրեն խոշտանգեն: Այն ժամանակ մարդկանցից մեկը գլխի ընկավ և գոչեց.

— Ձեռք չտաք դրան. ուզում է մեռնել:

Ու բոլորն արագ կանգ առան՝ չցանկանալով թերթևացնել այն մարդու վիճակը, որն իրենց չարիք էր պատճառել, չուզեցին սպանել նրան: Տղան մի դանակ խլեց, դրանով խփեց իր կրծքին: Բայց դանակը կոտրվեց: Կարծես քարի էր խփվել:

— Նա չի կարող մեռնել,— ուրախացած ասացին մարդիկ:

Ու թողնելով նրան՝ հեռացան:

ՊԼԱՆ

1. Հեռավոր երկիրն ու նրա բնակիչները:
2. Արտասովոր դեպք:
3. Քսան փարի անց:
4. Գոռոզ ու ամբարտապան արծվորդին:
5. Մարդկանցից մերժվածը:
6. Եզրակացություն:

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

Գրապատկերակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

լայնահուն գետ, անդորր, քնքուշ գիշեր, խղճուկ նետեր, հյուծվել, առնական, սառն ու գոռոզ հայացք, ամբարտապան, անպետք ու բութ նետ, քամահրել, հանդուգն պատասխան, երկնային ուժեր, անխոցելի դառնալ, խոշտանգել:

ԴԱՆԿՈՅԻ ՍԻՐՏԸ

Հայր Մարտին Գորկու

Դարեր առաջ մի տափաստանում ապրում էին ուժեղ ու համարձակ մարդիկ: Անանցանելի անտառները երեք կողմից շրջապատել էին նրանց բնակավայրը, իսկ չորրորդ կողմում տափաստանն էր:

Որտեղից որտեղ երևան եկան ուրիշ ցեղեր և գրավելով տափաստանը՝ բնիկներին քշեցին խավարչտին անտառի խորքերը, ուր նեխած ձահիճներ էին՝ զուրկ արևի կենարար ճառագայթներից: Ծառերի ձյուղերն այնպես էին միմյանց հյուսվել, որ նույնիսկ առաջ գնալու արահետ չկար: Ջանազան հիվանդություններից մեռնում էին մարդիկ՝ կարոտ լույսի ու մաքուր օդի: Գաղջ գարշահոտության մեջ նստած՝ նրանք անգործությունից արյուն-արցունք էին թափում՝ գիշեր-ցերեկ մտածելով այդ վիճակից դուրս գալու մասին:

Հասավ այն պահը, երբ այլ ելք չգտնելով՝ նախընտրեցին գնալ թշնամու ոտքը, ստորուկ դառնալ, միայն թե ազատվեն լարծուն ձահիճներից: Բայց այստեղ առաջ եկավ Դանկոն՝ գեղեցիկ ու համարձակ մի երիտասարդ, և ասաց.

— Վեր կացեք, գնանք անտառ, ձանապարհ գտնենք, որ ազատվենք այս դժոխքից:

Դանկոն առաջնորդեց նրանց: Դժվար էր ճամփան: Ամեն քայլափոխի ձահիճը բաց էր անում իր ահարկու երախը՝ կլանելու նրանց: Եվ ահա երկնչելով դժվարություններից՝ մարդիկ սկսեցին տրտնջալ՝ ո՛ր է տանում իրենց այդ անփորձ երիտասարդը: Իսկ Դանկոն զվարթ ու համարձակ քայլում էր առջևից՝ վստահ իր առաքելությանը:

Մի անգամ փոթորիկ պայթեց: Ոռնում էր մրրիկը, և օրորվում էին ծառերը՝ իրենց ծուռումուռ, անճոռնի ձեռքերով ասես ցանկանալով բռնել հոգնատանջ մարդկանց:

Վհատվեցին մարդիկ և կանգ առան անտառի չարագույժ աղմուկի մեջ, սկսեցին մեղադրել Դանկոյին:

— Դու,— ասացին,— չնչին ու վնասակար մարդ ես: Մեզ խաբեցիր և դրա համար կմեռնես:

Դանկոն ապշած նայեց. իրեն շրջապատող մարդկանց դեմքերը չար ու թուլակամ էին: Դանկոն էլ ավելի համակվեց նրանց փրկելու ձգտումով, և առավել վառվեցին աչքերը՝ շողշողալով այրող ճառագայթներով: Տեսնելով այդ՝ փոքրոգի ու ողորմելի մարդիկ կարծեցին՝ նա կատաղել է, և ավելի սեղմեցին օղակը, որ հեշտությամբ բռնեն ու սպանեն նրան:

— Ինչ անեմ մարդկանց համար,— որոտից էլ ուժգին դղրդաց Դանկոյի ձայնը:

Ու հանկարծ նա ձեռքերով պատառոտեց կուրծքը, այնտեղից հանեց սիրտը ու պահեց գլխից վեր: Այն վառվում էր արևից էլ պայծառ, այնքան պայծառ, որ իսկույն ցնդեց խավարը՝ տեղը գիջելով վառվումն լույսին:

Մարդիկ քարացան:

— Գնանք,— անհողդողդ գոչեց Դանկոն և վառվող սիրտը ձեռքին՝ նետվեց առաջ՝ լուսավորելով ճանապարհը:

Եվ ահա անտառը բացվեց, ու մարդիկ միանգամից ընկան լույսի, անապակ օդի ու զմրուխտ կանաչի օվկիանոսը: Իսկ Դանկոյի սրտից անընդհատ ծորում էր բորբ արյունը:

Սիգապանծ Դանկոն, մի հայացք նետելով լայնարձակ երկրի վրա, հպարտ ծիծաղեց ու մեռավ: Նրա կողքին դեռ բոցկլտում էր քաջարի սիրտը:

ՊԼԱՆ

1. Տափաստանում ապրող ուժեղ ու համարձակ մարդիկ:
2. Բնիկների արտաքսումը խավարչփին անտառ:
3. Սարսափելի բնակավայրը:
4. Դանկոն՝ առաջնորդ:
5. Ազատության դժվարին ճամփան:
6. Ապերախտ մարդկանց վարմունքը:
7. Ազատարենչ սիրտը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրատախտակին գրել հեղուկալ բառերն ու բառակապակցությունները.

անանցանելի անտառներ, արյուն-արցունք, լպրծուն ճահիճներ, ահարկու երախ, առաքելություն, անճոռնի ձեռքեր, վիատվել, չարագույժ աղմուկ, չնչին ու վնասակար մարդ, փոքրոգի, ողորմելի, խավարը ցնդել, բորբ արյուն, միանգամից ընկնել լույսի, անապակ օդի և զմրուխտ կանաչի օվկիանոսը, սիգապանծ, անընդհատ ծորել, քաջարի սիրտ:

ԱՐՅԱՆ ԿԱՆՉՈՎ

Ըստ Հրայրա Քոչարի

Պետերբուրգի երաժշտանոցում սովորելու տարիներին ապրում էի մի ընտանիքում: Ծագումով հայ էին, բայց հայերեն չգիտեին, իսկ բարբերն ու կենցաղը լրիվ ռուսական էին: Փոխել էին նույնիսկ իրենց ազգանունը: Հնչեղ Տիգրանյանը դարձրել էին Տիկրանով:

Ընտանիքի մայրը՝ Ասյա Արտեմովնան, մոտ ութսուն տարեկան վեհաշուք կին էր: Նա երեք տարեկան էր եղել, երբ հայրը, որ այն ժամանակ բարձրաստիճան գինվորական էր, Արցախից ընտանիքով տեղափոխվել էր Պետերբուրգ: Փոքրիկ հայուհին՝ Աստղիկը, որ հետագայում Ասյա էր վերանվանվել, կտրվելով հայրենի միջավայրից, ռուսացել էր:

Ասյա Արտեմովնան սիրում էր կարդալ պատմական երկեր ռուսերենով, անգլերենով կամ ֆրանսերենով: Հաճախ կանչում էր ինձ, հարցուփորձ անում Կովկասից: Նրան հետաքրքրում էր, թե եղև եմ Արցախում, տեսել եմ իր ծննդավայրը՝ Շուշին:

— Տեսել եմ Եվրոպայի բոլոր մայրաքաղաքները, բայց հայրենիքս՝ ոչ: Մեղավոր եմ, բայց մեղքս քավել չեմ կարող, ուշ է արդեն,— ասում էր դառնությամբ:

— Իսկ ինչպե՞ս է, որ այդքան լեզուներ գիտեք, բայց հայերեն՝ ոչ,— մի անգամ հարցրի ես:

— Իրավունք ունեք կշտամբելու, հայերեն չգիտեմ, անգամ տառերը չգիտեմ, այնինչ, հիշում եմ, մանկությանս օրերին ազատ խոսում էի:

Եկավ Պետերբուրգի ցրտաշունչ ձմեռը: Սառնամանիքներն սկսվեցին, և Ասյա Արտեմովնան ծանր հիվանդացավ: Բոլորս իրար էինք անցել: Ծեր կնոջ վիճակն օրհասական էր:

Մի օր էլ, երբ դասի էի երաժշտանոցում, հանկարծ լսարանի դուռը բացվեց, և լսեցի Ասյա Արտեմովնայի թոռնուհու՝ Վերայի տագնապած ձայնը՝ Տիգրան:

Առանց թույլտվություն խնդրելու դուրս թռա լսարանից:

— Տատիկը բարձր ջերմություն ունի,— արագ-արագ պատմեց Վերան,— գիտակցությունը կորցրել է, զառանցում է, քո անունն է տալիս, վազենք, շոտ:

Ասյա Արտեմովնան ինձ նույնպես չճանաչեց: Հայացքն անորոշ մի կետի՝ մրմնջում էր, ինչ-որ բան ասում: Կռացա, ականջ դրի ու զարմանքից քարացա. նա պարզ ու հստակ հայերեն բառեր էր արտասանում հայրենի Ղարաբաղի բարբառով ու առոգանությամբ. «Մնա՞ք բարով, ա՛ խոխեք, ես քինալական եմ, մնա՞ք բարով»: Լռում էր մի պահ ու դարձյալ կրկնում նույնը: Ականջներիս չէի հավատում. ծեր կինը հայերեն էր խոսում: 75 տարի առաջ մարած, կորած հնչյունները կենդանացել ու թրթռում էին չորացած շրթունքների վրա:

Հիվանդն աստիճանաբար խաղաղվում էր: Աչքերը փակեց, երկար լուռ մնաց, ապա կրկին դողդողացին շրթունքները. «Ծարանվ եմ, աղջի՛, ծարանվ եմ, քե՛ մատաղ...»:

Ջուր բերի, մոտեցրի շրթունքներին: Մի կուրս խմեց, մշուշոտ հայացքը մի քիչ լուսավորվեց, շնչաց. «Ջորանան, քե՛ մատաղ, զորանան»:

Երևույթն իսկապես որ հրաշքի էր նման: 80-ամյա կինը մահվան շեմին արյան կանչով հնչեցնում էր վաղուց մոռացված մայրենին և ինքնամոռացման մեջ ժպտում՝ ասես վայելելով հեռավոր, բայց քաղցր ու անչափ հարազատ մի մեղեդի:

ՊԼԱՆ

1. Տիկրանովների ընտանիքը:

2. Հայրենիքից կտրված հայուհին:

3. Ասյա Արտեմովնայի հիվանդությունը:

4. Հայաբառ մրմունջ:

5. Արյան կանչով:

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

Գրապահպակին գրել հեղինակ բառակապակցությունները.

վեհաշուք կին, բարձրաստիճան զինվորական, ընտանիքով Արցախից տեղափոխվել Պետերբուրգ, մեղքը քավել, ցրտաշունչ ծմեռ, օրհասական վիճակ, տագնապած ծայն, Ղարաբաղի բարբառ, կորած հնչյուններ, մշուշոտ հայացք, անուշ մեղեդի:

ԱԼՄԱՍՏԵ ԳԱՀԸ

Ըստ փարբեր աղբյուրների

1660 թվականի ամառային մի պայծառ օր Պարսկաստանի Նոր Ջուղա քաղաքում աշխույժ եռուզեռ էր: Մարդիկ խոնավել էին մեծահարուստ վաճառական Սահրադ Սահրադյանի գրասենյակի բակում՝ արտակարգ մի բան տեսնելու ակնկալությամբ: Այդ օրը ցուցադրվելու էր հայ վարպետների ձեռքով պատրաստված մի շքեղ գահ, որ պիտի ուղարկվեր ռուս ցարին՝ Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովին:

Գորգածածկ գրասենյակի փափուկ բազմոցներին նստած էին հայ և պարսիկ երևելիներ, արվեստագետներ, հոգևորականներ: Այդտեղ էր նաև ռուսաց դեսպանը: Այդ ընդարձակ դահլիճի մի անկյունում՝ ուղիղ լուսամտի դիմաց, դրված էր գահը, որ առայժմ ծածկված էր մետաքսյա օթոցով:

Բացման խոսքից հետո բոլորի լարված հայացքների ներքո տանտերը զգուշորեն քաշեց գահը ծածկող մետաքսը, և սենյակը հրդեհվեց ծիածանի բոլոր գույներով: Մի պահ տևած քար լուռությամբ հաջորդեց ներկաների աղմկալի հիացմունքը: Ռուսաց դեսպանը, որ կախարդվածի պես գահին էր նայում, բարձրացրեց ձեռքը՝ ի նշան լուռության:

— Որպես դեսպան,— ասաց նա,— ես երջանիկ եմ, որ իմ վսեմափայլ թագավորին պիտի մատուցեմ այս սքանչելիքը, որ հավաստումն է նրա նկատմամբ հայերիդ տածած սիրո և հավատարմության:

Անգին գահը, սակայն, հայ վաճառականները նվիրում էին ցարին, որովհետև ունեին որոշակի նպատակներ: Այդ գործունյա մարդիկ Ռուսաստան և այդտեղից էլ Եվրոպա էին արտահանում զարդեղեն, գորգեր, բրդեղեն, ներկեր, ապա այդ երկրներից հայրենիք ներմուծում շահութաբեր ապրանքներ: Ցարի բարեհաճությանն արժանանալու, մաքսերը նվազեցնելու, ազատ առևտրի իրավունք ստանալու նպատակով ռուսական պերճաշուք արքունիքին ապահովում էին արևելյան հազվագյուտ իրերով, որոնց գույնգործոցը դարձավ գահը:

Ընտիր կաղնեփայտից դրվագված գահի վրա կային ոսկյա մեծ ու փոքր նախշազարդումներ՝ 11 կգ 450 գ ոսկու ընդհանուր քաշով, 6 կգ արծաթ, 897 մեծ ու փոքր ալմաստ, 1298 հակինթ, 18030 փիրուզ և մարգարիտ: Տարբեր չափի և հղկվածության ալմաստների շնորհիվ գահն ստացավ *Ալմաստե գահ* անունը:

Ռուսական կայսրության շքեղաշուք պալատները հազվագյուտ շատ բաներ էին տեսել, բայց Ալմաստե գահը հավասարը չուներ:

— Ինչ արժե հայերիդ այս առատաձեռնությունը,— հարցրել էր Ալեքսեյ Միխայլովիչը նվերը Մոսկվա հասցնող պատվիրակներին:

— Մեծ թագավորիդ առջև գլուխ ենք խոնարհում և նվիրում առանց սակարկելու, — պատասխանել էին պատվիրակները:

Ալեքսեյ Միխայլովիչն այնքան հավանեց գահը, որ հատուցեց ոչ միայն դրա արժեքը, այլև վճարեց պատվիրակության ճանապարհածախսը, ինչպես նաև լրացուցիչ վճար՝ նրա ստեղծողների ազնիվ աշխատանքի համար: Ցարի որոշմամբ գահն օգտագործվում էր միայն ռուս թագուհիների թագադրման ժամանակ: Հետագայում, երբ դաժան հաշվեհարդար տեսան ցարական ընտանիքի հետ, Ալմաստե գահը թագավորական սրահներից տեղափոխվեց Մոսկվայի զինապալատ, ուր մինչև այսօր ցուցադրվում և շլացնում է այցելուներին:

ՊԼԱՆ

1. Իրադարձություն Նոր Ջուղա քաղաքում:
2. Գահի ցուցադրությունը:
3. Հայ վաճառականների գործունեությունը Ռուսաստանում:
4. Անգին ընծան:
5. Ալմաստե գահի ճակատագիրը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրադասարանին գրել՝

ա) հեղինակ բառակապակցությունները.

արտակարգ մի բան տեսնելու ակնկալություն, տոնական տրամադրություն, գորգածածկ գրասենյակ, փափուկ բազմոցներ, հայ և պարսիկ երևելիներ, մետաքսյա օթոց, ի նշան լռության, աղմկալի հիացմունք, վսեմափայլ թագավոր, ընտիր կաղնեփայտից դրվագված, շքեղաշուք պալատներ, ազնիվ աշխատանք, զինապալատ.

բ) անձնանունները.

Պարսկաստանի Նոր Ջուղա քաղաք, Սահրադ Սահրադյան, ցար Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանով, Եվրոպա:

2. Համացանցից գրնել և դիպել Ալմաստե գահի պարկերը: Հայդարարել մրցույթ՝ ո՞վ ավելի մանրամասնորեն և հարուստ արտահայտչամիջոցներով կնկարագրի գահը:

ԲՈՅԱՐԻՍ

Հայ Ռափայել Պարկանյանի

Գարնանային մի պայծառ օր, երբ լուրթ երկնքում շողշողում էր արևը, իր համեստ խրճիթում դանդաղ մեռնում էր մի երիտասարդ հայուհի: Զգալով մահվան համբույրը՝ նա մի կերպ երկարեց դալուկ ձեռքը և մոտ կանչեց երկու զավակներին, որոնք կանգնած էին անկյունում՝ աչքերում լաց ու արտասուք: Նրանցից ավագը՝ տղան, տասնհինգ տարեկան էր, աղջիկը՝ Հեղինեն՝ տասներեք:

— Բոցարիս,— ասաց հիվանդը՝ դիմելով որդուն,— քո խնամքին եմ հանձնում քրոջդ: Բացի քեզնից՝ աշխարհի երեսին նա ուրիշ տեր ու պաշտպան չունի: Խոնք տուր, որ նրան անտեր չես թողնի:

— Մայր իմ,— ասաց պատանին,— երդվում եմ, որ պատգամդ կկատարեմ:

— Բարի, որդյակ իմ:

Մրանք կնոջ վերջին խոսքերն էին: Նա հոգեվարքի մեջ էր:

Նույն պահին դուռը ծեծեցին. ներս մտան թուրք փաշայի սպասավորներն ու սկսեցին հարկը պահանջել: Բոցարիսը նրանց խնդրեց լռել. նշանացի ցույց տալով մոր կողմը՝ աղաչում էր չվրդովել նրա կյանքի վերջին վայրկյանները: Բայց իզուր: Առանց ուշադրություն դարձնելու պատանու աղերսներին՝ թուրքերը կրեցին տարան աղքատիկ կահկարասին: Տարան ամեն ինչ՝ բացի հարդյա մահճից, որի վրա հանգչում էր տանտիրուհու աձյունը: Երբ բարբարոսները հեռացան, տղան չոքեց մոր դիակի առջև ու մրմնջաց. «Երդվում եմ այս ահեղ վայրկյանով ու քո սուրբ աձյունով, որ վրեժխնդիր կլինես»:

Մոր մահից հետո Բոցարիսը ձկնորսություն էր անում, որսը վաճառում և այսպես հայթայթում էր հանապազօրյա հացը:

Մի օր էլ նա տուն եկավ ու տեսավ, որ քույրը չկա: Հատակին ընկած էր ապարոշ, որ կրում էին թուրքերը: Բոցարիսը զարհուրած հասկացավ, որ թուրքերը առևանգել են Հեղինեին:

Մեծահանդես տոն էր փոքրիկ կղզյակում: Հրապարակներն ու փողոցները լի էին խումռն ամբոխով: Բոցարիսը մտավ մարդկանց մեջ, պատմեց եղելությունը:

— Սիրելի քրիստոնյաներ,— ասաց նա,— հասել է ժամանակը, որ թշնամուց մեր վրեժն առնենք: Նրանք անարգում են մեզ, նվաստացնում, անպատվում, վիրավորում, կողոպտում: Կորչի՛ արնախում թշնամին, կեցցեն մեր հայրենիքը, կեցցեն մեր կրոնը, Քրիստոսի խաչը:

Պատանին ասես համակվել էր աստվածային ներշնչումով, որը վարակում էր նաև մարդկանց:

Կղզյակում չկար մեկը, որ չճանաչեր Բոցարիսին, չգնահատեր պատանու սրտի արիությունը, ազնիվ հոգին:

— Գնանք փրկենք Հեղինեին, փրկենք մեր պատիվը: Բոցարիս, առաջնորդիր մեզ,— գոչում էին մարդիկ:

Հարձակվեցին թուրքերի որջի վրա ու աղջկան ազատեցին: Առաջին հաղթանակը համախմբեց ամենքին: Կղզեցիները ոտքի ելան և թուրք թափթփուկներից երկիրն ազատեցին: Մեծ հաղթությունից ոգևորված ժողովուրդը Բոցարիսին կառավարիչ նշանակեց: Պատանին զորք հավաքեց և ամրացրեց կղզու պաշտպանությունը: Ժայռաբեկորներ գլորեցին և փակեցին կղզու մուտքը՝ այն դարձնելով անմատչելի ամրոց: Եվ երբ թուրքերը փորձեցին կրկին մոտենալ, Բոցարիսի բանակն այնպիսի դիմադրություն ցույց տվեց, որ թշնամին խուճապահար նահանջեց:

Այսպես անցան շատ տարիներ: Բոցարիսն արդեն հասուն տղամարդ էր: Բոլորը սիրում և ենթարկվում էին նրան:

Բայց չարն ամենուր է: Մարդիկ կային, որ նախանձում էին Բոցարիսին, տենչում նրա մահը: Ու թունավորված գինի տվեցին նրան: Մահը վայրկենական եղավ:

Սգաց, հեծեծաց ողջ կղզին:

Երբ մարդիկ թաղման հաջորդ օրը գերեզմանոց եկան, Բոցարիսի շիրմաքարի վրա գտան Հեղինեի սառած մարմինը:

Իսկ թուրքերը, լսելով արծվասիրտ երիտասարդի մահը, վայրի հրձվանքով ասպատակեցին կղզին և դաժան հաշվեհարդար տեսան ապստամբների հետ:

ՊԼԱՆ

1. Մեռնող հայուհին:
2. Թուրքերի գազանաբարո արարքը:
3. Վրեժի երդում:
4. Հեղինեի առևանգումը:
5. Ապստամբություն և հաղթանակ:
6. Պարկեշտու առաքինի Բոցարիսը:
7. Թունավորում:
8. Դաժան հաշվեհարդար:

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

կղզյակ, մահվան համբույր, դալուկ ձեռք, հոգեվարք, նշանացի, աղքատիկ կահկարասի, հարոյա մահիժ, ասեղ վայրկյան, սուրբ աճյուն, հանապազօրյա հաց, ապարոշ, նվաստացնել, արնախում թշնամի, աստվածային վարակիչ ներշնչում, որջ, թափթփուկ, անմատչելի ամրոց, խուճապահար նահանջել, սգալ, հեծեձալ, դաժան հաշվեհարդար:

ՈՒՇԻՆԱՐԱ

Ըստ Ավետիք Իսահակյանի

Արդար և իմաստուն դատավոր էր Ուշինարան: Անաչառ էր նա և՛ օտարների, և՛ մերձավորների նկատմամբ: Թեև հարուստ էր, բայց համեստ կյանքով էր ապրում իր հոյակապ սրահներում, իսկ տան դռներն ու ձոխ սեղանը միշտ բաց էին աղքատների և օտարականների առջև:

Մի անգամ, երբ Ուշինարան դահլիճում նստած կարդում էր, սրտապատառներս ընկավ մի աղավնի, որին հետապնդում էր սրաթև անգղը: Մարսափած թռչունը նստեց դատավորի ծնկին և պաշտպանություն աղերսեց: Անգղը հասավ նրա հետևից, սակայն Ուշինարան արդեն պատսպարել էր աղավնուն:

— Դատավոր,— դիմեց անգղը Ուշինարային,— քաղցը տանջում է ինձ: Մեծ հանցանք է քաղցածի ձեռքից խլել նրա սնունդը: Հետ տուր ինձ աղավնին:

Ուշինարան ձեռքի շարժումով մերժեց նրա պահանջը:

— Դատավոր,— շարունակեց անգղը,— դու պարտաճանաչ մարդու հոչակ ունես, սակայն ինչո՞ւ ես բնության օրենքին հակառակ գնում: Ինչո՞ւ ես ինձ զրկում իմ սնունդից:

— Այս անօգնական, մահի սարսուռով բռնված դողդոջուն թռչունը իմ պաշտպանությանը դիմեց,— առարկեց Ուշինարան,— դու, հզոր անգղ, միթե չես տեսնում, որ իմ առաջին պարտքն է չհանձնել ինձ հավատացող արարածին իր թշնամուն: Մեծ ոճիր է զրկել վտանգված թույլին օգնությունից:

— Բայց, դատավոր, ամեն արարած ուտելով է ապրում: Հիմա, որ դու իմ ձեռքից խլում ես սնունդս, շուտով կմահանամ, ինձ հետ էլ՝ կինս ու ձագուկներս: Աղավնուն խնայելով՝ դու մեզ բոլորիս մահի ես մատնում:

— Դու շատ իմաստուն ես խոսում, ո՛վ անգղ, հզոր թռչուն: Բայց ինչպե՞ս կարող եմ թշվառ փախստականին կորստի մատնել: Բո առջև բաց են մատանիս դռները: Գնա՛, առ, ինչ որ ուզում ես՝ եղնիկի կամ վարազի միս: Եվ ինչ ուզում ես, ասա՛, կկատարեմ քո կամքը:

— Ո՛չ, դատավոր, ես ուրիշ տեսակի միս ուտելու սովորություն չունեմ: Բնությունից որոշված հավերժական օրենք է, որ անգղերը աղավնիներ պիտի ուտեն: Տո՛ւր ինձ իմ իրավունքը:

— Ա՛նգղ,— թախանձեց Ուշինարան,— ինչ ցանկանում ես, ուզիր, ես կտամ: Միայն երբեք չեմ կարող հանձնել թշվառության մեջ ինձ ապաստանածին:

— Դատավոր,— պատասխանեց անգղը,— քանի որ դու այդքան սիրում ես այդ աղավնուն, փոխարենը տո՛ւր քո մարմնից այնքան միս, որքան կշռում է աղավնին:

— Այո՛, հիմա արդար և ճշմարիտ է քո կամքը,— ասաց Ուշինարան,— սիրով կկատարեմ քո ցանկությունը:

Եվ հանկարծ դահլիճի ձեղունից մի կշեռք կախվեց:

Ուշինարան աղավնուն դրեց մի նժարին, իսկ մյուս նժարին՝ իր մարմնից մի կտոր, բայց աղավնին դեռ ծանր էր կշռում: Նորից կտրեց մսի մի կտոր, և աղավնին նորից ծանր էր: Դարձյալ նորանոր կտորներ կտրեց դրեց, և սակայն աղավնին ավելի և ավելի ծանր էր կշռում:

Այլ ելք չունենալով՝ Ուշինարան ամբողջ իր հոշոտված մարմնով ելավ կանգնեց նժարին: Այդ ժամանակ անգղը մարդկային լեզվով ասաց.

— Ես տիեզերքի իշխանս ու դատավորն եմ: Եկա՛ քո առաքինությունը փորձելու: Հավիտենական փառքով դու զարդարեցիր քեզ, ո՛վ Ուշինարա, որովհետև քո կյանքով փրկեցիր թշվառին:

ՊԼԱՆ

1. Արդար և իմաստուն դատավորը:
2. Մարդուն ապավինած աղավնին:
3. Անգղի պահանջը և Ուշինարայի պատասխանը:
4. Պարզքին հավաքարիմ:
5. Հավիտենական փառքով պսակվածը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

արդար, իմաստուն դատավոր, հոյակապ սրահներ, համեստ կյանք, սրտապատռ ներս ընկնել, սրաթև անգղ, պաշտպանություն աղերսել, մահի սարսուռով բռնված թռչուն, պատսպարել, թախանձել, դահլիճի ձեղունից կշեռք կախվել, հոշոտված մարմին, տիեզերքի իշխան, հավերժական փառքով զարդարել:

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ըստ հունական դիցաբանության

Սկյութների երկրում մի ամայի տեղ կա, որտեղ երկինք ձգվող դժնատեսիլ ժայռերն իրենց լերկ կատարներով մխրձվում են մթամած թուխպերի մեջ, շուրջբոլորը կուտակ-կուտակ քարեր են՝ զարհուրանք առաջացնող գորշ ու վիթխարի գանգվածներով: Ծովն այնտեղ երբեք հանդարտ ու խաղաղ չէ: Բախվելով մռայլ ապառաժներին՝ ջրերը խուլ հեծկլտում են՝ չարագույժ խշռոցով փշրվելով վայրի ափերին: Զարհուրանք առաջացնող այդ վայրում որևէ կենդանի արարածի ոտք չի դիպել: Չկան ո՛չ գազաններ, ո՛չ թռչուններ, ո՛չ ծառ ու թուփ, ո՛չ խոտ ու ծաղիկ:

Շանթարձակ Զևսի անողոք սպասավորները՝ Ուժն ու Իշխանությունը, և որդին՝ դարբնության աստված Հեփեստոսը, այս մռայլ վայրերն ուղեկցեցին շղթայակապ Պրոմեթևսին: Զևսը պատժել էր հանդուգն տիտանին այն պատճառով, որ նա, ընդդիմանալով Օլիմպոսի օրենքներին, պաշտպան էր կանգնել մահկանացուներին, գաղտնի նրանց էր հասցրել աստվածային կրակը:

Հավաքելով աստվածներին՝ Զևսը հայտարարեց.

— Պրոմեթևսը գրկված է Օլիմպոսի բնակիչ լինելու շնորհից: Ընդվզելով մեր օրենքների դեմ՝ նա մարդկանց է հանձնել կյանքի աղբյուրի՝ կրակի գաղտնիքը: Ահա թե ինչու պիտի գամված մնա ժայռին, չարաչար տանջվի, քանի դեռ ներում չի հայցել իր մեղքի համար:

Աստվածները նայեցին Պրոմեթևսին: Նա կանգնել էր խրոխտ ու վեհ և հպարտ գլուխը չէր խոնարհում ամպրոպածին Զևսի առջև:

Պրոմեթևսին հասցնելով սկյութների երկրի ամայի վայրերը՝ Ուժն ու Իշխանությունը նրան բարձրացրին մի լերկ ժայռի վրա և Հեփեստոսին կարգադրեցին գամել:

— Պողպատե սուրսայր մեխով այնպես գամիր ապառաժին, որ շարժվել անգամ չկարողանա, — պատվիրեցին նրանք:

Հրամանը կատարված էր: Բիրտ Ուժը, ծաղրելով վեհատեսիլ տիտանին, որ գամված վիճակում նույնիսկ անընկճելի էր, ասաց.

— Դե հիմա փորձիր մահկանացուներին տալ աստվածային շնորհները: Տեսնենք կարող են քեզ օգնել երկրային խղճուկ գեռունները:

— Իմ տանջանքներն ու վիշտը չեմ փոխի ձեր ճորտության հետ, — արհամարհանքով պատասխանեց տիտանը: — Լավ է ժայռին գամված մեռնել, քան Զևսի ստրուկը լինել:

Որոշ ժամանակ անց տիտաններից մի քանիսը փորձեցին միջամտել՝ Պրոմեթևսին համոզելով ներում խնդրել Զևսից: Բայց նա անդրդվելի էր:

Այդ ժամանակ Զևսի բանբեր Հերմեսն ասաց.

— Իմացիր՝ այսուհետև կսաստկանան տանջանքներդ, որովհետև ամեն օր քեզ մոտ կթոչի Զևսի ուղարկած արծիվը՝ սուր-սուր ծանկերով ու կեռ կտուցով ծվատելու լյարդդ: Բայց լյարդդ մի գիշերում կաճի՝ հաջորդ օրը արծվին դարձյալ կեր դառնալու համար: Խոնարհվիր և կփրկվես:

— Արծվի լլկանքը նախընտրում եմ Զևսի շնորհներից: Թող ապրեմ տանջանքով, բայց ոչ ծնկաչոք:

Արյան ծարավ արծիվը ամեն օր իջնում էր Պրոմեթևսի կրծքին՝ հոշոտելու նրա լյարդը, և հեղեղի պես հորդում էր արյունը՝ ներկելով ապառաժը: Եվ այսպես՝ դարեր:

Բայց ահա մի օր որպես մեծագոր աստված՝ հայտնվեց Հերակլեսը և տեսնելով հսկայի տանջանքները՝ սոսկաց: Նա նետահարեց արծվին և փշրեց դարավոր շղթաները: Խրոխտ կանգնեց տիտանը, լիաթոք շնչեց, զգաց ազատության բերկրանքը:

Նրա անընկճելի հոգին երբևէ չխոնարհվեց՝ շղթաների մեջ անգամ մնալով ազատ ու ինքնիշխան:

ՊԼԱՆ

1. Սկյութների երկրի դժնապեսի վայրերը:
2. Զևսի պարիժը:
3. Ապառաժին գամված մարդասերը:
4. Անկոտրում հսկան:
5. Փրկություն Հերակլեսի ձեռքով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպուսակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

սկյութների երկիր, լերկ կատարներ, մթամած թուփսպեր, կուտակ-կուտակ քարեր, զարհուրանք առաջացնող գորշ ու վիթխարի գանգվածներ, խուլ հեծկլտակ, չարագույժ խշշոց, շանթարձակ Զևս, անողորք սպասավորներ, սուրսայր մեխ, անդրդվելի, մեղքի համար ներում հայցել, սուր-սուր ճանկեր, կեռ կտուց, լյարդը ծվատել, խրոխտ կանգնել, ազատության բերկրանք:

ՆԱՐԳԻՉ

Ըստ հունական դիցաբանության

Ով չէր մեծարում սիրո աստվածուհի Աֆրոդիտեին, ով մերժում էր նրա շնորհները, անողորքաբար պատժվում էր: Այդպես նա պատժեց գեղեցիկ, բայց սառն ու գոռոզամիտ Նարգիզին: Ոչ ոքի չէր սիրում նա՝ բացի իրենից. միմիայն իրեն էր համարում սիրո արժանի:

Մի անգամ, երբ որս անելիս Նարգիզը մոլորվեց սաղարթախիտ անտառում, հավերժահարս Էբոն տեսավ նրան: Աղջիկը չէր կարող խոսել Նարգիզի հետ. նա պարտավոր էր մշտապես լուռ մնալ, իսկ հարցերին պատասխանում էր՝ միայն կրկնելով խոսողի վերջին բառերը: Անտառի թավուտում թաքնված Էբոն հիացմունքով նայում էր բարեկազմ ու գեղեցկադեմ պատանուն:

Նարգիզը գննում է չորսբոլորը՝ չիմանալով ուր գնալ, և բարձր ձայնով գոչում է.

— Հեյ, ո՞վ կա այստեղ:

— Այստեղ, — լսվում է Էբոյի բարձրաձայն պատասխանը:

— Այստեղ արի, — գոչում է Նարգիզը:

— Արի,— պատասխանում է էրն:

Ջարմանքով շուրջն է նայում Նարգիզը: Ոչ ոք չի երևում: Եվ ապշած դրանից՝ բարձրաձայն բղավում է.

— Այստեղ արի, ինձ մոտ:

Եվ հրձվանքով արձագանքում է էրն.

— Ինձ մոտ:

Ասում ու ձեռքերը տարածած շտապում է Նարգիզի մոտ: Բայց գեղեցիկ պատանին զայրույթով հետ է մղում նրան ու գոռոզաբար գոչում է.

— Հետ տար ձեռքերդ: Ավելի լավ է՝ մեռնեմ, քան մշտապես քեզ հետ լինեմ:

Մերժված հավերժահարսը թաքնվում է անտառի թավուտում: Նա տառապում էր անպատասխան սիրուց, ոչ ոքի աչքին չէր երևում և տխրությամբ արձագանքում էր ամեն կանչի:

Սիրո աստվածուհի Աֆրոդիտեն զայրանում է, որ Նարգիզը մերժում է իր պարգևած շնորհները, և որոշում է պատժել նրան:

Մի անգամ՝ որս անելիս, Նարգիզը մոտենում է վտակին՝ կամենալով ծարավը հագեցնել սառնորակ ջրով: Ջուրը վճիտ էր ու թափանցիկ և հայելու նման իր մեջ արտացոլում էր շուրջը եղած ամեն ինչ:

Ձեռքերը հենելով ջրից դուրս եկած քարին՝ կռանում է Նարգիզը վտակի վրա և նրա մեջ արտացոլվում է իր ողջ գեղեցկությամբ: Հենց այստեղ էլ վրա է հասնում Աֆրոդիտեի պատիժը:

Ապշահար նայում է Նարգիզն իր արտացոլմանը և համակվում բուռն սիրով, հմայվում է, կանչում, բազկատարած ձգտում դեպի նա: Կռանում է Նարգիզը ջրեղեն հայելուն, որ համբույր դրոշմի չքնաղ պատկերին, բայց համբուրում է վտակի վճիտ ու սառնորակ ջուրը միայն: Ամեն ինչ մոռացած պատանին չի կարողանում հեռանալ վտակից, անվերջ սքանչանում է իր արտացոլմանը: Ձեռքը հուսահատությամբ մեկնելով ջրին՝ Նարգիզը բացականչում է.

— Օ՛, ո՞վ է տառապել այսքան դաժանաբար: Մեզ լեռները չեն բաժանում, ոչ էլ ծովերը, այլ միայն ջրի բարակ շերտը, բայց էլի մենք չենք կարող միասին լինել: Դուրս արի վտակից: Տեսնում եմ ձեռքերդ ինձ ես մեկնում, երբ բազկատարած մղվում եմ դեպի քեզ: Երբ կռանում եմ քեզ համբուրելու, դու էլ դեպի ինձ ես գալիս: Երբ ժպտում եմ, դու էլ ինձ ես ժպտում: Իսկ երբ վշտահար արցունք եմ թափում, դու էլ ես լալիս, արտասուքը դողում է նաև քո սքանչելի աչքերում: Ես տեսնում եմ, թե դու ինչպես ես պատասխանում ինձ, տեսնում եմ, թե ինչպես եմ շարժվում վարդագույն շուրթերդ, բայց չեմ լսում խոսքերդ:

Հանկարծ մի ահավոր միտք է ծագում գլխում, ու կռանալով ջրի վրա՝ կամացուկ շնչում է իր արտացոլմանը.

— Օ՛, վայ ինձ: Սարսափով եմ մտածում, թե արդյոք ինքս ինձ չեմ սիրահարվել: Չէ՞ որ դու հենց ես եմ:

Նարգիզի ուժերը սկսում են աստիճանաբար լքել նրան: Նա գունատվում և արդեն զգում է վերահաս մահվան շունչը, բայց նաև անկարող է պոկվել իր պատկերից: Հավվում է նա, ինչպես ծաղիկների ցողը՝ արևի վառ ճառագայթներից: Վերջապես, կրկին նայելով իր արտացոլմանը, Նարգիզը նվաղուն ձայնով մրմնջում է.

— Մնան բարով:

Նարգիզի գլուխը հակվում է առափնյա կանաչ խոտերին, և մահվան դալկությունը բռնում է նրա աչքերը: Այսպես մեռնում է ինքնասիրահարված Նարգիզը:

Այնտեղ, ուր խոտի վրա հակվել էր Նարգիզի գլուխը, աճել էր բուրավետ մի ծաղիկ. մարդիկ այդ ծաղիկին նարգիզ են ասում:

ՊԼԱՆ

1. Գոռոզ ու եսասեր Նարգիզը:
2. Էքո հավերժահարսը:
3. Էքոյի անպարասխան սերը:
4. Նարգիզի դաժան վերաբերմունքը:
5. Ինքնասիրահարություն և փառապանք:
6. Նարգիզ ծաղիկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապրասխակին գրել՝

ա) *հեյրեյալ բառակապակցությունները.*

անողորքաբար պատժել, սառն ու գոռոզամիտ, մոլորվել սաղարթախիտ անտառում, բարեկազմ ու գեղեցկադեմ պատանի, մերժված հավերժահարս, ապշահար Նայել սեփական արտացոլմանը, անվերջ սքանչանալ, վշտահար արցունք թափել, վարդագույն շուրթեր, հալվել ինչպես ծաղիկների ցողը արևի վառ ճառագայթներից.

բ) *հեյրեյալ հափուկ անունները.*

Ա.Ֆրոդիտե, Էքո հավերժահարս:

ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ՆՎԵՐԸ

Ըստ Օ'Հենրիի

Մեկ դուլար ութսունյոթ սենթ: Վաղը Սուրբ ծնունդ է, իսկ ինքը Ջիմին նվեր գնելու համար ունի ընդամենը մեկ դուլար ութսունյոթ սենթ: Որքան էր ուզում ամուսնուն ծննդյան տոների կապակցությամբ որևէ առանձնահատուկ և թանկագին բան նվիրել: Եվ հանկարծ մի անսպասելի միտք փայլատակեց Դելայի գլխում: Նա նետվեց դեպի հայելին: Արագ շարժումով հանեց հերակալները, և փայլուն երկար մազերը թափվեցին թիկունքին:

Դելան և Ջիմը աղքատ էին, բայց ունեին երկու գանձ, որոնք նրանց հպարտության առարկան էին: Մեկը Ջիմի ոսկյա ժամացույցն էր՝ հորից ու պապից մնացած, մյուսը՝ Դելայի շքեղ մազերը, որոնք արձակված վիճակում նմանվում էին շագանակագույն ջրվեժի:

Հասնաշ վերարկուն գցելով ուսերին՝ նա վազեց փողոց և կանգ առավ մի ցուցանակի առջև, որի վրա գրված էր. «Ամեն տեսակ մազեղեն իրեր»:

— Իմ մազերը չե՞ք գնի, — հարցրեց նա խանութի տիրուհուն:

— Հանե՛ք ձեր գլխարկը: Անհրաժեշտ է ապրանքը տեսնել, — պատասխանեց տիկինը և ուշադիր տնտղեց շագանակագույն ջրվեժը: — Քսան դուլար, — ասաց վերջապես՝ ձեռքի մեջ ծանրութեթև անելով մազերի թանձր խուրձը:

— Համաձայն եմ,— արագ ասաց Դելան և վերցնելով դրամը՝ դուրս եկավ:
Մի քանի ժամ նա չափչփում էր խանութները՝ Ջիմի համար նվեր ընտրելու նպատակով: Վերջապես գտավ: Դա գրպանի ժամացույցի պլատինե շղթայիկ էր՝ պարզ ու զուսպ զարդանկարով: Այն ճիշտ այնպիսին էր, ինչպիսին Ջիմը՝ համեստ ու արժանապատիվ:

Ժամը յոթին սովորականի պես սուրճն արդեն պատրաստ էր, հում կոտլետներով տապակը՝ դրված գազօջախին:

Ջիմը երբեք չէր ուշանում: Դելան շղթայիկը սեղմեց ափի մեջ ու սկսեց բռնելները հաշվել: Ահա աստիճանների վրա լսվեց ամուսնու ոտնաձայնը: Ջիմը ներս մտավ և նայելով կնոջը՝ տեղում քարացավ: Դելան վեր թռավ տեղից ու նետվեց դեպի նա:

— Ջիմ, սիրելիս,— ասաց նա,— այդպես մի նայիր ինձ: Ես կտրել տվեցի մազերս ու վաճառեցի, որովհետև չէի կարող Ծննդյան տոներին քեզ որևէ բան չնվիրել: Մազերս նորից կաճեն: Թե իմանաս ինչ նվեր եմ պատրաստել քեզ համար, ինչ հոյականա, հրաշալի նվեր:

Դեռևս չհավատալով այքերին՝ Ջիմը լարված համառությամբ հարցրեց.

— Այդպես ուրեմն, մազերդ կտրել ես:

— Ես դա արեցի քեզ համար, Ջիմ:

Ջիմը վերարկուի գրպանից մի փաթեթ հանեց ու նետեց սեղանի վրա:

— Դե՛լ,— ասաց նա,— բաց այդ ծրարը և կհասկանաս, թե ինչն է մի պահ շփոթվեցի:

Ճերմակ, ժիր մատները կտրատեցին փաթեթի թելերն ու թուղթը: Հաջորդեց հիացմունքի բացականչություն, ապա արցունքի կաթիլները թրջեցին կնոջ դեմքը: Սեղանին ընկած էին շքեղ սանրեր ու հերակալներ, որ Դելան շատ անգամ էր տեսել Բրոդվեյի՝ ցուցափեղկերից մեկում: Որքան էր երազել ունենալ այդ ընտիր հավաքածուն: Այժմ այն պատկանում է իրեն, բայց, ավանդ, չկան այլևս հրաշալի մազերը:

Դելան վերջապես սթափվեց ու հիշեց, որ Ջիմին դեռ չի տվել գեղեցիկ շղթայիկը: Նա բացեց ափը, և ազնիվ մետաղը շողշողաց:

— Միթե սա հրաշալիք չէ, Ջիմ: Հապա տո՛ր ժամացույցդ:

Ջիմը պառկեց օթոցին, ձեռքերը դրեց գլխի տակ ու ժպտաց:

— Դե՛լ,— ասաց նա,— հարկ կլինի առայժմ պահել մեր նվերները: Ժամացույցը վաճառեցի, որ քեզ համար սանրեր գնեմ: Իսկ հիմա, սիրելիս, թերևս կոտլետը տապակելու ժամանակն է:

ՊԼԱՆ

1. Ծննդյան փոների նախօրյակին:

2. Անսպասելի միտք:

3. Ընտանեկան գանձեր:

4. Հարմար գործարք:

5. Պլափինե շղթայիկը:

6. Սանրերի հավաքածուն:

7. Ամենաթանկը սերն է:

¹ Բրոդվեյ — Նյու Յորքի կենտրոնական փողոցներից մեկը, որը հայտնի է շքեղ խանութներով, ռեստորաններով, սրճարաններով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպարակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

մեկ դուրար ութսունյոթ սենթ, Սուրբ ծնունդ, օթոց, անսպասելի միտք, ընկրկել, հերակալ, շագանակագույն ջրվեժ, ուշադիր տնտղել, ծանրութթթև անել, հիացմունքի բացականչություն, ընտիր հավաքածու, ազնիվ մետաղ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: *Օ՛Հենրին ամերիկացի գրող է, 300 պատմվածքի և «Արքաներն ու կահամբը» վեպի հեղինակը:*

ԿԱՐՄՐԱՄՈՐԹ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՓՐԿԱԳԻՆԸ

Ըստ Օ՛Հենրիի

Մտահղացումը հոյակապ էր թվում: Բիլը և ես որոշեցինք երեխա փախցնել:

Մեզ երկու հազար դուրար էր պետք մի շահութաբեր գործ գլուխ բերելու համար: Ամեն ինչ ծանրութթթև արեցինք և որոշեցինք առևանգել քաղաքի մեծահարուստներից մեկի՝ Դորսեթ Էբենեզերի միսուձար որդուն: Փոքրիկը պեպենոտ դեմքով տասը տարեկան երեխա էր: Ես ու Բիլը ենթադրում էինք, որ Դորսեթը ուղղակի պարելով կտա պահանջվող փրկագինը: Քաղաքից երկու մղոն այն կողմ ոչ բարձր մի սար կար, որի քարանձավներից մեկը դարձրել էինք մեր որջը:

Երբ մոտեցանք Դորսեթի տիրություններին, տղան մարգագետնի ծայրում քարերով խփում և տանջում էր կապոտած կատվին:

Տղան սկսեց կատաղի դիմադրել, երբ նրան քաշքշելով խցկում էինք կառքի մեջ:

Մենք նրան քարանձավ տարանք: Բիլն իր դեմքի չանգոտոված ու արնակալած մասերին թրջած լաթ դրեց: Հենց մութն ընկավ, ես կառքը տարա՝ հանձնելու տիրոջը:

Երբ վերադարձա, տղան կարմրաշեկ մազերի մեջ բազեի փետուրներ էր անբացրել և պազել օջախի մոտ: Նա իրեն հնդկական ցեղերից մեկի կարմրամորթ առաջնորդ էր երևակայում: Հենց մոտեցա, գռչեց.

— Էյ, դու, անիծյալ մոռթ, ինչպե՞ս ես համարձակվում մտնել այս տափաստանների ահ ու սարսափի՝ կարմրամորթ առաջնորդի ճամբարը:

Պարսատիկը վնգաց, և ես հազիվ ցատկեցի մի կողմ՝ քարի հարվածից խուսափելու համար:

— Դա դեռ լանվ է,— ասաց Բիլը.— մենք հնդկացի-հնդկացի էինք խաղում: Ես գերի ընկա, և լուսադեմին նա պիտի հանի իմ գանգամաշկը:

Երևում է՝ մանչուկը լիարժեք հաճույք էր զգում այն մտքից, որ իբր ճամբար է հիմնել, և մենք իր գերիներն ենք: Հավատացնում էր, որ մեզ ողջ-ողջ պիտի խոքովի կրակի վրա:

— Կարմրամորթ առաջնորդ,— դիմում եմ տղային,— ուզում ես տուն գնալ:

— Օ՛հ, շատ պետքս է: Տխուր է այնտեղ, դպրոցն էլ տանել չեմ կարողանում: Ինձ այստեղ դուր է գալիս: Տուն չես տանի, չե՞, Օձի աչք: Ամբողջ կյանքումս այսպես չէի ուրախացել:

Քննեցինք: Լուսաբացին արթնացա Բիլի զարհուրելի ծղրտոցներից: Վեր ցա-
կեցի, տեսա՝ առաջնորդը նստել է նրա կրծքավանդակին, մի ձեռքով բռնել մազե-
րը, մյուսով՝ միս կտրելու դանակը և փորձում է հանել զանգամաշկը:

Քնել այլևս հնարավոր չէր: Պետք էր տղայից մի կերպ ազատվել:

— Դուք երկուսով կարտոֆիլ խորովեք, — ասացի Բիլին, — ես բարձրանամ
բլրի գագաթը և տեսնեմ՝ ոչ ոք չի՞ երևում:

Հույս ունեի, որ կտեսնեմ զինված մարդկանց, որոնք եռանդով փնտրում են
ստոր առևանգողներին: Սակայն ոչ ոքի չտեսա, որ դեսուդեն վազվզեր, չտեսա
վշտից խելագարված ծնողներին:

Քարանձավին մոտենալով՝ տեսա, որ Բիլը մեջքով կպել է պատին ու ծանր է
շնչում, իսկ տղան նշան է բռնել, որ հարվածի նրան կոկոսի մեծության մի քարով:

— Նա խորոված կարտոֆիլ գցեց օձիքիցս ներս, — տնքաց Բիլը, — հետո էլ
մեջքիս վրա ոտքերով տրորեց, իսկ ես նրան ապտակեցի:

Տղայի ձեռքից քարը մի կերպ վերցրի:

— Ես քեզ ցույց կտամ, — գայրույթից հևում էր նա, — ով փորձել է խփել կարմ-
րամորթ առաջնորդին, էժան չի պրծել:

Վերջապես նամակ գրեցինք Դորսեթին և շարադրեցինք մեր պայմանները:
Վերջում ավելացրինք. «Համաձայնելու դեպքում Ձեր գրավոր պատասխանը դրեք
ցանկապատի դիմացի հաստաբուն ծառերից երրորդի տակ: Եթե փորձեք մեզ
մատնել, Ձեր տղային այլևս չեք տեսնի»:

Մի քանի ժամ անց նշված տեղից վերցրինք հետևյալ գրությունը. «Պարոններ,
իմ որդուն վերադարձնելու համար Դուք յիրկազին եք պահանջում: Բայց ես էլ ունեմ
իմ պայմանը: Դուք տուն եք բերում որդուս և ինձ կանխիկ վճարում հինգ հարյուր
դոլար: Միայն այդ դեպքում ես կհամաձայնեմ Ձեզ նրանից ազատել»:

Մի կերպ համոզելով և խոստումներ տալով՝ տղային տարանք տուն: Երբ
Դորսեթի ափի մեջ դրեցինք հինգ հարյուր դոլարը և ցանկանում էինք հեռանալ,
մանչուկն այնպիսի ռռնոց դրեց, ասես գալարափող էր փչում, և կպավ Բիլի ոտ-
քերին: Հայրը մի կերպ պոկեց տղային և ձեռքերը պինդ բռնեց:

— Որքան ժամանակ կարող եք այդպես պահել նրան, — հարցրեց Բիլը:

— Ես առաջվա ուժը չունեմ, բայց կարծում եմ՝ տասը ռոպե կարելի է խոս-
տանալ:

— Դա բավական է, — ասաց Բիլը: — Տասը ռոպեում ես կանցնեմ հարավային,
կենտրոնական և արևմտյան նահանգները և հանգիստ կմտնեմ Կանադա:

Եվ չնայած շատ մութ էր, և Բիլն էլ՝ չափազանց հաստամարմին, ես նրան կա-
րողացա հասնել միայն քաղաքից մեկուկես մղոն հեռավորության վրա:

ՊԼԱՆ

1. Խելացնոր մտահոգում:

3. Նամակ և պատասխան:

2. Կարմրամորթ առաջնորդը:

4. Սարսափից փախչողները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադարձարական գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ամեն ինչ ծանրութեթև անել, գլուխ բերել մի շահութաբեր գործ, փրկագինը ուղղակի պարելով տալ, որք, տանջել կապուտած կատվին, քաշքշելով խցկել կառքի մեջ, թրջած լաթ, կարմրաշեկ մագեր, կարմրամորթ առաջնորդի ճամբար, պարսատիկ, գանգամաշկ, սրունք, գարհուրելի ծղրտոցներ, ստոր առևանգողներ, հաստաբուն ծառերից երրորդը, գալարափող, հաստամարմին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ: *Օ՛Հենրին ամերիկացի նշանավոր գրող է, արծակագիր, 300 պարմվածքի և «Արքաներն ու կաղամբը» վեպի հեղինակը:*

ՋՐՀՈՐԻ ՄՈՏ

Ըստ Սյրեպիան Ջորյանի

Դեպքը կատարվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ավստրիայի կողմերում էինք: Շաբաթից ավելի կռվում էինք, կռվում առավոտից իրիկուն: Մեկ ավստրիացիներն էին վրա տալիս, մեկ մենք էինք հարձակվում: Կռիվը՝ կռիվ, բայց մյուս կողմից նեղում էր շոգը, և ամենից ավելի՝ ծարավը: Բայց դաշտ՝ կիզիչ արև, ու ջուր չկա: Ծարավից տոչորվում ենք, լեզուներս չորացել են:

Մեր ու ավստրիացիների դիրքերի արանքում մի ջրհոր կար: Ուղիղ մեջտեղում: Բայց ղվ կհամարձակվեր մոտենալ: Իսկույն կկրակեին: Ջուրն էսքան մոտիկ ու էսքան հեռու: Ծարավ մարդիկ ու ջրհոր: Նայում ենք, ինչպես սովածը՝ հացին:

— Ա՛յ մի կտրիճը լինեք, ջրհորից ջուր բերեք, համ,— ասաց մեկը:

Էսքանը բավական էր: Ամեն կողմից վրա տվեցին:

— Տղերք, կատակը՝ մի կողմ, ղվ կգնա, իսկապես:

Ասում են ու իրար նայում:

Այնուամենայնիվ որոշեցինք, թե, ինչ ուզում է լինի, պիտի գնանք: Բայց ղվ:

— Եկեք վիճակ գցենք,— առաջարկեցին:

Թղթերի վրա անուններս գրեցինք, ծալեցինք, գցեցինք մեկի գլխարկի մեջ: Վիճակն ինձ ընկավ: «Դե գնա՛մ հիմի,— մտածում եմ ես,— երկու տարի ազատվեցիր կրակից, հիմի ջրի ճամփին մեռի»: Բայց տղաների մոտ չուզեցի վախկոտ երևալ: Անունի, պատվի խնդիր էր: Վերցրի կաթսայիկս, պարան ու սողեսող, չոքեչոք գնում եմ: Լավ է դեմ՝ շուրջս բարձր խոտ է, կարող է չնկատեն:

Ըսպես չոքեչոք հասա ջրհորին: Բերանս այնպես է չորացել, որ թվում է՝ լեզուս կպել է քիմքիս: Թշնամու դիրքերի կողմն եմ ծիկրակում: Շարժում չկա: «Ուրեմն չեն տեսել»,— մտածում եմ: Մի քարի շվաքում մի քիչ շունչ քաշեցի, հանգստացա: Հիմա ի՞նչ անեն: Տեսնում եմ, որ դժվարը ոչ թե գալն էր, այլ ջրհորից ջուր քաշելը: Ջրհորի բերանը բարձր է, կանգնեմ թե չէ՝ թրջվակ: Բայց ճար չկար, պիտի բարձրանայի: Այդ պահին միտս ընկավ թաշկինակս: Հանեցի ու թափ տվեցի ավստրիացիների կողմը: Տեսնում եմ՝ սրանք իրար անցած ինձ են նայում: Մի կողմից թաշկինակս եմ թափ տալիս, մյուս կողմից՝ կաթսայիկս իջեցնում ջրի մեջ: Ջուրը հանեցի ու նորից թաշկինակս թափ տալով՝ վազեցի դեպի մեր դիրքերը: Հիմի վա-

զում են, ո՞նց են վազում: Իսկ ավստրիացիք, լսում են, ո՞նց են հետևիցս ծիծաղում: Դեռ կես ճամփին են, մերոնք «ուռն» կանչեցին: Հասա ու տղերքի հետ ինքս էլ ծիծաղում եմ արածիս վրա:

Մի հինգ-վեց հոգի խմեցին, ջուրը պրծավ: Տղերքը թե՛

— Արի էլի՛ գնա:

Մտածում եմ՝ գնամ, թե՛ ոչ: Հո ամեն անգամ պապը փլավ չի ուտի: Ավստրիացիներն են, քեռուս տղերքը չեն: Մտածեցի, մտածեցի ու որոշեցի մեկ անգամ էլ գնալ:

Էլի թաշկինակս թափ տալով՝ գնացի: Ավստրիացիներն էլ նայում են: Առաջ-վա պես էլի բան չեն ասում: Հետ եկա: Նոր էի տեղ հասել, տղերքը թե՛

— Հրեն, մի ավստրիացի է գալիս:

Ինչ տեսնեմ: Ճիշտ որ, մի սպիտակ շոր թափ տալով՝ գալիս է՝ մի աման էլ ձեռքին: Էդ որ տեսան, մերոնք սիրտ առան:

— Տղերք, — ասացին, — գնանք մենք մեզ համար ջուր բերենք:

Տղերքը գնացին: Առաջ՝ մեկ-մեկ, հետո՝ երկու-երկու, վերջում՝ խմբով: Ավստրիացիք էդ որ տեսան, իրենք էլ նույնը արեցին: Հիմի ջրհորի մոտ խառնվել ենք իրար: Խոսում ենք ձեռքով-նոտքով, ծիծաղում: Հետո սկսեցինք իրար վրա ջուր լցնել, երես, ձեռքեր լվանալ: Նրանք մեզ հաց են տալիս, մենք նրանց՝ ծխախոտ: Ու էլի նայում ենք իրար, ժպտում, ծիծաղում, միմյանց ձեռք սեղմում:

Վերջապես ծարավներս կոտրած վերադարձանք մեր դիրքերը: Իրիկնադեմին խոսում, քննարկում էինք օրվա դեպքերը: Մտածում էինք, թե սրանից հետո ինչպե՞ս պիտի դրանց հետ կռվենք: Ուրիշ բան, եթե դիմացինիդ տեսած չես լի-նում: Այս խոհերի մեջ էինք, երբ լսվեց կտրուկ հրամանը.

— Կրակ:

ՊԼԱՆ

1. Ծարավ:

2. Ջրհորը:

3. Վիճակահանություն:

4. Հակառակորդները ջրհորի մոտ:

5. Ո՛չ՝ պարտերազմին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադրախորակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Առաջին համաշխարհային պատերազմ, ծարավից տոչորվել, վիճակ գցել, չորեչոր, ծիրակել, կաթսայիկ, թաշկինակը թափ տալ, լեզուն կաչել քիմքին, ամեն անգամ պապը փլավ չի ուտի, սպիտակ շոր թափ տալով՝ գալ, մեկ-մեկ, երկու-երկու, միմյանց ձեռք սեղմել, ծարավը կոտրել:

ՆԵՂ ՕՐՎԱ ԸՆԿԵՐԸ

Հայ Սովետներ Մոեմի

(ինքնուրույն հանգուցալուծումով փոխադրություն)

Էդուարդ Բարթընը առևտրական էր: Հարուստ էր. սեփական քրտինքով էր վաստակել յուրաքանչյուր գրոշը:

Բարթընը նվազ ու փոքրահասակ անձնավորություն էր: Բարեկազմ էր, ալեհեր, կարմիր ու կնճռոտ երեսով, կապույտ աչքերով: Նա շատ խնամքով և համեստ էր հագնվում: Հազուստը միշտ համապատասխանում էր վաթսունամյա պատկանելի տարիքին:

Շատ չէր խոսում, մեղմ և զուսպ հումոր ուներ: Շրջապատողները սիրում և հարգում էին այդ բարի մարդուն:

Մի օր այս մեղմ ու բարի մարդու մոտ եկավ նրա անվանակիցը՝ Լենի Բարթընը: Վերջինս երեսունհինգ տարեկան երիտասարդ էր, ոչնչով չէր զբաղվում՝ բացի թղթախաղից:

Ծեր և երիտասարդ Բարթընները գրեթե ամեն երեկո միասին էին. նրանք երկուսն էլ թղթախաղի սիրահար էին: Եվ ընկերացել էին:

Եվ ահա այս գեղեցիկ ու ջահել Լենին եկավ իր ավագ բարեկամի մոտ և մի գործ խնդրեց նրա գրասենյակում:

— Ինչ եք արել մինչև այժմ, — հարցրեց ավագը ջահելին:

— Առանձնապես ոչինչ, — կմկմաց Լենին:

— Վախենամ, որ ներկա պահին Ձեզ համար ոչինչ անել չեմ կարող, — պատասխանեց առևտրական գրասենյակի տեր Բարթընը:

Երիտասարդը չչարժվեց, բայց խիստ գունատվեց: Մի րոպե երկմտեց, հետո սկսեց պատմել, որ վերջերս թղթախաղում բախտը չի բերել: Մեծ գումարներ է տանուլ տվել: Հիմա մի գրոշ անգամ չույի: Եղած-չեղածը գրավ է դրել: Մի խոսքով՝ քայքայված, անհույս վիճակում է: Եթե մի գործ չձարի, ինքնասպան կլինի:

Ավագ Բարթընը ուշադիր նայեց երիտասարդին: Տեսավ՝ սա շատ խմելուց լրիվ հալումաշ է եղել:

— Լավ, թուղթ խաղալուց բացի՝ ոչ մի ուրիշ բան չեք կարող անել, — հարցրեց առևտրական գրասենյակի պետը:

— Ես կարող եմ լողալ, — ասաց երիտասարդը:

Պատասխանը շատ անմիտ ու հուսահատ հնչեց:

— Ես ինքս ջահել ժամանալով լողորդ եմ եղել: Մի անգամ ափից լողացի մինչև փարոս: Համարյա երեք մ. ձանապարհ է և բավական դժվար. փարոսի շուրջը ծովային հոսանքներ կան. — պատմեց առևտրականը:

Այա ասաց իր երիտասարդ անվանակցին, որ եթե կրկնի իր արածը, լողա մինչև փարոս, աշխատանք կստանա: Լենիի դեմքը ձերմակեց:

— Այնքան լավ մարզավիճակում չեմ, — պատասխանեց նա:

Ավագը ոչինչ չասաց, միայն ուսերը թոթվեց: Երիտասարդը մի րոպե լռեց, հետո գլխով արեց իբրև համաձայնության նշան:

— Լավ, — ասաց նա: — Երբ եք ուզում, որ լողամ:

Ավագը նայեց ժամացույցին: Հազիվ տասն անց էր:

— Լողը Ձեզնից մի ժամ տասնհինգ րոպեից ավելի չի խլի: Ես մեքենայով գետաբերան կգամ և տասներկուսն անց կես Ձեզ կհանդիպեմ, — ասաց Էդուարդ Բարթընը:

Նրանք իրար ձեռք սեղմեցին և բաժանվեցին:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Աշակերտներին հանձնարարել գրելով հանգուցալուծում:

ՊԼԱՆ

1. Էդուարդ Բարթընը.
 - ա) արտաքինը,
 - բ) բնավորությունը:
2. Նրա անվանակից Լենի Բարթընը:
3. Երիտասարդ Բարթընի խնդրանքը:
4. Ավագ Բարթընի առաջարկը:
5. Համաձայնություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրադասագրական գրել՝

ա) հեղուկայ բառերն ու բառակապակցությունները.

յուրաքանչյուր գրոշ, պատկառելի տարիք, մեղմ ու զուսպ հումոր, քնքուշ ժպիտ, տանուլ տալ, եղած-չեղած, հալումաշ լինել, ծովային հոսանքներ, ուները թոթվել.

բ) հափուկ անունները.

Էդուարդ Բարթըն, Լենի Բարթըն:

ՉԱԽՈՒ

Հար Ռափայել Պապկանյանի

(սպեղծագործական փոխադրություն)

Թեև ապրիլ ամիսն էր, սակայն այնպիսի շոգեր էին սկսվել, որ չորությունից հողն սկսել էր ճաքճքել: Եթե մի քանի օր էլ այդպես շարունակվեր, բերքը կփչանար: Ուզեի-չուզեի, ջրկիր պիտի վարձեի, որ սայլով տակառ-տակառ ջուր կրեր ու պարտեզս ջրեր: Բացի դրանից՝ մի հին ծիրանենի ունեի, որին ցուրտը խփել-չորացրել էր: Կանչեցի ջրկիր Մարտիրոսին, հանձնարարեցի ոչ միայն այգին ջրել, այլև այդ ծառը արմատով հանել, իսկ ես սովորականի պես խանութս գնացի:

Երբ կեսօրին տուն վերադարձա, զարմանքով տեսա, որ Մարտիրոսը ձեռքերը կրծքին խաչած կանգնել է արմատահան արված ծառի փուսի մոտ, աչքերը անթարթ հառել ինչ-որ կետի, և խորշոմած այտերի վրայով գլոր-գլոր հոսում են արցունքի կաթիլները:

Ջրկիր Մարտիրոսը բնավորությամբ ծանրաբարո մարդ էր, ու թվում էր՝ հուզականությունից հեռու: Ահա թե ինչու անսպասելիությունից ճչացի.

— Մարդ աստծո, ինչ եղավ քեզ:

Լուս էր: Ոչ մի ձայն:

— Ա՛յ տղա, հո չէն գժվել: Այս հասակի մարդ՝ լաց ես լինում: Երեսիդ գույն չի մնացել:

Առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու, անձայն կռացավ, փոսի մոտից վերցրեց հողի հետ դուրս նետված ոսկորի մի կտոր, քարացած հայացքով նայեց, ապա դիվահարի պես կանչեց.

— Վարպետ, վարպետ Մկրտիչ, ահա քո չախուն¹, ահա էն չախուն... գտնվեց վերջապես: Մեռնեն անունիդ, տո՛րք Կարապետ, վերջը բացեցիր գաղտնիքը:

Կանգնած տեղս սառած մնացի. այսպիսի զարմանալի բան դեռ չէի տեսել: Ինչևէ: Մարդուն հազիվհազ խելքի բերեցի, բայց փտած ոսկորը ձեռքից բաց չէր թողնում: Վերջապես, երբ մի քիչ սթափվել էր, պատմեց հետևյալը.

— Գիտեն, որ այս տունը ժամանակին տիրացու Մկրտիչին էր: Հիսուն տարի առաջ իր տանը նա դպրոց էր բացել, գրել-կարդալ էր սովորեցնում: Տասը տարեկան էի, երբ հայրս ինձ տվեց վարպետ Մկրտիչի դպրոցը: Վարպետը ասածդ այն ժամանակ գայլ-գազանից զարհուրելի էր: Նրա անունը որ լսում էինք, լեղիներս պատռվում էին: Այդպիսին էր տիրացու Մկրտիչը:

Սովորելու մեծ փափագ ունեի: Գրքերը ոչ թե կարդում, այլ կլանում էի մի շնչով: Դպրոցի առաջին աշակերտն էի, և բոլորը մեծ ապագա էին գուշակում ինձ համար: Այնքան լավ էի սովորում, այնպես հեշտությամբ էի ընկալում ամեն ինչ, որ վարպետս ակնհայտորեն նախանձում և չարանում էր ինձ վրա:

Մի օր սովորականից շուտ գնացի վարժատուն: Իրիցկինը պարտեզում կանաչեղեն էր հավաքում, իսկ վարպետս փոս էր փորում հենց այնտեղ, որտեղից հանեցինք չորացած ծառը:

— Վարպետ,— ասացի,— հոգնել ես, տո՛րք, մի քիչ էլ ես փորեմ:

Իրիցկինն այդ ժամանակ մոտեցավ՝ մատուցարանի մեջ կանաչի, վրան՝ ձերմակ կոթով չախու: Դրեց գետնին՝ փոսի մոտ, ու ասաց.

— Որ փորելդ վերջացնես, սա տա՛ր խոհանոց:

Ու ինքը գնաց հարևանի տուն:

Երբ գործս ավարտեցի և վերցրի կանաչիով լեցուն մատուցարանը, նկատեցի, որ դանակը չկա: Լսելով այդ՝ մարդ ու կին հարձակվեցին վրաս:

— Ասե՛ղ էր, քորո՛ց էր, որ կորնավ: Լույս ցերեկով ահագին դանակը կորչի: Շո՛ւտ գնա գտի՛ր, թե չէ գլխիդ այնպիսի բան կբերենք, որ մինչև սև հող մտնելդ չմոռանաս,— ձայնը գլուխն էր գցել վարպետիս կինը:

Ասացին ու այդպես էլ արեցին:

ՌՈՍՈՒՑՉԻՆ՝ Աշակերտներին հանձնարարել սրեղծագործարար շարունակել և ջրկիր Մարտիրոսի պատմությունն ավարտել առաջին դեմքով:

¹ Չախու — դանակ

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԿԵՐԱԴԱՐՁ

Հայ Ասրվածաշնչի

Մի մարդ երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը մի օր հորն ասաց.

— Ես արդեն չափահաս եմ: Տնօր քո ունեցվածքից ինձ հասանելիք բաժինը Ուզում եմ գնալ, աշխարհ տեսնել, բախտս փորձել:

Շատ վշտացավ հայրը, բայց որդուն համոզել չկարողացավ: Նա համառորեն ուզում էր գնալ, ինքնուրույն կյանք վարել:

Ինչ կարող էր անել խեղճ մարդը: Կանչեց զավակներին, հարստությունը հավասար բաժանեց:

Վերցնելով ունեցած-չունեցածը՝ կրտսեր որդին մեկնեց ուրիշ երկիր և ծնողական հսկողությունից հեռու՝ սկսեց անխնա շռայլել: Հոր՝ արյուն-քրտինքով կուտակածը վատնում էր գինարբուքներում, անբարո կանանց միջավայրում:

Ահա եկավ մի օր, որ այլևս ոչ մի կոպեկ չուներ գրպանում: Ո՛չ արհեստ գիտեր, ո՛չ որևէ մասնագիտություն էր սովորել: Ստիպված սրա-նրա տանը բանվորություն էր անում, մի կերպ կիսաքաղց ապրում: Հետո սկսեց խոզեր արածեցնել և մի կտոր հաց վաստակել: Այս դառը վիճակը նրան ուշքի բերեց: «Հայրս ագարակներ ու անասունների հոտեր, ծառաներ ու մշակներ ունի, իսկ ես այստեղ սովամահ եմ լինում,— մտածեց նա,— գնամ հորս մոտ, ասեմ՝ հայր, մեղանչեցի, և Տերը պատժեց: Գիտեմ, արժանի չեմ քո որդին կոչվելու, բայց ընդունիր ինձ: Կաշխատեմ քո արտերում, մշակություն կանեմ, միայն մի՛ մերժիր, ներիր անառակ որդուդ»: Այսպես մտածեց ու ճամփա ընկավ:

Հայրը հեռվից տեսավ որդուն և պատանու կայտառությամբ վազեց նրան ընդառաջ, փաթաթվեց. դառնության և ուրախության արցունքներն առվակ-առվակ սկսեցին հոսել աչքերից:

— Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջ: Այլևս արժանի չեմ...

Հայրը ձեռքով փակեց որդու բերանը և դարձավ ծառային.

— Որդուս շքեղ զգեստներ հագցրեք: Ախոռից հանեք ամենապարարտ եղբուս և մորթեք: Բոլորին կանչեք, միասին ուրախանանք, որովհետև որդիս մեռած էր, կենդանացավ, կորած էր, գտնվեց:

Մինչ տանը եռուզեռ էր, ուրախություն, արտից վերադարձավ ավագ որդին: Զարմանքով լսեց իրենց տնից եկող երգ ու պարի, զվարթ ծիծաղի ձայները: Իմանալով եղելությունը՝ ավագ որդին շատ զայրացավ և չմտավ ուրախության սրահը: Հայրը դուրս եկավ, աղաչեց, որ տղան ներս գա, բայց սա պատասխանեց.

— Հայր, մանկությունից ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ առել: Բայց ինձ համար մի ուլ անգամ չես մորթել: Այնինչ անառակ որդիդ վատնել է ունեցվածքդ, անբարոյականությամբ զբաղվել, և դու նրա համար եզն ես մորթել տվել:

— Որդիս,— պատասխանեց հայրը,— մի՛ դժգոհիր: Դրամը ձեռքի կեղտ է, կլվացվի կգնա, մորթված անասունի տեղ մեկ ուրիշը կգնենք, բայց եղբորդ ոչնչով փոխարինել չենք կարող: Ուրեմն ուրախ եղիր, որ թողնելով անառակ կյանքը՝ վերադարձել է հայրական տուն:

ՊԼԱՆ

1. Կրկուսեր որդու պահանջը:
2. Անբարո կյանքով ապրող տղան:
3. Աղքատության ճիրաններում:
4. Ապաշխարանք:
5. Անառակ որդու վերադարձը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Գրապահպակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

կրտսեր, ունեցվածք, ծնողական հսկողությունից հեռու, անխնա շռայլել, արյուն-քրտինքով կուտակած, գինարբուք, անբարո կանանց միջավայր, վտիտ մարմին, պատանու կայտառությամբ, դառնության և ուրախության արցունքներ, պարարտ եզ, անբարոյականությամբ զբաղվել, հրամանները զանց առնել, դրամը ձեռքի կեղտ է:

ՀՈՐ ԵՐԱՆԵԼՈՒ ՎԱՐՔԸ

Հստ Աստվածաշնչի

(դատողական-սրբազորական փոխադրություն)

Հուս երկրում ապրում էր ուղղամիտ և արդար մի մարդ՝ Հոր անունով: Հանապազօրյա աղոթքներում նա անընդհատ փառաբանում էր Աստծուն:

Հորը ուներ տասը զավակ՝ յոթ որդի և երեք աղջիկ՝ մեկը մյուսից առողջ ու շնորհալի: Ուներ նաև անբավ հարստություն՝ հողեր, յոթ հազար ոչխար, երեք հազար ուղտ, եզների և կովերի նախիրներ, ձիերի երամակներ, փեթակներ՝ լեցուն քաղցրահամ մեղրով:

Մի անգամ, երբ սատանան նոր էր վերադարձել երկրից, Աստված հարցրեց, թե տեսնո՞ւ է իր ծառա Հորին, նկատո՞ւ է՝ որքան անբասիր կյանքով է նա ապրում:

Ի բնե՛ չար սատանան պատասխանեց.

— Մի՞թե հավատում ես, թե Հորը իսկապես քեզ պաշտում է: Ապա փորձիր կաշել նրա ունեցվածքին: Այն ժամանակ ամեն ինչ պարզորոշ կզգաս:

Աստված որոշեց սատանային ապացուցել, որ նա սխալ է, և ասաց.

— Այն ամենը, ինչ ունի Հորը, քո ձեռքում է: Միայն հոգուն չկաշես:

Անհագուրդ չարությունից եռացող սատանան իսկույն ևեթ փութաց դժբախտություն բերելու խեղճ Հորի գլխին: Խլեց նրա ողջ ունեցվածքը, սպանեց ամենաթանկը՝ զավակներին:

Անակնկալ փորձանքներից թեն հույժ կարեվեր խոցված էր Հորը, բայց նա, անխախտ հավատով լեցուն, ասում էր.

— Մի՞թե ճիշտ կլիներ Աստծո բարիքներն ընդունել, իսկ չարիքը՝ ոչ: Տերը տվեց, Տերը վերցրեց: Թող օրինյալ լինի նրա անունը:

Չար ոգին դիմեց վատթարագույսին. Հորի մարմինը ծածկեց թարախածին պալարներով: Զախջախված հոգով, աղճատված մարմնով այդ վշտալլուկ մարդը կծկվել էր, կմախք դարձել. արցունքները թրջում էին նրա կնճռտված այտե-

րը, սիրտը մղկտում էր, ու կասկածը, թե ինչով է մեղանչել Տիրոջ դեմ, կրծում էր սիրտը: Սակայն դարձյալ ոչ մի խոսք՝ ընդդեմ Աստծու: «Անքնին են նրա գործերը», — մտածում էր նա՝ անձկությամբ հիշելով նախկին անհոգ կյանքը:

Փորձությունն ավարտվեց: Տեսնելով Հորի անբասիր վարքը՝ Տերը վերականգնեց նրա ունեցվածքը և պարգևելով յոթ որդի և երեք աղջիկ՝ շնորհեց ուրախ-գվարթ կյանք:

«Ունեցե՛ք հավատ մանանելիսի հատիկի չափ», — ասում է Աստվածաշունչը: Հորին փրկեց հավատը:

ՊԼԱՆ

1. Բարեպաշտ Հորը:
2. Սալոմայի չարախոսությունը Հորի հասցեին:
3. Փորձություն:
4. Հորի աներեր հավապը:
5. Աստծո հալոցումը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապատկերակին գրել հեղինակ բառերն ու բառակապակցությունները.

ուղղամիտ, արդար, ապաշխարել, շնորհալի, անբավ հարստություն, անհագուրդ չարություն, կարեվեր, թարախածին պալարներ, վշտալլուկ, անբասիր վարք:

2. Աշակերպներին հանձնարարել շարադրել իրենց դպրոցություններն այս գրույցի շուրջ:

ՀՈՒԴԱ

Ըստ փարբեր աղբյուրների

(դպրոցական-սրբազորական փոխադրություն)

Քաղաքի սակավամարդ նրբանցքներից մեկով քայլում էր մի երիտասարդ՝ ուսերից վար թափվող դարչնագույն զգեստով, ճերմակ մուկերով: Նա հաղթանդամ էր, փոքր-ինչ ուռած ակնակապիճներով ու սփրթնած դեմքով: Երևում է՝ այլալված էր, ջղագրգիռ, տարուբերվում էր հակոտնյա մտքերի օվկիանոսում: Անգամ չնկատեց կողքով անցնող հոռմեացի պարեկներին:

Անցնելով Անտոնիոսի աշտարակների մոտով՝ դուրս եկավ քաղաքից և քայլերն ուղղեց դեպի դիմացը սփռված անդաստանները: Քարից քար ցատկելով՝ անցավ խոխոջուն առվակը և մտավ ամվույտի արտերը: Հարավային մեղմ սյուրը բերում էր մրտենիների և լորենիների բույրը, որի թարմ հոսանքից երիտասարդը հավանաբար սթափվեց: Դարձյալ անդրադարձավ օրվա դեպքերին:

Ընդամենը կես ժամ առաջ քահանայապետերի մոտ էր: Տարել էր՝ նրանց երեսին շարտելու ձեռքերը կրակի պես այրող այն երեսուն արծաթը, որի դիմաց ծախել էր Տիրոջը՝ Հիսուսին:

— Մեղանչեցի, — ասել էր, — որովհետև արդար արյուն թափեցի:

— Մեր հոգը չէ,— պատասխանել էին նողկանքով,— իսկույն ևեթ հեռացիր:

Եվ այժմ, երբ Վարդապետն արդեն չկար, երիտասարդը՝ նույն ինքը Հուդան, ընկել էր հոգին կրծող տվայտանքների մեջ: Հիշում էր նրա քարոզները, թե սիրիիր ընկերոջդ, բարություն արա, որովհետև «ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք»: Իսկ ինքը: Դավաճան, մատնիչ, ծախու՛ հոգի. ահա իր խարանը: Եվ միթե այսուհետ կարող է ապրել աշխարհում, նայել մարդկանց աչքերին:

Ջղջման զգացումը խելդում էր Հուդային, և նա անընդհատ ցնցվում էր՝ ասես դողերոցքի մեջ ընկած: «Մահ, շուտափույթ մահ»,— մոթմոթաց նա՝ արագացնելով քայլերը: Գրեթե վազելով դուրս եկավ արտից և խորդուբորդ ճանապարհով սկսեց բարձրանալ դարավանդը, որի գառիթափ կողի հարթության վրա մի հին ագարակ կար՝ գոտևորված բարձրուղե թխկիներով: Այդտեղ Հուդան կանգ առավ, գրպանից հանեց պարանը և ինքն իր համար կախաղան սարքեց: Բիչ անց նրա հաղթ մարմինը օրորվում էր օդում...

Լսելով կատարվածի մասին՝ մարդիկ գալիս էին ագարակ՝ աչքով տեսնելու կախված մատնիչին: Նայում էին, սակայն ոչ մեկի մտքով չէր անցնում վար բերել դիակը և հողին հանձնել: Մի քանի օր այդպես էլ մնաց, մինչև պատահաբար պարանը կտրվեց, թե՛ ձյուղը կտրվեց, և կախվածի մարմինն ընկավ գետնին:

Այսպես անփառունակ ավարտվեց բոլոր ժամանակների ամենամեծ մատնիչի կյանքը, իսկ նրա անունը դարձավ նենգության, դավի, չարի խորհրդանիշ: Այն վայրը, ուր կախվեց Հուդան, մինչ այժմ էլ կա և կոչվում է Արյան ագարակ:

ՊԼԱՆ

- | | |
|----------------------------------|------------------|
| 1. Մրքերի մեջ խորասուզված մարդը: | 3. Ջղջում: |
| 2. Մարտություն 30 արծաթի դիմաց: | 4. Մարտիչի մահը: |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրապահպարակին գրել հեղուկալ բառերն ու բառակապակցությունները.

դարչնագույն, հաղթանդամ, ակնակապիճ, ջղագրգիռ, դույզն-ինչ, պարեկ, անդաստան, քարից քար ցատկել, առվույտի արտ, անդրադառնալ, նողկանք, խարան, զղջալ, դողերոցք, դարավանդ, գոտևորված, խորհրդանիշ, ծերմակ մույկեր, սիրթնած դեմք, հակոտնյա մտքեր, խոխոջուն առվակ, հարավային մեղմ սյուք, հոգին կրծող տվայտանքներ, խորդուբորդ ճանապարհ, բարձրուղե թխկիներ:

2. Բացապրել հակոտնյա, մույկ բառերի իմաստը:

3. Աշակերպներին հանձնարարել շարադրել իրենց դպրոցությունները դավաճանության և հավապարմության մասին:

Ստեղծագործական հավելումներով փոխադրություն

Ըստ հայկական ժողովրդական հեքիաթի

.....
.....
.....
Գամված ծովափնյա ժայռին՝ աղջիկը աներևակայելի սուսկումով նայում էր ծովին՝ սպասելով, որ ահա ուր որ է կերևա հրեշը և կպատառոտի իրեն: Արցունքները գլոր-գլոր հոսում էին աչքերից:

Եվ Արեգը տեսավ աղջկան, որին ձյունասպիտակ մարմարից կերտված զարմանահրաշ արձանի տեղ կոներ, եթե ծովային զեփյուռը չծածաներ նրա վարսերը, և գեղեցիկ աչքերից արցունքի խոշոր կաթիլներ չհոսեին: Խանդավառությամբ նրան էր նայում պատանի հերոսը, և հանկարծահաս սերը բորբոքվում էր սրտում: Արեգն իսկույն իջավ նրա մոտ ու քնքշությամբ հարցրեց.

— Օ՛, ասսի ինձ, չքնանդ աղջիկ, ո՞ւմ է պատկանում այս երկիրը, ասսի քո անունը: Պատմիր, թե քեզ ինչո՞ւ են ժայռին գամել:

Եվ աղջիկն ասաց.

.....
.....
.....
Դեռ չէր ավարտվել խոսքը, երբ ավեկոծվեց ծովի հորձանուտը, և լեռնակուտակ ալիքների մեջ երևաց հրեշը: Նա ալիքներից բարձր էր պահել գլուխը և բաց արել վիթխարի երախը: Աղջիկը սուսկումից ուժգին ճչաց: Վշտից խելակորույս՝ ծովափ վազեցին նրա ծնողները: Դառնագին լալիս էին նրանք՝ գրկելով իրենց դստերը:

Այդ ժամանակ խոսեց Արեգը.

— Արցունք հեղելու դեռ շատ ժամանակ կունենաք, ձեր դստերը փրկելու համար է, որ քիչ ժամանակ է մնում: Ես Արեգն եմ, չար կախարդին սպանողը: Ինձ կնության տվեք ձեր դստերը, և ես կփրկեմ նրան:

Բերկրանքով համաձայնություն տվին աղջկա ծնողները:

— Պատրաստ եմ ամբողջ թագավորությունս քեզ տալու, միայն թե փրկիր դստերս,— ասաց հայրը:

Մինչ այդ հրեշն արդեն մոտեցել էր: Լայն կրծքով ձեղքելով ալիքները՝ նա սուրում էր դեպի ժայռը: Խելահեղ կատաղությամբ ջրին էր զարկում պոչը, և անհամար ցայտքերը թռչում էին դեպի առափնյա ժայռերի կատարները: Ծովը եռում էր հրեշի գալարապտույտ շարժումներից, բարձրանում էին ալիքները՝ իրենց տակ գոյացնելով խոր անդունդներ:

Թագավորն ու թագուհին զարհուրած փաթաթվել էին իրենց դստերը, իսկ Արեգը...

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Աշակերտներին հանձնարարել լրացնել տեքստը և ընտրել վերնագիր: